



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|---|-----------|
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ | 2 |
| ՊԻՏԻ ԼՍԵՆՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԶԱՆԳԵՐՈՒ ԴՕՂԱՆՁԸ | 2 |
| ՀԱՐՑԱԶՐՈՅՑ | 5 |
| «ԿՐԹԱՆՔԻ ՍԷՐ ԱՐԹՆՅՆՈՂ ՄԹՆՈԼՈՐՏ» | 5 |
| ԿԻՊՐԱՀԱՅ | 8 |
| ԹԷՅԱՍԵՂԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ | 8 |
| ՅՈՒՇ-ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՆԱՀԱՏԱԿ | 10 |
| ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆԻ..... | 10 |
| ՅՕԴՈՒԱԾՆԵՐ | 13 |
| ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ..... | 13 |
| (115-րդ Տարեկիցին Առիթով) | 13 |
| ԹԵՍԱ ՀՈՅՄԱՆ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲՆԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ..... | 15 |
| «ԻՄՐԱՅԷԼ-ԱՏՐՊԷՅՃԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԻՄՆՈՒԱԾ ԵՆ ՆԱԻԹԻ, ԶԷՆՔԻ ԵՒ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹԵԱՆ ՊԻՂԾ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ» | 19 |
| ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ ԵՒ ԱՆՁԻՋԵԼԻՆ. ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՍՓԻՒՌՔԷՆ ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐՄ..... | 22 |
| NEVER AGAIN?..... | 25 |
| ՏԵՍԱԿԷՏ | 27 |
| ԱՇԽԱՐՀԱԶՕՐԸ՝ ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ | 27 |
| ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՂԵՐ | 29 |
| ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐՈՒ ՀԶՕՐԱՑՈՒՄՆ Է..... | 29 |
| ԾՂՕՏԸ, ՈՐ ԿՈՏՐԵՅ ՈՒՂՏԻՆ ՄԷՁՔԸ..... | 33 |
| ՄԵՆՔ՝ ԱՆԺՈՂՈՎՈՒՐԴ ՀՈՂ, ԱՆՀՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ..... | 35 |
| ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄ և ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆ | 37 |
| ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ | 40 |
| ՓՈՒԼՁ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ..... | 40 |
| ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ՝ ԱՆՄԱՀ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ (1874-1915)..... | 45 |
| Է՛Յ, ԱՐՓԻՆԷ, ԱՐՓԻՆԷ..... | 47 |
| ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ | 49 |
| ԼՌՈՒԹԵԱՆ ՊՈՌՉՏՈՒՔԸ | 52 |



Եւ ետ մղեց անարգ թշնամին՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսի յաղթական հերոսամարտերուն մէջ: Փրկուեցաւ Արարատեան երկրի այն մի բուռ հողը՝ որպէս մեր ազգի աւանդական ու սուրբ հայրենիքի անկորնչելի կորիզը: Ծնունդ առաւ Հայաստանի անկախ հանրապետութիւնը՝ Մայիս 28, 1918-ին եւ բարձրացանք պետական ազգի մակարդակին:

Որքան դիպուկ կը հնչեն Երջանկայիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի խօսքերը. «Մի ազգ չի ապրում իր նիւթական բարիքներով, չի ապրում միայն իր մտքի եւ զգացումի արտայայտութիւններով, ինչպէս են արուեստներն ու գրականութիւնը, չի ապրում միայն հանճարեղ անհաստերի գործերով, այլ ապրում է պատուի ու զոհաբերութեան զգացումներով, իր «Մենք»-ի գիտակցութեամբ ու զոհաբերութեան ոգով, իր ազատ եւ հպարտ ապրելու կամքով, մի խօսքով իր բարոյական նկարագրով»:

Սարդարապատի աստեղային պահուն, այս «ՄԵՆՔ»ի գիտակցութիւնը, ոգին, յանձնառութիւնն ու վճռակամութիւնը գտան իրենց գերագոյն եւ վսեմագոյն արտայայտութիւնը:

Յետագային, Սարդարապատի օրինակով, կը հրաշակերտուէր Արցախեան փառապանծ յաղթանակը՝ առիւծասիրտ ազատամարտիկներու սուրբ արիւնով, արձանագրելով մեր նորագոյն պատմութեան ամենէն լուսաւոր էջը...

Այսօր մեր երկիրը կը գտնուի գոյութենական լրջագոյն մարտահրաւերներու դիմաց, Սարդարապատեան օրերուն նման, եւ մենք դարձեալ մինակ ենք: Մենք մինակ էինք 2020 թուականի 44-օրեայ պատերազմին եւ անկէ ետք ալ...: Ոչ մէկ արտաքին ուժ կրցաւ կամ ուզեց կասեցնել ազերիական յարձակումներն ու ռոնձգոյթիւնները: Ոչ մէկ գերտերութիւն թէ կառոյց կրցաւ կեցնել Արցախի շրջափակումը՝ տասը ամիս շարունակ, ոչ ալ դէմ դնել 120,000 հոգիի բռնի տեղահանման իրենց պապենական հինաւուրց հողերէն: Այսինքն անոնց ցեղասպանութեան: Այի եւ հետեւողականօրէն կը շարունակէ բիրտ ուժի կիրառման իր քաղաքականութիւնը մեր երկրին դէմ անյագուրդ ախորժակով, շրջանառութեան մէջ դնելով նոյնիսկ «Արեւմտեան Ատրպէյճան» եզրոյթը: Եւ իր ձեռքը բռնող չկայ: Սա է դառն իրականութիւնը:

Սարդարապատը ներկայիս եւս կը յուշէ որ նոյնպիսի ՄԵՆՔ-ի բարձր գիտակցութեամբ, համահայկական ոգիով, մտածողութեամբ եւ գործելակերպի ճիշդ ռազմավարութեամբ՝ կրնանք յաղթահարել ամէն վտանգ ու խոչընդոտ, ի մասնաւորի թուրք-ազերի համաթուրանական սպառնալիքը՝ իր հայատեաց ու հայաջինջ քաղաքականութեամբ: Ի գուր չէ որ այդ հզօր ու անպարտելի ՄԵՆՔ-ի դէմ այսօր ներքին պատակտում կը հրահրեն օտար ուժեր յօգուտ իրենց շահերուն, նպատակ ունենալով տկարացնել մեր դիմադրողականութիւնը: Սա պէտք է հասկնանք ու ՄԻԱԲԱՆՈՒԻՒՆՔ, ՀԱՄԱԽՄԲՈՒԻՒՆՔ մեր երկրի փրկութեան գաղափարի շուրջ, ինչպէս Սարդարապատի օրերուն:

Սարդարապատեան միացեալ ոգիով, մենք հեռու պիտի մնանք ներքաղաքական ամէն տեսակի խժոժութիւններէն, որոնք կրնան ապակայունացնել մեր երկիրը, ներքին քառս



յառաջացնելով, ինչ որ միայն կրնայ ջուր լեցնել թշնամիին ջրադացին: Մեր ներքին ուժերու ամրապնդման մէջ է մեր ուժը գերազանցօրէն:

Սարդարապատը կը յուշէ որ պարտինք ճիշդ ճանչնալ ու ձեւակերպել ՄԵՆՔ-ի՝ համազգային մեր գերագոյն շահերը, ճիշդ սահմանելով մեր կարմիր գիծերը, ցուցաբերել այդ գերագոյն շահերու կենսագործման ի խնդիր պայքարելու միասնական կամք եւ միասնական, հաւաքական ոյժ, զանոնք ամրապնդելով ազգային ճիշդ դաստիարակութեամբ, սերունդները թրծելով ազգային-քաղաքական համահայկական գիտակցութեամբ եւ միասնական պայքարի աննկուն կամքով:

Մենք ՏԷՐ պիտի կանգնինք ներկայ հայրենիքի մէն մի բուռ հողին: Միաժամանակ, մենք իրաւունք չունինք քելու մեր պատմական իրաւունքները, մենք իրաւունք չունինք քելու Արցախի հարցը, որոնք անբաժանելի մասն են մեր պատմական յիշողութեան, մեր ազգային ինքնութեան: Մենք չենք կրնար գիծ քաշել հազարամեակներու մեր պատմութեան վրայէն, եթէ չենք ուզեր դառնալ արմատախիլ բոյս մը որ կը քշուի աշնան հողմերէն: ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ գերագոյն երաշխիքը, վստահաբար, ՀԶՕՐ, ԻՆՔՆԻՇԻԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՐՏԵԼՆ Է: Հօր՝ իր բանակով, տնտեսութեամբ, դիւանագիտութեամբ, կրթութեամբ, գիտելիքով, բարոյա-հոգեբանական մթնոլորտով, ազգային ոգիով: Սա պիտի ըլլայ մեր ԱՌԱՋՆԱՀԵՐԹ գերխնդիրը:

Սարդարապատը գերագոյն մարմնաւորումն է Չարենցեան անմեռ պատգամին՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո փրկութիւնը միայն քո հաւաքական ոյժի մէջ է»: Ա՛լ դադրելու ենք մեր փրկութիւնը յուսալէ այս կամ այն արտաքին ոյժէն՝ ապաւինողական ստրկամիտ մտայնութեամբ: Մեր հաւաքական, համընդհանուր պայքարի կամքին մէջ փնտռելու ենք մեր միասնական ոյժը, ազգային մեր երազներուն եւ նպատակներուն հասնելու յոյսն ու հաւատքը, մեր փրկութեան ուղին: Եւ ԵՐԲԵՔ պիտի չմոռնանք համաթուրանական վտանգը որ դամոկլեան սուրի նման կախուած է մեր գլխուն վերէն, ինչպէս Սարդարապատեան օրերուն:

Սարդարապատեան «ՄԵՆՔ»-ի, հաւաքական կամքի, խելքի, ոգիի եւ ներուժի աշտարակումով, հաւաքական պայքարով՝ մենք պիտի կարենանք դիմագրաւել մեր դէմ ծառայած մարտահրաւերները, կերտել ՀԶՕՐ հայրենիք, հասնիլ մեր Մեծ Երազին՝ Ազգահաւաքի եւ Հողահաւաքի:

Պիտի լսե՞նք Սարդարապատեան զանգերու մշտահունչ դողանջը՝ ազգային արթնութեան եւ միասնութեան, ազգային փրկութեան հրամայականի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՄԱՅԻՍ 2024

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

«ԿՐԹԱՆՔԻ ՍԷՐ ԱՐԹՆՑՆՈՂ ՄԹՆՈՒՈՐՏ»

ԼԻԼԻԹ ՀԱՆՉԻ ՊՕՂՈՍԵԱՆ

Զրոյց սփիւռքահայ մտաւորական Իշխան Զիֆթճեանի հետ



-Յարգելի պարոն Զիֆթճեան, իբրեւ լեզուաբան, հայագէտ, ինչպէ՛ս կը բնութագրէիք հայերէնը: Աւելին՝ իբրեւ ազգ՝ ինչո՞ւ ենք այսչափ անտարբեր մեր լեզուի նկատմամբ:

-Լեզուաբան չեմ, սակայն հայագիտական բնագաւառներու մէջ ուսումնասիրական աշխատանք կատարած ըլլալով հայերէնին մասին կրնամ հաստատումներ կատարել. «Լեզուն բնութագրելը» իմ գլխէս վեր աշխատանք է: Ինծի համար հայերէնին ամենահետաքրքրական յատկանիշը իր ճկունութիւնն է, եւ ատիկա կու գայ այլազան լեզուներու միջեւ գտնուողի անոր կացութենէն, ինչ որ նաեւ մեր ժողովուրդին ճակատագիրը եղած է բնականաբար: Անոր ներկայիս կը պակսին արդիականացում, մասնագիտական եզրեր, նորաբանութիւններ եւ այլն:

Այո, մենք շատ անտարբեր ենք մեր լեզուին նկատմամբ: Կը խորհիմ, որ զայն պարզապէս չենք զգար ու չենք սիրեր: Լեզուին գովքն ու ջատագովութիւնը, անոր մասին երգն ու երազը սիրոյ սահմաններուն չեն հասած մեր պարագային: Եթէ հասած ըլլային՝ այսօր աշխարհի մէջ զայն գործածող կամ անով հետաքրքրուող մեծ թուով հայրենակիցներ կունենայինք: Ասիկա կը վերաբերի մեր հաւաքական կեցուածքին: Անհատ սիրահարներ միշտ ալ կան անշուշտ: Այս կեցուածքին պատճառը այն է, որ լեզուն զգալու եւ սիրելու միջոցները կը պակսին մեզի: Ընթերցումի, ունկնդրութեան, լեզուամարզանքի յատուկ ժամեր տան, դպրոցին, ակումբին, պարտեզին, փողոցին, հանրակառքին մէջ եւ այլուր կրնային միջոցներ ըլլալ այդ սերը ծաղկեցնելու: Ասոնք չկան, ուրեմն անտարբերութիւնը բնական կեցուածք կը դառնայ: Ի՞նչ կայ զարմանալիք:

-Ըստ ձեզ՝ այսօր Հայաստանի եւ սփիւռքի մէջ ի՞նչ վերաբերմունք կայ Մայրենի լեզուի հանդէպ:

-Ես կը խորհիմ որ լեզուին հանդէպ լուրջ վերաբերմունք չկայ: Լեզուն մաս չի կազմեր հետեւողական, զարգացում ապահովող մարտավարական ծրագրի: Թափուած կամ մսխուած «ճիգեր»ը, եթէ ուզենք անպայման խօսիլ անոնց մասին, չեն անցնիր մակերեսայինէն անդին: Այս հաստատումներս կը վերաբերին թէ՛ Հայաստանի, թէ՛ սփիւռքի: Հայաստանի մէջ պետական հովանաւորութիւնը շատ զգալի չէ, ոչ միայն մայրենիին, այլեւ՝ ընդհանրապէս լեզուներու նկատմամբ: Խրախուսիչ երեւոյթ է «Լեզուի Կոմիտե»ի գոյութիւնը. որքա՞ն կը տեսէ անոր կեանքը եւ ի՞նչ ազդեցութիւն կունենայ՝ այլ հարցեր են: Մենք արդիւնքով զբաղող ժողովուրդ մը չենք: Միայն աշխատանքին սկիզբը կը յայտարարենք: «Հաշուեյարդար» բառը լոկ բառարաններուն մէջ կրնաք գտնել: Անկախութեան երեք տասնամեակը արհամարհելի ժամանակ չէ լեզուներ բերելու հայրենիք մը, որ ունի բազմալեզու սփիւռք: Հայրենադարձներու քանի՞ տոկոսը բերած լեզուն որեւէ ձեւով բանի մը կրնայ ծառայեցնել: Համապատաս-



խան հիմնարկութիւններ կա՞ն, որ օգտուին այդ լեզուներէն: Ներկայի յետպատերազմեան հոգեբը անշուշտ լեռնակուտակ են, բայց ասկէ առաջ ալ, ամենափայլուն օրերուն, եթէ եղած են անանկ օրեր, լեզուն առարկայ չէ դարձած հոգածութեան: Հայերէնին քիչ-շատ ծանօթ որեւէ անձի համար յստակ է, որ հայերէնի մամուլին, առօրեային ու խորհրդարանին մէջ գործածուող լեզուն անփառունակ է: Խորհրդարանին մէջ թրքերէն «ամակ»ը լսելու փոխարէն կարելի չէ՞ «վաստակ»ը լսել: Դեռ չեմ յիշեր ամէն տեղ կրկնուող «նամուս-թասիպ»ը: Թէ՞ փողոցի լեզուն խորհրդարան փոխադրելով արդիական կը դառնանք:

Գալով սփիւռքին, այստեղ լեզուն կ'ապրի դպրոցին ու մամուլին միջոցաւ յատկապէս: Այստեղ ալ վիճակը փայլուն ըլլալէ շատ հեռու է եւ շատ աւելի է քան անմխիթար: Հայաստան ալ, սփիւռք ալ, ինքնամքի բացակայութիւնն է պատճառը այս կացութեան: Սփիւռքի պարագային խմբակային աշխատանքները կրնան արդիւնաւետ աշխատանք կատարել, երբ արդիւնքը յստակ ըլլայ, երբ հայերէն գրող կամ կարդացող աւելնայ: Համացանցի վրայ աջէն ձախ նիւթ տեղափոխելը, հաւանում (like) կամ բթամատ հաւաքելը կացութիւն չեն կրնար փոխել: Անհեռանկար զբաղումը զարգացում չի կրնար յառաջացնել:

-Սփիւռքում հայերէնի ուսուցման հիմնական բեռն ասես վարժարանի ուսուցչի ուսերին է, քանի որ տարեցտարի հայկական ընտանիքներում հայոց լեզուն առօրեայում չի ապրում, հայի զուակը տանը հայերէն չի լսում, չի խօսում (անշուշտ կան բացառութիւններ): Ովքե՞ր պետք է օգնեն այդ ուսուցիչներին, ինչպէ՞ս պետք է նպաստել լեզուի ուսուցմանը այսօրինակ պայմաններում. չէ՞ որ մի ձեռքը ծափ չի տայ, այն էլ սահմանափակ ժամանակահատուածում:

-Շատ ճիշդ նկատած էք, որ ուսուցիչները օժանդակութեան պետք ունին: Կարգ մը գաղութներու մէջ «Ուսումնական Խորհուրդ» կոչուած յանձնախումբեր կան, որոնց պարտականութիւններէն մէկն է նաեւ, կը կարծեմ, հայերէնի ուսուցման բարելաւման աշխատանքը. դասագիրքներու, ուսուցման ձեւի, ուսուցչաց որակաւորման եւ նման հարցեր իրարու կապուած են: Աս հարցերուն հոգը վերցնող անհատներ ու միութիւններ կամ կան, բայց լաւ չեն աշխատիր, կամ ալ չկան ընդհանրապէս: Այսպէս թէ այնպէս՝ հարցերը լուրջի չեն առնուած: Մեր հայերէնի ուսուցիչներն ալ, մեծաւ մասամբ, յարգելով միշտ սակաւաթիւ բացառութիւնները, տգէտ ու պատահական անձեր են, ասոր կամ անոր բարեկամն ու ազգականը, որոնք եկամուտ ապահովելու համար ուսուցիչ դարձած են: Այդպիսի անկարող մարդոց եկամուտ ստանալուն պատճառով մենք սերունդներ կը կորսնցնենք: Նոյնը կարելի է ըսել թերթերու խմբագիրներուն ու աշխատակիցներուն համար, յարգելով, դարձեալ, առաւել սակաւաթիւ բացառութիւնները: Այս անլրջութեան արդիւնքն է կաղացող հայերէնը՝ բանիւ եւ գրով, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Մենք մեր Հայերէն Blogի (<https://hayerenblog.wordpress.com/>) շրջանակին մէջ ունինք բանիմաց ուսուցչուհիներ, որոնց հետ գործակցելով կը փորձենք հայերէնը դասապահու սահմաններէն դուրս բերել: Դպրոցէն դուրս կեանք ունենալու կոչուած է հայերէնը:

-Զարմանալի աշխարհում ենք ապրում, եթէ ստեղծածդ կօշիկ կամ աղամանդէ զարդ չէ, այլ՝ գիր, բանաստեղծութիւն, խօսք, մարդիկ արժէք չեն տալիս: Մասնաւորապէս սփիւռքի դէպքում՝ համայնքային կազմակերպութիւնները կամ բարեգործական հիմնադրամները բաւարար ներդրումներ կատարում են, որ արեւմտահայերէնը ապրի:

-Մենք ցուցադրութիւնը սիրող ժողովուրդ ենք: Ինչ որ երեւելի, շօշափելի, փայլուն է՝ մեզ կը գրաւէ: Արտաքինին փայլքը առանց երբեք նսեմացնելու կուգեմ ընդունիլ, որ կան նաեւ նոյնքան լուսաւոր կէտեր, որոնք աներեւոյթ են: Օրինակ մը տամ. կը յիշեմ Կիպրոսի Մելքո-



նեանին փակման առթիւ արտայայտուած կարծիք մը. «դպրոցը եկամտաբեր հաստատութիւն չէ»: Հարկաւ, եթէ եկամուտը միայն դրամն է՝ չէ՛: Բայց եթէ «եկամուտ»ը հայերէնախօս պատանին, վաղուան հայն է, որ իր պատմութեան ու լեզուին մասին նախազիտելիքը դպրոցէն պիտի ստանայ, ուրեմն դպրոցն ալ եկամտաբեր հաստատութիւն է: Դժուար է հասկնալ, թէ այսպէս մտածող ու գործող մարդիկ ինչպէ՞ս կրնան մեր ազգային կեանքին մէջ պատասխանատու պաշտօններ ստանձնել: Եղեռնին թուրքը մեզ ու մեր հաստատութիւնները ոչնչացուց, ու հիմա այս տիպարները մեր հաստատութիւնները կը լլկեն: Մէկը միւսին գործը չի շարունակեր:

Մփիւռքի մէջ թերեւս տասնամեակ մըն է, որ արեւմտահայերէնի մասին թմբուկ կը զարնուի: Այս «թմբուկ»ը բազմիմաստ է. կը ներառէ խորհրդակցութիւն ու յանձնախումբ, գիտաժողով ու հրատարակութիւն, դրամաշնորհ ու մրցանակ: Վստահ եմ, որ այս ձեռնարկութիւններուն մէկ մասը մեզի օգտակար պաշար կը տրամադրէ, օրինակ՝ թուայնացուած բառարաններ, հատորներ, օգտագործելի աղբիւրներ եւ այլն: Կան նաեւ յումպէտս մսխումած տարածքներ, օրինակ՝ Արեւմտահայերէն Ուիքիփետիան, որ կրնար խզբզանքի դաշտ ըլլալէ շատոնց դադրիլ կամ արեւելահայերէնէ սխալ թարգմանութեանց հանդիսարան չըլլալ: Երեւակայեցէ՛ք, որ մփիւռքի մամուլը, առանց այդտեղի տարրական սխալները սրբագրելու, իմա՝ առանց իսկ կարդալու, հոնկէ նիւթեր կ'արտատայէ, հայաստանցի ուսանողներ անոր «արեւմտահայերէն»ով ուսումնասիրութիւններ կը կատարեն...:

Արեւմտահայերէնի ապրիլն ու վերապրիլը դրամական ներդրումներէն եւ վաճառականական ճամարտակութիւններէն շատ անելի առաջ հեռանկար ունեցող, ճիւղ արձակող, կրթանքի սեր արթնցնող մթնոլորտ ստեղծելուն մէջ կը կայանայ: Այդ մթնոլորտը համացանցն ալ մեզի կրնայ տալ, եթէ մենք օժտուած ենք մեր համոզումը թարգմանելու, ճշմարտելու կարողութեամբ եւ բերք ներկայացնելու շնորհքով:

-Դուք «Հայերէն blog»-ում աշխարհի 4 ծագերից հարիւրաւոր երիտասարդների էք համախմբել արեւմտահայերէնի շուրջ եւ փաստացի ցոյց էք տալիս, որ լեզուի ուսուցումը պէտք է պարզապէս սկսել լեզուն գործածելուց, այդպէս չէ՛: Մայրենի լեզուի միջազգային օրուան ընդառաջ Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայ երիտասարդներին ի՞նչ կարելուր հաղորդագրութիւն կը փոխանցէիք:

-Այո՛, այդպէս է. ի գործ ածել, գործի բերել լեզուն իր բոլոր՝ կարելի ու անկարելի ձեւերով ու մակարդակներով՝ գրական, խօսակցական, փողոցային, բարբառային: Եւ գործը աշխատանք է, ճիգ ու ջանք, նեղութիւն եւ տքնութիւն, խմբագիր-աշխատակից խորհրդակցութիւն ու քննարկում. ոչ՝ խեղկատակ զբաղում, ինչ որ կրնաք գտնել համացանցի վրայ քիչ մը ամէն տեղ: Մեր էջին վրայ պիտի գտնէք տարբեր խմորումներու, տարբեր տարիքի աշխատակիցներու հայերէնը: Անօրեայ դրութեամբ նորութիւն ունինք, որ, ինչպէս յաճախ կը շեշտեմ, սարէն-ձորէն չենք հաւաքած, մեր ածուին մէջ կ'աճին:

«Կարելուր» ըսելիքս հետեւեալն է. ան որ մանանեխի հատիկին չափ փափաք ունի հայերէն գրելու, ինչ տարիքի ու հետաքրքրութեան ալ տէր ըլլայ, կրնայ մեզի դիմել, մեր դիմատետրի էջին միջոցաւ, ամէն օր:

ԱԿՕՍ

ԿԻՊՐԱՀԱՅ

ԹԷՅԱՍԵՂԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ



Կիրակի 12 Մայիս 2024-ին, կ.ե. ժամը 5:00-ին՝ մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ ՀԲԸՄ Նիկոսիոյ Մասնաճիւղի ԹԷՅԱՍԵՂԱՆԸ նուիրուած ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ: Ներկայ էին հոծ թիւով մայրեր, մեծ մայրեր, պարման-պարմանուհիներ եւ մանուկներ: Հանդիսութիւնը գեղեցկօրէն վարեցին վարչականներ Տիկ. Նաթալի Կոստանեան եւ Տիկ. Վարդ Պեքիարեան:



Օրուան բանախօսուհին էր Տիկ. ԱՐԼԷԹ ՇԷՕՉՄԷԼԵԱՆ, որ գեղեցկօրէն արժեւորեց ՍՕՐ եւ ՀԱՅ ՍՕՐ դերակատարումը մեր կեանքէն ներս: Ան ջերմօրէն շնորհաւորեց բոլոր մայրերը եւ ներկաները, ինչպէս նաեւ ձեռնարկը կազմակերպող վարչական մարմնի անդամները, որոնք ոչինչ խնայել էին ձեռնարկի յաջողութեան համար: Իր բովանդակալից խօսքին մէջ, ան յատկապէս շեշտեց ընդհանրապէս մօր եւ զաւակին միջեւ ամէնէն սերտ կապը որ սկիզբ կ'առնէ զաւակին ծնունդէն ալ առաջ եւ կը շարունակուի համակ կեանք մը՝ սիրոյ, կարօտի, նուիրումի եւ գոհողութեան ամէնէն ջերմ կապերով: Անդրադառնալով հայ մօր, յարգելի բանախօսուհին ընդգծեց որ ան յաւելեալ սուրբ պարտականութիւնը ունի իր զաւակին մէջ

սերմանելու սեր հանդէպ ազգին ու հայրենիքին, ազգային ոգի, հաւատարիմ մնալով մեր այն մայրերուն, որոնք Մեծ Եղեռնի ամէնէն սեւ օրերուն, Տէր Զօրի անապատի աւազներու վրայ դրոշմեցին Մեսրոպեան ԱՅԲՈՒԲԵՆԸ, որպէս մեր գոյութեան ու լինելութեան երաշխիք ու գրաւական: Ան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Ինչպէս չհպարտանանք մեր հայ կիներով: Այսօրուան ապրած մեր դժուար օրերուն իսկ, թող օրինակ ըլլան Արցախի եւ հայրենիքի մեր հերոս մայրերը, որոնք կը շարունակեն իրենց սրբազան գործը, դաստիարակելով իրենց զաւակները հայու բարձր ոգիով, որով զինուած՝ անոնք դարձան մեր հերոսական մարտիկները, որոնք կռուեցան, պայքարեցան եւ նահատակուեցան պաշտպանելու համար մեր հայրենիքը: Փա՛ռք եւ պատի՛ւ մեր հայ մայրերուն եւ մեր զինուորներուն: Թող Աստուած լուսաւորէ անոնց նահատակուած հոգիները եւ անթառամ մնայ իրենց յիշատակը: Կեցցէ հայ կիներ եւ հայ մայրը: Օրինակ ըլլանք գալիք սերունդներուն: Դուք ալ, սիրելի մայրե՛ր, ձեր տօնին ուրախ առիթով, ջերմագին կը շնորհաւորեմ բոլոր հայ մայրերը, նոյնպէս իմ հեռաւոր եւ շատ սիրելի մօրս, մաղթելով առողջութիւն, ոյժ եւ կարողութիւն: Վարձքերնիդ կատար, շնորհակալութիւն»:

Իր խօսքը արժանացաւ բոլոր ներկաներուն ամենէն ջերմ գնահատանքին:



Գեղարուեստական բարձրորակ յայտագրին մաս առին Նարեկ վարժարանի Երգչախումբէն աղջիկներ ու տղաք, երգելով Մայրերու նուիրուած երկու երգ, խմբավարութեամբ Տիկ. Լիլիա Խաչատրեանի: Պարերով հանդէս եկաւ «Ռումիոսինի» պարախումբը (Պարուսոյց՝ Տիկ. Կարինէ Կոստանեան), պարմանուհիներու կատարած մի քանի պարերով, արժանանալով ներկաներու ջերմ ընդունելութեան: Ս. Աստուածածինի Պարմանուհիներու Երգչախումբը կատարեց ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ, ղեկավարութեամբ Տիկ. Վիքի Գոյումճեանի, դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Ալիսիա Ոսկանեանի: Սիրուած երգիչ Էտկար Էվոյեան երգեց աւելի քան չորս երգեր,

բացառիկ ոգեշունչ կատարողութեամբ, դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Զառա Բարխուտարեանի:

Թէյասեղանի աւարտին, պատշաճօրէն պատուուեցաւ Տիկ. ՎԱՐԴՈՒՂԻ ԴԱԻԻԹԵԱՆ, տարիներու վրայ երկարող իր Միութենական անխոնջ ու նուիրեալ ծառայութեան համար, որպէս Տիկնանց Օժանդակ Մարմնի Ատենապետուհի եւ «Գալայճեան Հանգստեան Տան» եռանդաշատ Խնամակալ: Այս բարեբաստիկ առիթով, ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը կըշնորհաւորէ Տիկ. Վարդուհի Դաւիթեանը, իրեն մաղթելով քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ: ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ ԲՈՂՈՐԻՆ:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՅՈՒՇ-ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԼՈՒԻՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԼԱՀԱՏԱԿ

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆԻ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կիպրոսի Մարմինը արժանավայել շուքով նշեց ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆԻ յիշատակը՝ յուշ-հանդիսութեամբ մը՝ Շաբաթ, 20 Ապրիլ 2024, երեկոյեան ժամը 6:00-ին, Նիկոսիոյ ՀԲԸՄ ակումբի սրահին մէջ, հովանաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տ. Խորէն արք. Տողրամաճեանի եւ նախագահութեամբ Կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի: Հանդիսութիւնը կը վայելէր ներկայութիւնը Կիպրոսի մէջ Ֆրանսայի դեսպանութեան առաջին խորհրդական Տիկ. Վիրժինի Քորթեվալի եւ Հայաստանի հիւպատոս Տիար

Մարտիրոս Մինասեանի: Յատուկ հրաւերով ներկայ էին Թեմական, Վարչական ժողովի, տարբեր կազմակերպութիւններու եւ մամլոյ ներկայացուցիչներ եւ ազգայիններու հոծ բազմութիւն մը:

Կիպրոսի, Ֆրանսայի, Հայաստանի եւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան քայլերգներու կատարումէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ Օրուան հանդիսավար, ընկ. Վերգինէ Պէքարեան, որ նշեց հանդիսութեան նպատակը, ողջունեց ներկաները եւ բեմ հրաւիրեց Օրուան բանախօս՝ ընկ. Աւետիս Փոշոլեանը:



Յարգելի բանախօսը իր խօսքը սկսաւ դիպուկ բնորոշումով. «Այսօր, հաւաքուած ենք այստեղ, մեծաբեղու համար բացառիկ անհատականութիւն մը, որ իր ինքնամոռաց գործունէութեամբ եւ ապա նահատակութեամբ, դուրս գալով նեղ-հայկական պարունակէն, դարձաւ Ֆրանսայի ազգային հերոս: Գրեթէ անձանօթ անուն մը պիտի մնար ան՝ եթէ ֆրանսական կառավարութիւնը, պարտն ու պատշաճը յարգելով՝ չպանծացներ իր երկրին անձնուրաց մարտիկն ու նահատակը. չխոնարհէր անոր յիշատակին ընդառաջ»: Ապա անդրադարձաւ Միսաք Մանուշեանի կենսագրութեան եւ անոր ծաւալած գործունէութեան հանգամանաւոր կերպով: Արդարեւ, Յետ-Եղեռնեան որբութեան դառն պտուղները ճաշակած, նախ՝ Լիբանանի, յետոյ Ֆրանսայի մէջ, Միսաք Մանուշեան կը ներգրաւուի ֆրանսացի մտաւորականներու շրջանակէն ներս, միաժամանակ մոլի ընթերցանութեամբ կատարագործելով իր մտապաշարը, ընդարձակելով իր մտահորիզոնը:

«1933-ին ՀՕԿ-ի կազմակերպած մէկ պարահանդէսին ան կը հանդիպի իր գոյգին՝ Մելինէին: Մանուշեաններ, ուսընդուս, հետզհետէ, կը ներգրաւուին հասարակական պայքարի մէջ: Միսաք, 1935-ին կը հիմնէ եւ կը խմբագրէ «Չանգու» շաբաթաթերթը, ուր կը



հրապարակել յանդուգն յօդուածներ ի նպաստ բանուորական պայքարին, հաւասարութեան, կը քննադատէ ֆաշիզմն ու դրամատիրութեան անողոք կարգերը: Թերթը լոյս կը տեսնէ մինչեւ 1938 թուական: Ան կը դառնայ ՀՕԿ-ի քարտուղար, կը մասնակցի համագումարներու, աչքի կը գարնէ իր յախուռն ելոյթներով, կը շահի համակրական լայն շրջանակ»:

1939-ին, արդէն նախանշանները կային Երկրորդ Համաշխարհային պատերազմին: Բնականաբար, նացիստական Գերմանիան լայնածիր յարձակում պիտի կատարէր Ֆրանսայի դէմ: 1942-ին, ան կը դառնայ Ֆրանսայի դիմադրական շարժման հայկական ջոկատին ղեկավարը, աւելի ուշ՝ ներգաղթողներէ բաղկացած ընդդատակէայ խումբին հրամանատարը: Ֆաշիստ գերմաններու երկարատեւ մղձաւանջը վերջ կը գտնէր 16 Նոյեմբեր 1943-ին, երբ մատնութեան մը հետեւանքով, ֆաշիստական Կէսթափոն ձեռք ձգեց իր ամենաբաղձացուած որսը՝ Մանուշեանն ու իր խմբակը՝ քսաներկու անդամներէ բաղկացած: Անոնք կը նետուին Ֆրէն բանտին նկուղները՝ կրելով ամենաճանր տառապանքները՝ ծեծ, ծաղր ու ծանակ, հայհոյանք. երեք ամսուան ընթացքին կը հիւծին քսաներեք անվեհեր մարտիկները: ...Կը հերոսանան Մանուշեանն ու իր խումբին քաջերը: Անոնք տարբեր ազգի կը պատկանէին՝ ֆրանսացի, իտալացի, հրեայ, հունգարացի, լեհ, նաեւ ուրիշ հայ մը՝ Արփեն Դաւիթեան: 21 Փետրուար 1944-ին, Փարիզի ռազմական դատարանը, կ'արձակէ անխուսափելի վճիռը՝ գնդակահարութիւն քսաներեք մարտիկներուն, որոնց ցանկը կը գլխաւորէր Միսաք Մանուշեան: Այսպիսով, իր լրումին կը հասնէր ողիսականը այս որբացած հայուն, վրիժառուին, բանաստեղծին, գաղափարի զինուորին, հաւատաւոր հայրենասէրին: Ան կ'իյնար յանուն Ֆրանսայի ազատութեան:

Միսաք Մանուշեանի վերջին կտակը պէտք է համարել բանտախուցէն իր յղած նամակը իր տիկնոջ՝ Մելինէին: Այդ գրուած է իր նահատակութենէն քիչ առաջ: Սա կարելի է սեպել նմուշ մը սիրոյ բուռն արտայայտութեան, միջազգային չափանիշի գեղարուեստական կտոր մը. ան կը գրէ՝ *«Իմ ամենասիրելի որբուկս: Մի քանի ժամէն յետոյ այլեւս պիտի չըլլամ այս աշխարհի վրայ»*, ապա՝ *«Քիչ յետոյ, իմ քսաներկու ընկերներուս հետ, ես կը մեռնիմ քաջութեամբ եւ հոգեկան անողորրութեամբ մարդու մը, որու խիղճը շատ հանգիստ է, որովհետեւ ես անձամբ ոչ ոքի վնաս չեմ հասցուցած: Այսօր արեւոտ օր է. արեւին եւ իմ այնքան սիրած գեղեցիկ բնութեանը նայելով է, որ մնաք բարով կ'ըսեմ կեանքին եւ ձեզ բոլորիդ»* եւ կ'եզրակացնէ՝ *«Չատ ուժով կը համբուրեմ քեզ, կրծքիս վրայ կը սեղմեմ բոլորիդ: Մնաք բարով: Քո բարեկամ, քո ընկեր, քո ամուսին»*: Ան Մելինէին կը յանձնարարէ՝ վերամուսնանալ, զուակ ունենալ իր պատուին եւ երթալ ու հաստատուիլ Խ. Հայաստան: Ի հարկէ, Մելինէն չամուսնացաւ: Բայց գնաց Հայաստան, ապրեցաւ հոն եւ աւելի ուշ վերադարձաւ Ֆրանսա: Հետաքրքրական է յիշել, որ երբ Փարիզի մէջ տեղի կ'ունենար 24 Սեպտեմբեր 1981-ին, Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակին (ԱՄԱԼԱ) կազմակերպած Վան գործողութեան մարտախումբին դատավարութիւնը, Մելինէ Մանուշեան դատարան կը ներկայանար որպէս ականատես մը Հայոց Ցեղասպանութեան, վերապրող մը թրքական եաթաղանէն:

Յարգելի բանախօսը իր բովանդակալից խօսքը եզրակացուց երկու կարեւոր հարցադրումներով.-



-Առաջին, արդեօ՞ք Մանուշեան մարտնչեցաւ միայն Ֆրանսայի ազատութեան համար: Այն Ֆրանսային՝ որուն քաղաքականութեան հետեւանքով Կիլիկիան դրուեցաւ զոհասեղանին՝ 1920-ին, Կիլիկիան կորսնցուցինք ֆրանսական խոստումներէն ետք՝ 1922-ին, որուն զոհերուն զաւակներն ենք մենք բոլորս: Այն Ֆրանսային, որ 1938-ին Իսկէնտերունի նահանգը, Սուրիայէն պոկելով, յանձնեց Թուրքիոյ, որուն պատճառով դատարկուեցան եւ հայաթափուեցան Մուսա Լերան հայաբնակ գիւղերը, Իսկէնտերունի, Անտիոքի, Քըրքիսանի, Պէլլանի հայաշատ վայրերը: Ո՛չ, Մանուշեան մարտնչեցաւ ֆաշիզմին դէմ, քանզի եթէ ֆաշիզմը յաջողէր նուաճել Կովկասը՝ լրջօրէն պիտի սպառնար Խ. Հայաստանին գոյութեան: Մանուշեան կռուեցաւ յանուն հեռաւոր հայրենիքին անվտանգութեան: Նաեւ՝ ֆաշիզմին դէմ պայքարող ֆրանսահայ, ամերիկահայ կամ Խորհրդային Միութեան հայ զինուորները խորքին մէջ կը կռուէին վրիժառութեան ոգիով առլցուն, քանզի քաջ գիտէին թէ Հայկական Յեղասպանութեան ետին կար Գերմանիան: Իթթիհատ կուսակցութիւնը ունէր նեցուկն ու օրհնութիւնը գերմանական զօրքին՝ երբ կը կոտորէր հայութիւնը սանձարձակօրէն: Աւելին՝ գերմանացի զինուորներ աշխուժօրէն մասնակցեցան տարբեր վայրերու հայաջնջման՝ ինչպէս Ուրֆա, Վան եւ այլուր:

Երկրորդ՝ Մանուշեան քէն չպահեց երկդիմի եւ խոստումնադրուծ Ֆրանսայի հանդէպ: Ան երախտագէտ էր այդ երկրին՝ որովհետեւ բնակիչն էր անոր, գտած էր ապաստան ու երդիք: Արդարեւ, հայը ուր ալ գտնուի, որպէս շնորհակալութեան դրսեւորում, պարտաւոր է ապրիլ տուեալ երկրին ցաւերով ու պայքարով: Այս առթիւ, յանուն Հնչակեան Կուսակցութեան Կիպրոսի միաւորին, մեր երախտագիտութեան խօսքը պարտինք ուղղել կիպրական բարեխնամ, հայրախնամ եւ հայասէր կառավարութեան ու ժողովուրդին: Մենք, Կիպրոսի հանդէպ ունինք ամենաջերմ զգացումները, քանզի այս ասպնջական հողին վրայ, շնորհիւ Կիպրոսի լայնսիրտ ու հոգատար պետութեան կրնանք պահել ու պահպանել դպրոց, լեզու, մշակոյթ, եկեղեցի եւ կենսունակ համայնք: Հետեւաբար՝ բիւր ողջոյններ Կիպրոսի եղբայրական ժողովուրդին: Թող միշտ պինդ ու անքակտելի մնայ հայ-կիպրական եղբայրութիւնն ու անդաւաճան բարեկամութիւնը:

Յարգանք՝ Միսաք Մանուշեանի անթառամ յիշատակին:
Փա՛ռք ազատութեան համար զոհուած հայ, կիպրացի, ֆրանսացի բոլոր նահատակներուն:

Այնուհետեւ, Միսաք Մանուշեանի հերոսական կեանքին նուիրուած տեսաերիզի ցուցադրութենէն ետք, յայտագիրը ծաղկեցուցին Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ պարմանուհիներու եւ յետոյ կրտսերներու Երզնասխումբերը, կատարելով ազգային հայրենասիրական երգեր, խմբավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի, արժանանալով բոլորին ջերմ ընդունելութեան:

Կարդացուեցաւ հատուած մը Մ. Մանուշեանի՝ Մելինէին ուղղուած վերջին նամակէն, ընկերուհի Նարկիզ Կետիկեան-Պէքարեանի կողմէ, իսկ վերջինիս թոռնիկը՝ Ստեփան Տօնիկեան, ֆրանսական առողջանութեամբ կարդաց ֆրանսացի մեծ բանատեղծ Լուի Արակոնի քերթուածը նուիրուած Մանուշեանի խումբին:

Հանդիսութեան յաւելեալ փայլ տուին Սոփրանօ Տիկ. Սոնա Գարգալոյեանի կատարած զոյգ երգերը՝ Կոմիտասի «Հով արէք սարեր ջան» եւ Ֆորէի «Après une Reve», դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Լիլիա Խաչատրեանի:

Յայտագրի աւարտին, խօսք տրուեցաւ Տիկ. Վիրժինի Քորթեվալի, որ յուզումով անդրադարձաւ Մանուշեանի յիշատակին, անոր տեղին ու դերին Ֆրանսայի մէջ յանուն ազատութեան եւ արժէքներու համար մղուած պայքարին, անդրադարձաւ անոր եւ իր 22



ընկերներուն պանթեոնականացումին՝ Տրանսայի մեծերուն քով, որպիսիք են՝ Ժան Ժազ Ռուսօ, Վիքթոր Հիլօ եւ այլք:

Հուսկ, Գերաշնորհ Սրբազան Հայրը եզրափակեց հանդիսութիւնը, կարեւորելով միասնականութեան անհրաժեշտութիւնը հայ կեանքէն ներս, եւ արժանի դառնալու յիշատակին Մանուշեանի եւ մեր բիրաւոր նահատակներուն, որոնք ինկան, որպէսզի մենք ԱՊՐԻՆՔ:

Պահպանիչով վերջ գտաւ այս սքանչելի հանդիսութիւնը, որ դարձաւ իսկական փառապսակ մը ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆԻ անմոռաց յիշատակին:

Ե.Գ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

(115-րդ Տարեկիցին Առիթով)

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ



Ընթացիկ տարուան ապրիլ ամիսը 115-րդ տարեդարձն է Ատանայի կոտորածին, որուն զոհ զացին շուրջ 30.000 հայեր: 1894-1996 թուականներու համիտեան ջարդերէն ետք, ասիկա երկրորդ լայնատարած համազգային աղէտն էր, որ տեղի կ'ունենար 1909-ի ապրիլ ամսուն: Կոտորածը

կազմակերպուած էր սուլթան Համիտի (1876-1908) համակիր Ահրար կուսակցութեան եւ այլ մոլեռանդ իսլամ յետադիմական տարրերու կողմէ, որոնք հակառակորդ էին իթթիհասական Երիտասարդ թուրքերուն:

Երիտասարդ թուրքերը 10 յունիս 1908-ին տապալեցին սուլթան Համիտի կառավարութիւնը եւ իշխանութեան գլուխը անցան ու «Ազատութիւն եւ հաւասարութիւն» լոզունգներով ոզեւորեցին ամբոխները: Թուրք եւ հայ ու այլ փոքրամասնութիւններ զիրար համբուրեցին եղբայրութեան անունով: Սուլթան Համիտի համակիրները՝ զայրացած հայ եւ թուրք ժողովուրդներու սերտ կապերէն, ուզեցին վրէժ առնել՝ գրգռելով թուրք մոլեռանդ մարդիկ, որպէսզի դաս մը սորվեցնեն Համիտի հակառակորդներուն: Կոտորածի նախորդ օրերուն արդէն պրկուած մթնոլորտ մը կը տիրէր, եւ սկսած էին նաեւ հակահայ քարոզութիւններ:

Իթթիհաստ վէ թերաքը՝ Երիտասարդ թուրքերու վարչակազմը, թէեւ առերեւոյթ ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն կը քարոզէր, բայց, ըստ էութեան,



փոքրամասնութիւններու հակառակ էր: Երիտասարդ թուրքերու ծածուկ նպատակն էր ձուլել ոչ իսլամ տարրերը եւ համաթրքական հսկայ կայսրութիւն մը ստեղծել: Այդ պատճառով էր, որ երբ 1909-ի ապրիլ 1-ին թուրքերու առաջին յարձակումը սկսաւ Ատանայի հայկական թաղերուն վրայ, թուրք ոստիկանութիւնը միացաւ խուժանին եւ մասնակցեցաւ ջարդերուն: Անտարակոյս իթթիհատականներ լռելեայն իրենց հաւանութիւնը տուած էին Ատանայի կոտորածին: Երեւոյթները փրկելու համար էր, որ անոնք դատապարտեցին պատահած աղէտը: Երբ հայ եկեղեցական եւ աշխարհական ղեկավարներ իրենց ցատումը յայտնեցին եւ իրենց բողոքի ձայնը բարձրացուցին, անոնք ուրացան իրենց ջարդարարի դերը եւ համաձայնեցան քննիչ յանձնախումբ մը նշանակել՝ ատենապետութեամբ երեսփոխան Յակոբ Պապիկեանի: Պապիկեանի տեղեկագիրը լոյս չտեսաւ, քանի որ տեղեկագիր պատրաստող հայ երեսփոխանը առաւօտ մը իր ննջարանին մէջ խորհրդաւոր պայմաններուն մէջ խեղդամահ գտան:

Անկասկած Ատանայի կոտորածը նախափորձը դարձաւ Երիտասարդ թուրքերու համաթուրանական քաղաքականութեան: Քանի մը տարի ետք Հայոց ցեղասպանութիւնը, լրումը պիտի ըլլար իրենց կանխամտածած ցեղասպանութեան, որով կը յուսային լուծել Հայկական հարցը:

Դժբախտաբար մեր եկեղեցական եւ աշխարհական ղեկավարութեան մեծամասնութիւնը միամտաբար խաբուեցան կեղծաւոր եւ նենգամիտ իթթիհատական Երիտասարդ թուրքերէն եւ չկրցան նախատեսել վերահաս վտանգը:

Երբ թուրք խուժանը հայկական թաղերու վրայ յարձակում գործեց 1909-ի ապրիլ 1 թուականին, հայերը ինքնապաշտպանութեան դիմեցին: Այդ ատեն Երիտասարդ թուրքերու կառավարութիւնը անգլիական հիւպատոսին միջնորդութիւնը խնդրեց, որպէսզի խռովութիւններուն վերջ դնելու համար, հայերը իրենց զենքերը յանձնեն կառավարութեան: Հիւպատոսը իր տխուր առաքելութիւնը կատարեց, եւ հայեր յանձնեցին իրենց զենքերը:

Թրքական ջարդերը շարունակուեցան եւ Երիտասարդ թուրքերու կառավարութիւնը գործնապէս չմիջամտեց: Արդիւնքը ահաւոր եւ եղերական եղաւ: Ատանայի նահանգին մէջ տարբեր քաղաքներու, գիւղերու եւ ւաններու մէջ մօտաւորապէս 30.000 անմեղ հայեր զոհ գացին: Եկեղեցիներ, դպրոցներ, բարեսիրական եւ մշակութային կեդրոններ քանդուեցան: Բազմաթիւ որբեր եւ որբեւայրիներ անպատասպար մնացին:



Դժբախտաբար Երիտասարդ թուրքեր չընդունեցին իրենց դերակատարութիւնը Ատանայի կոտորածին մէջ: Այդ եղեռնը նախադուր եղաւ քանի մը տարի ետք տեղի ունեցող Հայոց ցեղասպանութեան:

Ապրիլ 1909-էն ապրիլ 2024-ը՝ հարիւր տասնհինգ տարի... Այսօր, 115 տարի ետք, մենք իբրեւ ազգ՝ կանք ու կը մնանք, զոհի հոգեբանութենէն դուրս ելած՝ վերածնած ենք: Ատանայի կոտորածին 115-ամեակը վերանորոգման տարեդարձ մըն է՝ մեր կորսուած իրաւունքներու պահանջատիրութեան, մեր վերանորոգման, մեր կենսունակութեան եւ վերակերտման վճռակամութիւնը վկայող հանգրուան մը: Միանգամայն սոյն տարեդարձը անցեալէն դասեր սորվելու դիպուկ առիթ մըն է, որ՝ մեր ազգային կենսական հարցերու մէջ միամիտ եւ պատրանախաբ չըլլանք, այլ միշտ իրատես ու հեռատես, շրջահայեաց եւ իմաստուն ըլլանք. Օտարներու օգնութիւնը հայցենք, բայց օտարներէն փրկութիւն չսպասենք, որովհետեւ վերջին հաշուով մեր սեփական միջոցներով միայն կրնանք տիրանալ մեր իրաւունքներուն: Ուրեմն անհրաժեշտ է միաբան ու միակամ ըլլալ: Բաւարար չէ միասնականութեան մասին տարին օր մը կամ հազուադէպ ոգեկոչական հանդիսութեան առիթներով միայն մտածել, այլ հարկ է զայն մեր առօրեային հետ շաղկապել, միասնական ճակատով թիկունք կանգնիլ Հայ դատին:

24/4/2024

ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲՆԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

9/4/2024

Ժիրայր Քոչարեան



Գրախօսութիւն

Թեսաա Հոֆման, Քրիստոնեայ բնիկ ժողովուրդների ցեղասպանությունը Օսմանեան տերութեան մէջ.

Հայեր, յոյներ, սիրիացի-

արամեացիներ/ասորիներ/քաղդեացիներ: Մի ընդարձակ

վաւերագրական բաղկացած 3 մասից եւ ուսուցման 8 միաւորից, Վայլերսվիլի-Մեթերնիխ, «Հազէ եւ Քէօհլեր» հրատարակչութիւն, 2024, 381 էջ, 110 սեւ- ճերմակ

պատկերներով: ISBN 9783775814300

պատկերներով: ISBN 9783775814300

Rezension zu: Tessa Hoffmann, Der Genozid an den indigenen Christen des Osmanischen Reiches: Armenier, Griechen, Syro-Aramäer/Assyrer/Chaldäer; eine ausführliche Dokumentation mit drei

Modulen von je acht Unterrichtseinheiten. Weilerswist-Metternich: Verlag von Hase & Köhler, 2024. 381 S., 110 s/w Abbildungen. ISBN 9783775814300



Որպէս հայագէտ, ցեղասպանագէտ եւ իրաւապաշտպան Թեսսա Հոֆմանը յայտնի է Գերմանիայի սահմաններից էլ դուրս: 45 տարիների ընթացքում նա հրատարակել է բազում գրականութիւն՝ որպէս հեղինակ եւ խմբագիր հանդէս գալով ինը երկրներում: Ցեղասպանութեան ուսումնասիրութեան մէջ նրա ուշադրութեան կենտրոնում են օսմանեան տիրապետութեան վերջին տասնամեակներում Միութիւն եւ առաջադիմութիւն կոմիտէի եւ քեմալական վարչակարգերի՝ բնիկ քրիստոնեաների դէմ կատարած յանցագործութիւնները: Զոհուել են մօտ վեց միլիոն քրիստոնեաներից երեք միլիոնը՝ հայեր, յոյն ուղղափառներ եւ արամեացի քրիստոնեաներ, իսկ երեք միլիոնը՝ բռնի

տեղահանուել: Թուրքական ազգային պետութեան «հիմնադիր յանցագործների» իրականացրած ոճրագործութիւնները, ինչպէս ժամանակին անուանել է Թաներ Աքչամը, «Շոահի» հետ միասին դարձել են Ռաֆայէլ Լեմբինի ցեղասպանութիւնը սահմանելու որոշիչ եզրոյթ եւ, հետեւաբար, հանդիսանում են ՄԱԿ-ի Ցեղասպանութեան կոնվենցիայի հիմքը: Այնտեղ թուարկուած հինգ քրէական յանցագործութիւններից, որոնցից իւրաքանչիւրը համարում է ցեղասպանութիւն, չորսը իրականացուել են հայերի նկատմամբ Օսմանյան տերութեան մէջ եւ Իրանի հիւսիս-արեւմուտքում, որը 1914-1918 թուականներին գրաւել էին օսմանեան զօրքերը:

Թեսսա Հոֆմանը իր հրապարակումներում չի սահմանափակուում հայերի ճակատագրով. իրականում, նա առաջին գիտնականներից մէկն է միջազգայնօրէն, որ հետապնդում է ներառական կամ համեմատական մօտեցում: Ի թիւս այլ աշխատանքների, նա յոյն ուղղափառ քրիստոնեաների ցեղասպանութեան անգլերէն առաջին գիտական հրապարակման համահեղինակն է: Այս անթոլոգիան լոյս է տեսել 2011 թուականին՝ «Օսմանցի յոյների ցեղասպանութիւնը. Ուսումնասիրութիւններ Փոքր Ասիայի քրիստոնեաների բնաջնջման՝ պետութեան հովանաւորած արշաւի եւ դրա հետեւանքների մասին. Պատմութիւն, օրէնք, յիշողութիւն» վերնագրով:

Թեսսա Հոֆմանի վերջին գիրքը՝ «Քրիստոնեայ բնիկ ժողովուրդների ցեղասպանութիւնը Օսմանեան տերութեան մէջ. Հայեր, յոյներ, սիրիացի-արամեացիներ/ասորիներ/քաղղեացիներ», շարունակում է այս մօտեցումը: 381 էջանոց աշխատութիւնը ուղղուած է ընթերցողների երկու խմբի. մի կողմից՝ այն ծառայում է որպէս



մանրամասն փաստաթուղթ եւ ընդհանուր ներածութիւն օսմանցիների գործադրած
ցեղասպանութեան ընթացքի եւ բաղադրիչների մասին՝ տնտեսական բոլորտներ եւ
բռնաճնշումներ, արտաքսումներ, էլիսիդներ (բնաջնջումներ), մտաւորական ու հոգեւոր
ղեկավարութեան տեղահանումներ, քրիստոնեայ երեխաների յափշտակում եւ ոչնչացում,
առեւանգուած երեխաների եւ կանանց բռնի իսլամացում, գենդերային մօտեցում
(չափահաս տղամարդկանց կոտորած, կանանց, երեխաների եւ տարեցների արտաքսում):
Ներածութիւնում բացատրում է ցեղասպանութիւն եզրոյթը եւ ակնարկում են Օսմանեան
տէրութեան բնորոշ առանձնայատկութիւնները, մասնաւորապէս՝ կրօնների իրաւական
անհաւասար կարգավիճակը: Միւս կողմից, իր երկրորդ մասում այն պարունակում է երեք
մոդուլ՝ ընդգծելով յատկապէս դպրոցներում կամ մեծահասակների կրթութեան մէջ հայերի,
յոյների եւ արամեացիների բնաջնջման առանձնայատկութիւնները, ինչպէս նաեւ
նմանութիւնները: Իւրաքանչիւր մոդուլ բաղկացած է ինը ուսուցման միաւորից՝ նոյն
հարցերի վերաբերեալ: Ցեղասպանութեան նկարագրութեան ժամանակ Թեսսա Հոֆման ոչ
միայն անդրադառնում է ինքնապաշտպանութեան ինդրին, այլեւ ներկայացնում է երեք
էթնիկ խմբերի ներկայ վիճակը: Հայերի նկատմամբ կրկնուող ցեղասպանութեան մասին
գրելիս, հեղինակը կիսում է բազմաթիւ իրաւապաշտպանների տեսակետը, որ 2022/3-ին
Արցախի շրջափակումը եւ տեղահանութիւնը ցեղասպանութիւն էր: Պատմական
լուսանկարները, թեմատիկ քարտեզները, ակնատեսների եւ վերապրածների զեկոյցները
եւ այլ փաստաթղթեր ծառայում են որպէս ուսուցողական նիւթ:

Յոյն ուղղափառ քրիստոնեաները, յատկապէս Օսմանեան տէրութեան Էդիրնէի եւ Այդընի
(Զմիւռնիա) նահանգներում, թում է, թէ աւելի քան տասը տարի տեւած ցեղասպանութեան
առաջին եւ վերջին գոհերն են, մինչդեռ օսմանեան քաղաքացիութիւն ունեցող 2,5 միլիոն
հայերից 1,5 միլիոնը գոհուել է ընդամենը 19 ամիսների ընթացքում՝ նրանց ամբողջ երկրում
բնաջնջելու նպատակով: Այս տարբերութիւնը Թեսսա Հոֆմանը ըստ էութեան բացատրում է
ի սկզբանէ չէզոք Յունաստանի՝ որպէս օսմանեան յոյների հաւանական պաշտպան
պետութեան դերով, մինչդեռ հայերի դէպքում չկար պաշտպանող պետութիւն:
Երիտթուրքերը կարողացան արագ եւ որոշակի ոչնչացնել նրանց՝ առանց դրսի որեւէ
էական «միջամտութեան»:

Ի՞նչ դեր խաղաց Գերմանական կայսրութիւնը, որը ռազմական դաշնակիցն էր Օսմանեան
տէրութեան 1913 թուականից: Նա 1914 թուականին Օսմանեան տէրութեանը միտումնաւոր
մղեց պատերազմի Ռուսաստանի դէմ եւ մեծ մասամբ անգործունեայ հետեւում էր, թէ
ինչպէս իր թուրք դաշնակիցները նուաստացնում, խոշտանգում, կոտորում եւ սովամահ էին
անում իրենց քրիստոնեայ քաղաքացիներին: Երեք յօդուածներ վերաբերում են
Գերմանիայի դերին այն ժամանակ եւ ներկայիս: Փոստդամի Լեփսիուսհաուզի տնօրէն Ռոյ



Քննարկն օգտագործում է գերմանացի բողոքական աստուածաբան Յոհաննէս Լեփսիուսի կենսագրութիւնը՝ նկարագրելու նրա դերը որպէս հայերի պաշտպանի եւ նրանց բնաջնջման փաստագրողի: SKD (Յեղասպանութեան դէմ ընկերակցութիւն e.V., Մայնի Ֆրանկֆուրտ) եւ Akebi e.V. (Բեռլին) ընկերակցութիւնները զբաղուում են այսօրուայ թուրք հասարակութեան եւ թուրքական ծագում ունեցող սփիւռքում պատմական մեղքի մշակմամբ: Իր ներդրման մէջ SKD-ն նաեւ նկարագրում է 2021 թուականին մահացած Ալի Էրթեմի նախագահած ակումբի մեծ ձեռքբերումը: 2000 թ. ապրիլին Թեսսա Հոֆմանի եւ այս տողերի հեղինակի հետ նրանք հայերի եւ քրիստոնէայ այլ գոհերի խմբերի ցեղասպանութիւնը «ճանաչելու» կամ դատապարտելու, թուրքական պատմութեան վերագնահատման եւ պատմական պատասխանատուութեան ստանձնման համար խնդրագիր ներկայացրեցին Գերմանիայի Բունդեսթագին: Նման դրական օրինակները յատկապէս անհրաժեշտ են Գերմանիայում, որտեղ գոյութիւն ունի թուրքական ծագմամբ ամենամեծ օտարերկրեայ համայնքը: Ինչպէս 2015 թուականին նշել է մանկավարժական գիտութիւնների մասնագէտ, գերմանացի Մարտին Շտուպերիխը, թուրքական ծագում ունեցող ծնողները, նրանց ակումբներն ու միութիւնները հակառակում են օսմանցիների իրագործած ցեղասպանութեան մասին դպրոցական դասաւանդման: Ըստ Շտուպերիխի, հենց այս ընդդիմութիւնն է խանգարում գերմանացի ուսուցիչներին դպրոցի դասերում անդրադառնալու այդ թեմային: Այդ իսկ պատճառով ուսուցիչները մինչ այժմ սահմանափակուել են ցեղասպանութեան թեմայի հետ Շոահի օրինակով զբաղուելով, նոյնիսկ այն դաշնային նահանգներում, որտեղ ուսումնական ծրագրերը հնարաւորութիւն են տալիս ուսուցանել ցեղասպանութեան այլ օրինակներ: Ներկայումս դա այդպէս է Գերմանիայի 16 դաշնային նահանգների մօտ մէկ երրորդում:

Այնուամենայնիւ, քանի դեռ Շոահից բացի ցեղասպանութեան այլ օրինակների մասին տեղեկատուութիւնը պարտադիր չէ, Թեսսա Հոֆմանը կարծում է, թէ բարելաւման քիչ հեռանկար կայ: Հետեւաբար, իրաւապաշտպանը կոչ է անում պարտադիր տեղեկատուութիւն տրամադրել երեք ցեղասպանութիւնների մասին, որոնք սերտօրէն կապուած են Գերմանիայի պատմութեան եւ մեղքի մասնակցութեան հետ: Դրանք են՝ տասնեակ հազարաւորների գերմանական գաղութային ցեղասպանութիւնը ներկայի Նամիբիայի տարածքում (1904-1908 թթ.), Գերմանիայի դաշնակից Օսմանեան տէրութեան մէջ թուրքերի գործադրած ցեղասպանութիւնը Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, պատերազմի ժամանակաշրջանում եւ յետոյ, ու Եւրոպայի հրեաների եւ սինտիների (գնչուների) ցեղասպանութիւնը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Հայոց ցեղասպանութեան Գերմանիայի Բունդեսթագի երկրորդ «ճանաչման» բանաձեւը (2016 թ.) դաշնային կառավարութեանը պարտաւորեցնում է երաշխաւորել, որ օսմանցիների

գործադրած ցեղասպանութեան օրինակը դասաւանդուի երկրի դպրոցներում: Մինչ այժմ այս ուղղութեամբ քիչ բան է տեղի ունեցել: Թեսսա Հոֆմանի համապարփակ, ձեռնհաս եւ ընդհանուր առմամբ հասկանալի ներկայացման շնորհիւ, այժմ բարելաւման հեռանկար կայ: Համապատասխան ուսումնական նիւթերի բացակայութիւնն այսուհետ այլեւս պէտք չէ խոչընդոտ հանդիսանայ: Բացի այդ, հեղինակը իր աշխատանքի հետ համատեղում է յոյսը, թէ պատմական մեղքի հետ հաշտուելը կը նպաստի ապագայ յանցագործութիւնների կանխարգելմանը եւ միջազգային ըմբռնմանը. «Միտողականութիւնը խանգարում է նաեւ եղեռնի վերքի ապաքինմանը: Սրան գումարում է ԶԼՄ-ներում ատելութեան խօսքը: Ըստ Media Watch-ի (2014) ուսումնասիրութեան՝ հայերը թուրքական ԶԼՄ-ների լուսաբանման մէջ ատելութեան կամ խտրական խօսքի ամենաշատ տուժած խումբն են՝ 75 դրուագով յաջորդում են հրեաները (66 դրուագ), քրիստոնէաներն ընդհանուր առմամբ (45) եւ Թուրքիայի յոյները (21)»:

«ԻՍՐԱՅԷԼ-ԱՏՐՊԵՅՃԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԻՄՆՈՒԱԾ ԵՆ ՆԱԽԹԻ, ԶԷՆՔԻ ԵՒ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ ՊԻՂԾ ԵՐՐՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ»



Իսրայէլական «Հաարեց» (Haaretz) թերթը 11 Ապրիլին հրապարակած է բացայայտող յօդուած մը Ատրպէյճանի եւ Իսրայէլի միջեւ բարձր մակարդակի լայն կապերու մասին՝ «Ինչպէ՛ս Ատրպէյճանի հետ ռազմավարական յարաբերութիւնները դարձած են Լիպըրմէններու ընտանիքին առեւտուրը» վերնագիրով: Յօդուածը գրած է հետաքննող լրագրող Կուր Մըկիտօ:

Էլիկտըր Լիպըրմէն Իսրայէլի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեայ էր, որ բազմիցս այցելած է Պաքու, աւելի շատ, քան ռեւէ ուրիշ իսրայէլցի քաղաքական գործիչ, ամէն անգամ հանդիպելով նախագահ Իլիամ Ալիեւի

եւ ատրպէյճանցի այլ բարձրաստիճան պաշտօնեաներու հետ: Ան երկու անգամ վարած է Իսրայէլի փոխ վարչապետի պաշտօն եւ յաջորդաբար դարձած՝ վեց տարբեր նախարարութիւններու նախարար. Իսրայէլի ազգային ենթակառուցումներու, երթեւեկի, ռազմավարական գործերու, արտաքին գործերու (երկու անգամ), պաշտպանութեան եւ դրամական:

Լիպըրմէն իսրայէլցի միակ պաշտօնեան չէր, որ այցելած է Ատրպէյճան: Պաքու այցելած են նաեւ Իսրայէլի պաշտպանութեան նախարարներ Պենի Կանց եւ Եով Կալանթ, ինչպէս նաեւ վարչապետ Պենիամին Նեթանեահուն՝ 2016ին եւ նախագահ Այզէք Հերցոկ՝ 2023ին:

Մըկիտօ յայտարարած է, որ «Իսրայէլ-Ատրպէյճան յարաբերութիւնները հիմնուած են նաւթի, զէնքի եւ հետախուզութեան պիղծ երրորդութեան վրայ: Իսրայէլ նաւթ կը գնէ Ատրպէյճանէն (Իսրայէլի հում նաւթի մօտաւորապէս կէսը հոնկէ կու գայ) եւ կը վաճառուի զինուորական յառաջադէմ արհեստագիտութիւն: Փոխարէնը, ըստ տեղեկութիւններու,



Ատրպէյճան անոր հնարաւորութիւն կու տայ մուտք գործելու Իսրայէլի թիւ մէկ հակառակորդին՝ Իրանի հետ իր ցամաքային եւ ծովային սահմանը»:

Ատրպէյճան յաղթեց 2020 եւ 2023ի արցախեան պատերազմներուն՝ «շնորհիւ Իսրայէլի կողմէ մատակարարուող խաղի կանոնները փոխող ոչ փոքրաթիւ սպառազինութեան», ներառեալ իսրայէլեան Hermes եւ Harop անօդաչու թռչող սարքերը եւ միլիտար տողարներով գնուած ժամանակակից այլ զենքեր: Ատրպէյճան այդ անօդաչու սարքերէն քանի մը հատը գնած էր, երբ Լիպըրմէն պաշտպանութեան նախարարն էր»:

2012ին Պաքու կատարած այցի ժամանակ, Լիպըրմէնի հարցուցած են Foreign Policy ամսագիրի յօդուածին մասին, ուր մէջբերուած է ԱՄՆ կառավարութեան բարձրաստիճան պաշտօնէային խօսքերը. «Իսրայէլցիները գնած են օդակայան, եւ օդակայանը կը կոչուի Ատրպէյճան: Նշուած են նախկին քանի մը խորհրդային ռազմաօդային խարխախներու անուններ, որոնք, ըստ ամսագիրի աղբիւրներուն, Իսրայէլի տրամադրութեան տակ էին կամ կ'ըլլան Իրանի վրայ օդանաւային հաւանական հարուածի պարագային: Լիպըրմէն այդ պատմութիւնը կոչած է «գիտաբեւեակայական», որ «ոչ մէկ կապ ունի իրականութեան հետ»: Այսուամենայնիւ, Լոնտոնի The Times-ը յայտնած է, որ «Իսրայէլի լրտեսական գործակալութիւնը՝ Մոսատ, խարխախ ունի Ատրպէյճանի մէջ»:

«Որեւէ չափանիշով Ատրպէյճան բռնապետութիւն է», որ 2023ին Economist Intelligence Unit-ի կողմէ 167 երկիրներու մէջ վարած է 130-րդ տեղը: Իսրայէլի Քնեսեթի չորս անդամներէն կազմուած պատուիրակութիւնը՝ Լիպըրմէնի գլխաւորութեամբ, մեկնած է Ատրպէյճան՝ իբրեւ թէ նախագահական ընտրութիւնները վերահսկելու նպատակով: Անոնք հերքած են ընտրութիւններու մէջ տեղի ունեցած խախտումներուն մասին հաղորդումները, որոնց շնորհիւ Ալիեւ յաղթած է մեծ՝ 85 տոկոսով: Անոնք կեղծօրէն Ատրպէյճանը բնութագրած են իբրեւ «միակ ժողովրդավարութիւնը Մերձաւոր Արեւելքի մէջ»: Ալիեւի յաղթանակը Լիպըրմէն կոչած է «լաւ դաս մը որոշ ուժերու համար, որոնք անարդարացիօրէն կը քննադատեն Ատրպէյճանը»:

Երբ իսրայէլաբնակ ռուս պլոկըր Ալեքսանտր Լափշին ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ Բաքուի մէջ՝ Արցախ այցելած ըլլալուն համար, անոր ընտանիքը այդ օրերու պաշտպանութեան նախարար Լիպըրմէնէն խնդրեց՝ միջամտել, սակայն վերջինս ոչինչ ըրաւ անոր օգնելու համար, նոյնիսկ երբ Լափշին յարձակման ենթարկուեցաւ բանտի ապահովութեան պաշտօնէաներու կողմէ, որոնք փորձած էին սպաննել զայն: Լափշին կը կարծէ, որ ի վերջոյ ռուսերը օգնած են, ապահովելու համար իր ազատ արձակումը:

Մըկիսօ յայտնած է, որ Լիպըրմէնի երկու որդիները՝ Ամնու եւ Քոպի, «գործնական խորունկ յարաբերութիւններ» ունին Ատրպէյճանի կառավարութեան հետ: «Կը պարզուի, որ Լիպըրմէն եղբայրները շատ ժամանակ կ'անցընեն Պաքուի մէջ, ուր անոնք կը համարուին միջնորդներ, որոնք գիտեն թէ ինչպէ՛ս պիտի բանան դռները, իշխանութեան առջեւ: Վերջին տարիներուն, Լիպըրմէնի որդիները իսրայէլական շարք մը արհեստագիտական բարձր արտադրանք մատակարարած են Ատրպէյճանի կառավարութեան. համակարգչային յանցագործութեան արտադրանք, որ պատրաստուած է համակարգչային անվտանգութեան Candiru ընկերութեան կողմէ. տուեալներու մեծ համակարգ՝ համակարգչային անվտանգութեան մէկ այլ ընկերութեան՝ Rayzone-ի կողմէ տուրքերու հաւաքագրումը բարելաւելու համար եւ ջուրի աղազերծման արհեստագիտութիւններ իսրայէլական IDE ընկերութեան կողմէ: Միայն այս երեք ձեռնարկութիւններու միջնորդութեամբ կարելի



միջնորդավճարները կրնան հասնիլ միլիոնաւոր տոլարներու: Աւելին, մինչեւ վերջերս Լիպըրմէն եղբայրները կը ներկայացնէին «ատրպէյճանական օդանաւային թռիչքները» (պետութեան կողմէ վերահսկուող ազգային օդանաւ փոխադրող) Իսրայէլի մէջ»:

Իսրայէլական քանի մը ընկերութիւններ, ինչպէս Pegasus եւ Candiru, լրտեսական ծրագիրներ ծախած են Ատրպէյճանի՝ վարչակարգի հակառակորդներուն հեռախօսները կոտրելու համար: Այսօր, 18 ատրպէյճանցի լրագրողներ բանտերն են: Candiru-ի վաճառքը միջնորդած են Լիպըրմէնի երկու որդիները՝ միջնորդավճարի դիմաց՝ «գնահատուած հարիւր հազարաւոր տոլարներով»: Rayzone համակարգչային ընկերութեան հետ գործարքէն անոնք շահած են «մօտաւորապէս 200 հազար տոլար միջնորդավճար», ըստ «TheMarker»-ի՝ հրապարակուած «Հաարեց»ի կողմէ: Լիպըրմէնի գրասենեակը յայտարարած է, որ «ան ներգրաւուած չէ իր զուակներուն առեւտուրներուն մէջ»:

Լիպըրմէնի զուակները կը ներկայացնէին նաեւ IDE Technologies-ը, որ կը նախատեսէ Ատրպէյճանի մէջ կառուցել ջուրի աղագերծման մեծ գործարան: Ասիկա «նախագիծ մըն է, որուն արժէքը կրնայ հասնիլ հարիւր միլիոնաւոր տոլարներու, եւ Լիպըրմէն եղբայրներու համար միջնորդավճարը, հաւանաբար, բարձրանայ համապատասխանաբար», գրած է Մըկիսօ:

Մըկիսօ կը հետաքրքրուի. «Կը կարծէ՞ք, որ երկու որդիները Ատրպէյճանի կառավարութեան հետ կը հասնէին նման նշանակալի կարգավիճակի, եթէ անոնց ընտանեկան կապերը չըլլային»: Մէջբերում կ'ըլլայ գործարարի մը խօսքերէն. «Կրնամ ըսել ատրպէյճանցիներու մասին, որ անոնք այն մարդիկն են, որ գիտեն ինչպէ՛ս շնորհակալութիւն յայտնել: Եթէ դուն լաւ բան ընես անոնց համար, եւ անոնք քեզ գնահատեն, անոնք գիտեն, թէ ինչպէ՛ս շնորհակալութիւն պետք է յայտնեն՝ թէ՛ խօսքով, թէ՛ գործով»:

Մըկիսօ եզրակացուց. «Հաւանաբար իսրայէլեան կառավարող շրջանակներու մէջ չկայ մէկը, որ վիճարկէ այն բազմաթիւ օգուտները, զորս Իսրայէլ կը ստանայ Ատրպէյճանի հետ իր նողկալի, բայց, թերեւս կենսական յարաբերութիւններէն: Բայց այս երկու յայտարարութիւններուն միջեւ հակասութիւն չկայ. նախագահ Իլիամ Ալիեւի բարոյապէս կասկածելի իշխանութեան հետ ջերմ յարաբերութիւնները կրնան ըլլալ Իսրայէլի ազգային անվտանգութեան ռազմավարութեան եւ միեւնոյն ժամանակ նաեւ Լիպըրմէններու ընտանիքի առեւտուրի ռազմավարութեան մաս»:

17/4/2024

Յարութ Սասունեան

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ ԵՒ ԱՆԶԻԶԵԼԻՆ. ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՍՓԻՌՔԷՆ ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐՄ

Պարոյր Յ. Աղպաշեան



Հայոց լեզուն, իր Արեւմտահայերէն թէ Արեւելահայերէն «տարբերակ»ներով, կը մնայ մեծ հարցական մը ու տակաւին կարելի չեղաւ հասարակ-յայտարարով մը, անոր տալ գոհացուցիչ կամ ընդունելի լուծում մը:

Եւ ասիկա, հակառակ բազում ճիգերուն ու փորձերուն, որոնք արձանագրուեցան ու կ'արձագանգուին մէկէ աւելի մարզերու մէջ, նոյնիսկ հեղինակաւոր փորձագէտներու ու

լեզուագէտներու կողմէ:

Ճիշդ է, պէտք է հաստատել, որ հայոց լեզուի կարգաձրարը բարդ ու կնճռոտ է, դժուար ու հանգուցաւոր, բայց, ատոնք, կը նշանակէ՞ն, որ անիկա մնայ անմխիթար եւ անփոփոխ վիճակի մը մէջ:

Անշուշտ, հայոց լեզուն, յատկապէս գիրերու գիւտէն ետք, անցած է երկար ու փշոտ, երբեմն ալ՝ անհարթ եւ անհաշտ ուղիներէ, որոնք իրենց տխուր եւ անխուսափելի դրոշմները դրած են անոր վրայ, ի դէմս աշխարհագրական, նուաճողական, քաղաքական թէ անհանդուրժողական պայմաններուն, անոնք ըլլան ներքին թէ արտաքին ազդեցութիւններու գծով:

Այդուհանդերձ, հայոց լեզուն մնացած է կանգուն եւ անառիկ, հոգ չէ թէ ստեպ-ստեպ «վիրաւոր» վերիվայրումներով, բայց, կրցած է հայ ժողովուրդին տալ շունչ ու լիցք, կամք եւ ուժ, մնալու աներեր եւ կառչած իր արմատներուն, նոյնիսկ երբ Հայաստանը գուրկ էր անկախութենէ ու պետականութենէ, իսկ ատոնք արգելք չէին (ու չեղան), որ ան հրաժարէր իր էութենէն եւ ինքնութենէն:

Պատմութիւնը վկայած է, որ հայ ժողովուրդի գոյութեան եւ յարատեւման հեւքին մէջ, անկասկած, հայոց լեզուն ունեցած է իր արժանաւոր տեղը, խթանող ներուժը, կենդանացնող աւիւնը, բաբախուն երակներով ու կենսունակ սրսկումներով իր հօտը առաջնորդելու, լուսաւորելու անոր ճանապարհը, հաւատքի ուժով, չընկրկելու ամբողջեամբ եւ, ամենէն կարելորը, չնահանջելու ընտրանքով, որովհետեւ՝ միակ փրկութիւնը եւ ազատութիւնը կը կայանայ նման անշեղ արեւելումի մը հիստելեղութեան մէջ:

Պէտք չէ մոռնալ, այլ՝ շեշտել, որ հայոց լեզուն հինգերորդ դարէն սկսեալ, դէմ յանդիման գտնուած է բազմաթիւ խոչընդոտներու ու խափանումներու, արգելումներու ու ճնշումներու, այսինքն՝ հին հայերէնէն (գրաբար)՝ միջին հայերէն, աշխարհաբարէն՝ Արեւմտահայերէն եւ Արեւելահայերէն (անցնելով նաեւ բարբառային շերտաւորումներէ), ենթարկուած ըլլալով զանազան ու տարատեսակ «անցում»ներու, որոնց մէջ, աշխարհականութեան զուգահեռ, նաեւ կրօնագիտական պատկանելիութիւններով, սակայն, հիմնականին մէջ մնալով, հարազատ իր ակունքներուն, թէկուզէ որոշակի փոփոխութիւններով, առաւելութիւններով ու կրճատումներով կամ բոլորովին նոր տարագումներով, որոնք, այն ժամանակ արդիւնք էին աւանդականին կապուած մնալու եւ աշխարհաբարայինը... մերժելու:

Բայց, լեզուն՝ լեզուն է սկզբունքով ու մեկնարկով, իսկ հայութիւնը, իր հատուածներով, նախընտրեց հաւատարիմ մնալ Մեսրոպեան հայերէնին, որովհետեւ հոն ինքզինք ապահով զգալու, կենդանի դառնալու, ճշմարտութիւնը ապրելու հնարաւորութիւնը գտաւ:



Այո՛, հայոց լեզուն դարձաւ առաջնորդող ջահակիր մը, վերածուեցաւ կայունութեան վեմի մը, առաւել՝ դրօշակակրութեան ամրակուռ երթուղիի մը, ուր՝ ինչ ալ ըլլան սեղմումները, ան՝ լեզուն, կը պահէ ու կը պաշտպանէ իր հաւատացեալները եւ հետեւորդները:

Մեծն Եղեռնը, իր Յեղասպանական աննախընթաց փետրաթափումներով ու բեկորումներով, եթէ փորձեց հայութիւնը արմատախլել, ցիրուցանել ու տարբադադրել, բայց, ի վիճակի չեղաւ իր հայաջնջութեան արարքներուն մէջ լիուլի (՛) յաջողիլ, որովհետեւ՝ նոյնինքն հայոց լեզուն եղաւ այն հրաշափառ միջոցներէն, որ զինք պաշտպանեց, իր լեզուական հզօրութեամբ, մտածողական սրատեսութեամբ ու տրամաբանական զգաստութեամբ:

Ասիկա այն բարձրաթիչ ու բարձրախօս ազդանշաններէն էր, որ հայոց լեզուն կրցաւ իր ձայնն ու կանչը լսելի դարձնել, որպէսզի հայ ժողովուրդը, յետեղեռնեան իր կարաւանը պահէ եւ իր կարաւանութեան գնացքը անարգել ապահովել:

Այս հպանցիկ եւ արագ թուումները, պարզապէս մատնանշելու եւ անդրադառնալու, այժմու այն հոլովոյթներուն վրայ, ուր հայոց լեզուն երբեք չի գտնուիր իր պայծառ հորիզոնականին վրայ:

Պատճառները այնքան շա՛տ են ու բազմապիսի, որ յօդուածի մը սահմաններուն մէջ զանոնք մէկտեղելը չեն կրնար բուարար ըլլալ, մանաւանդ երբ՝ զանոնք կը խորաչափենք իրենց լայնածիր թելերէն ներս, նաեւ իրենց խայտաբղետ գոյներէն:

Մենք՝ բազմաթիւ առիթներով լուսարձակի տակ առած ենք հայոց լեզուին հետ առնչուող հրատապութիւնները, զանոնք ճշգրիտ հունի մը վրայ տեսնելու նախանձախնդրութեամբ, այնքանով որքանով անոր պահանջքը կը զգացուի կամ երթուղին կը պարտադրէ:

Սակայն, այս ուղղութեամբ կայ փապուղի մը, որ միշտ կը ճնշէ եւ կ'ապակողմնորոշէ անոր գոյավիճակը, մերթ արեւելահայ, մերթ արեւմտահայ (այս պարագային՝ նուազ) գոյավիճակներով:

Անշուշտ, խօսքը միշտ կը վերաբերի անոնց, որոնք հայոց լեզուի գոյութեան ու գործածութեան, առողջութեան ու կենսունակութեան ջատագովներ են, իրենց ակադեմական, մասնագիտական, ուսումնասիրական, լեզուագիտական եւ առարկայական գիտապաշարներով, պատրաստուածութեամբ, գիտելիքներով ու կողմնորոշումներով:

Հարցերուն հարցը այն է, որ հայոց լեզուի մասնագետները, Արեւմտահայ եւ (յատկապէս) Արեւելահայ ծիրերէն ներս, չեն կրցած ի մի գալ, միասնաբար ու հաւաքաբար այս հարցին շուրջ քննարկումներ կատարելու, հետազօտութիւններով եւ ուսումնասիրութիւններով, զեկուցումներով եւ ելոյթներով, զայն դարձնելով համապարփակութեան ու համատեղութեան գօտի մը, ուր գործնականութիւնը եւ իրապաշտութիւնը, իրենց հաւանականութիւններով ու դրսեւորումներով, կրնան դուրս բանալ դէպի ամբողջական հասկացողութեան եւ ուղղուածութեան յուսատու հորիզոններու, հուսկ՝ հայոց լեզուն դարձնելով՝ միակտուր, միանշանակ ու միաբեւեռ կառոյց մը:

Պատճառները, անշուշտ, ինչպէս յիշեցինք, շատ են ու բազմազլուխ, բայց, անոնց մէջ խորասուզուիլը ու տարածուիլը, երկար ժամանակի կը կարօտի, որովհետեւ, անիկա կը պահանջէ լուրջ, ամբողջական ու մասնագիտական վերաբերում, սակայն, առանց զգացական, սոսկական, նեղմտական, կամայական կամ ինքնաշնորհական միտումներու:

Պէտք է ըլլալ զգաստ, գիտակից եւ յանձնառու, լեզուին ինքնութիւնը չչարաշահելու, չսեփականացնելու ու չանձնականացնելու, Արեւմտահայ թէ՛ Արեւելահայ կողմնորոշումներով, որոնք չեն ծառայած ու չեն ծառայեր հայոց լեզուին միասնականութեան, անառիկութեան եւ յարատեւութեան:



Այս պարագան կը շեշտենք, քանի որ, դժբախտաբար, պատահած են (ու հիմա ալ չեն բացառուիր), զոյգ գրական լեզուները ոմանց կողմէն դարձնելու «շողգամ»ակոբիլի, ոմանք ԻՐՇ գերադասելով միւսէն, ուրիշներ ալ՝ ԻՐՇ նկատելով նախամեծար:

Այս բանակոբիւր, որ այսօր եւս հեռու չէ նման քաշքշուքներէ, պէտք է յիշեցնել անոր մօտալուտ անցեալին տեղի ունեցող թեր ու դեմ «ճակատումները», որոնք եթէ ունեցան դադարներ կամ տատանումներ, բայց, անոնք ոչ միայն չվերացան կամ չհարթուեցան, այլ միշտ մնացին «շարժուն», մոխիրին տակ կրակ պահելով:

Ցաւ ի սիրտ, գրական լեզուներու այդ բանակոբիւններուն մէջ, մտաւորականներ ու գրողներ, հեղինակներ ու գրիչներ, հանդէս եկան ծածուկ թէ բացայայտ «կոշտ» կեցուածքներով, յատկապէս Արեւմտահայ լեզուն նկատելով... Բարբառային տարբերակ (Շիրվանզադէ), թէեւ շատեր ալ իրենց հիացմունքը արտայայտեցին անոր նկատմամբ, որ Հայ Ոսկեդիակի դափնեպսակներէն է, առանց ստուերելու կամ անտեսելու Արեւելահայ լեզուին գունագեղութիւնը, գեղեցկութիւնը ու գրաւչութիւնը:

Հիմա գանք մեր բո՛ւն նիւթին.

ինչո՞ւ արեւելահայը չի կապկեր, չի կրկներ, չի ծամծամեր ինքզինք, երբ ընթացիկ, գրական, արտակարգ թէ անմիջական հարցերու մասին կը խօսի կամ կ'անդրադառնայ, առանց բարդոյթի ու շուարումի, հաւատալով որ արեւմտահայը երբեք անհանգստութիւն եւ անհասկացողութիւն չունենար անոր խօսածներէն եւ արտայայտութիւններէն:

Ընդհակառակը, ան կը կարծէ (ու թերեւս ալ հաւատացած է), որ արեւմտահայը կը հասկնայ զինք (կամ պէտք է հասկնայ զինք):

Մակայն, ՉՈՐ իրականութիւնը երբեք ալ այդպէս չէ, որովհետեւ երկխօսութիւն երբ ընթանայ անոնց միջեւ, գրականալեզու մակարդակով, թերեւս այնքան ալ մտահոգիչ չէ, բայց, բոլորովին այլ է իրավիճակը, երբ անիկա կը զգենու ժողովրդալեզու («ժարկոն»ային թէ բարբառային) եզրութային լեզուով ու հաղորդակցութեամբ, այն ատեն պէտք է տեսնել ու զգալ, թէ՛ ի՞նչ ահաւոր է պատկերը, իր բազմակողմանի երեսներով ու ծալքերով:

Անկախութիւնը, իր գանազան կարգուսարքերով, կազմաւորումներով ու կարելիութիւններով, բոլորովին այլ եւ խճճուած ուրուագիծ մը սկսաւ պարզել, ոչ միայն ընդհանրապէս սովորական կեանքէն ներս, այլեւ՝ հայ լեզուն առնելով իր «լափ»ին մէջ, զայն հետզհետէ աւելի ստուերելով, իսկ Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի մէջ խրելով յաւելեալ մէխ մը, այդ պարունակէն ներս առաջացնելով «բարբառներ» նոր քառս մը:

Մփիւռքէն Հայաստան ներհոսուած հայրենակիցներ, իրենց հետ բերին, իրաւացիօրէն, իրենց խօսակցական Արեւմտահայերէնը, սովորութիւնները, ասանդութիւնները, մտայնութիւններն ու հոգեբանութիւնները, որոնք այնքան ալ դիւրին եւ արագ չէին կրնար «հպատակութիւն» ստանալ, ինչ որ տարօրինակ չէր, բայց, երբ երկար ու խոր երթողի մը վրայ կշռուին անոնց յարաբերութիւնները, արդէն կը պարզուին մէկէ աւելի հարցականներ, թէ՛ բնիկներու, թէ՛ ժամանողներու բազմակոյտ ու հակոտնեայ ոլորտներէ ներս:

Պատկերացնելու պէտք կա՞յ, թէ ի՞նչ լեզուական, հոգեբանական, յարաբերական ու մտածողական, մեղմ ըսած, թոհուրոհ մը կը տիրէ հոն, որ ձգուած է ինքնահոսի, ուր պետական հովանաւորութիւնը, հսկողութիւնը ու կարգաւորութիւնը, առնուազն, բացակայ են, որոնց վրայ եկաւ աւելնալու Արցախեան բարդ թղթածրարի սուր առկայութիւնը:

Այս տատանումներով ու ծածանումներով, կարելի՞ է «լեզուական գնացք»ը ուղղորդել:

Որոշապէս՝ ոչ, որովհետեւ անիկա կարիքը ունի համապետական հոգատարութեան, իր ակադեմական, լեզուագիտական, օրէնսգիտական, վարչագիտական, կազմակերպչական ու մասնագիտական գործօններով ու լծակներով:

Մակայն, այդ բոլորին զուգահեռը այն է, տարօրինակօրէ՛ն, երբ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՐ (սփիւռքահայը), մտաւորական, խմբագիր, ազգային գործիչ, կը գրուցէ, կը վերլուծէ, կը



մեկնաբանէ, կը քննարկէ կամ կ'արտայայտուի տիրող ազգային-հայրենական-սփիւռքեան հրատապութիւններու մասին... ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՎ, ատիկա ինչո՞վ արդարանալի ու տեղին է, այնքան ատեն որ սփիւռքահայութեան լեզուն արեւմտահայերէնն է եւ միայն այդ միջոցով կարելի է հաղորդուիլ ու բացուիլ, իսկ արեւելահայը պարտաւոր է ընդունիլ ու հասկնալ զայն, ինչպէս որ արեւմտահայը այդ սկզբունքով ու համակերպութեամբ կը վարուի:

Յամենայն դէպս, ասոնք ԲԱՅ ճշմարտութիւններ են, հետեւաբար, կարելի չէ անոնցմէ խուսափիլ կամ խորթ այլ մեկնաբանութիւններով հանդէս գալ:

Այժմ, այսքանով կը բաւարարուինք, հաւատալով եւ ակնկալելով, որ՝ արեւմտահայ գրիչը կամ միտքը, կը մնայ հարազատ իր լեզուին, առանց թերագնահատելու իր լեզուաեղբայր արեւելահայերէնը, մինչեւ որ զանգը հնչէ անոնց մերձեցումին, միաւորումին ու մէկութեան (խոստանալով այդ մասին ալ, շուտով անդրադառնալու առիթ կը ստեղծուի):

(Պէյրութ)

29/3/2024

NEVER AGAIN?

ԳԵՂԱՐԴ

Յարութ Տէր Դաւիթեան, Լոս Անճելըս, 23 ապրիլ 2024



Նախընտրեցինք խորագրի անգլերէն տարբերակը, որովհետեւ հայերէն «երբեք դարձեալ»-ը նոյն նշանակութիւնը պիտի չտար: Հարցական նշանն ալ դրինք, հեզնելու համար այդ արտայայտութիւնը եւ բացայայտելու անոր սնանկութիւնը:

Արդարեւ, Մեծ Եղեռնէն ի վեր, մօտ 30 ցեղասպանութիւններ գործուած են, որոնց գրեթէ կէսը անցնող 50 տարիներու ընթացքին: Այսօր, անցնող վեց ամիսներու ընթացքին, «քաղաքակիրթ» աշխարհի աչքերուն առջեւ, աւելի քան 33 հազար պաղեստինցիներ զոհ զացած են անխնայ ումբակոծութեանց եւ մօտ 1,5 միլիոն տեղահանուած իրենց փլատակներու վերածուած տուներէն: Չենք խօսիր տակաւին աւելի քան հարիւր հազար Արցախահայութեան տեղահանութեան մասին, որ 21րդ դարու մեր Եղեռնն է, ոչ թէ մեռեալներու թիւով, այլ՝ հողային կորուստի: Չենք խօսիր Ուքրանիոյ պատերազմին մասին, որ երկու կողմերուն պատճառած է աւելի քան 800,000 վիրաւորներ ու մեռեալներ եւ տեղահանած աւելի քան 8 միլիոն ուքրանացիներ: Չենք խօսիր նաեւ Եթովպիոյ, Սուտանի, Սուրիոյ, Եմէնի եւ այլ երկիրներու մէջ ընթացող խժոժութեանց, կոտորածներու եւ սովի մասին: Եւ այս բոլորը կը կատարուին «քաղաքակիրթ» աշխարհի աչքերուն առջեւ, չըսելու համար մասամբ ալ անոնց դրդումով: Մեծ պետութեանց խաղերուն զոհ կ'երթան փոքրերը: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնն ու անոր Ապահովութեան Խորհուրդը, որոնք կոչուած են առաջքը առնելու այսպիսի կացութեանց, կը խափանեն որեւէ լուծում, որ յարմար չթուիր այս կամ այն պետութեան շահերուն: 2000 թուականէն ի վեր, այդ Խորհուրդին վեթօ ունեցող հինգ անդամներէն երեքը՝ ԱՄՆ, Ռուսիա եւ Չինաստան 67 անգամ խափանած են առնուելիք որոշումներ: Այս 67 վեթօներուն մեծ բաժինը միայն



Պաղեստինեան եւ Սուրիական հարցերուն գծով եղած է: Պաղեստինեան հարցով՝ ԱՄՆ-ը 15 անգամ: Սուրիական հարցով՝ Ռուսիան 16 անգամ, իսկ Չինաստանն ալ 10 անգամ:

Վերեւ նշած մեր օրինակներէն յստակ կ'երեւի, որ «արժէքներ», «մարդկային իրաւունքներ» եւ այլ տեսակի բարոյական սկզբունքներ կ'ոտնակոխուին, երբ այդ կը պահանջեն մեծ պետութեանց շահերը: Անոնք նոյնիսկ չեն վարանած տապալելու ժողովրդավար կառավարութիւններ, որոնք նպատակայարմար չէին իրենց շահերուն եւ կամ ուրակոծելու փոքրերը, մարդկային իրաւունքներու պաշտպանութեան պիտակին տակ: Այս բոլորը կը պատահին, որովհետեւ աշխարհ կ'առաջնորդուի լկտի գործնական քաղաքականութեամբ (realpolitik): Այս քաղաքականութեան դրսեւորումներէն էր Թուրքիոյ նախագահ Էրտողանի ամբաստանութիւնը, որ Իսրայէլ ցեղասպանութիւն կը գործէ Կազայի մէջ եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարարի յիշեցումը Թուրքիոյ, որ ան հայոց ցեղասպանութիւնը գործած էր, իրողութիւն մը՝ որ տակաւին Իսրայէլի պետութիւնը պաշտօնապէս չէ ընդունած: Այս լկտի գործնական քաղաքականութեան կիրառումը նորութիւն մը պէտք չէ ըլլայ մեզի համար: 1600 տարիներ առաջ իսկ, մեր պատմահայր Խորենացիի պատգամած «սահման քաջաց՝ զենն իւրեանց» խօսքն է, որ տակաւին կը մնայ ի գորու, հակառակ քաղաքակրթութեան ամէն տեսակի զարգացումներուն:

Այս բոլորի լոյսին տակ, մենք՝ հայերս ի՞նչ հետեւութիւններ կ'ընենք: Դատելով, մանաւանդ վերջին 30 տարիներու զարգացումներէն, մենք անգամի մը համար եւս կը համոզուինք, որ մեր դաւանած հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը բոլորովին զուրկ են խորքային ընկալումէ: Որ մենք տարուած ենք ինքնախաբէութեամբ: Որ պատրաստ ենք զոհելու մեր ազգային շահերը յօգուտ մեր անձնական ու հատուածական շահերուն: Այլապէս՝ մեզի ներկայացած ոսկի առիթները չէինք վատնել: Այլապէս՝ մեր առջեւ ցցուող մարտահրաւերները կը քննարկէինք իմաստութեամբ, որպէսզի համապատասխան լուծումներու յանգէինք: Այլապէս՝ օտարի ձեռքին գործիք չէինք դառնար: Այլապէս՝ իշխանութեան տիրանալու համար զիրար չէինք սպաններ: Այլապէս՝ կը գիտակցէինք ու կը հետեւէինք մեր մեծերու պատգամներուն, որ ինչպէս կրնանք մեր «փոքր ածու»ն դարձեալ մեծցնել: Աւադ, որ ամէն անգամ երբ առիթը ներկայացած է սրբազրելու անցեալի սխալները, զոհ գացած ենք պատեհապաշտներու սաղրանքներուն եւ դարձեալ տուժած:

Ինչո՞ւ համար ցեղասպանութենէն ճողոպրած, օտար հողերու վրայ ապաստան գտած եւ հիւղաւաններու մէջ աճած սերունդը պիտի յաջողէր իրեն յաջորդող սերունդներուն յաջողութեան համար զօրաւոր հիմքեր ստեղծել, իսկ շատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ Արցախեան ազատամարտի յաղթանակ կերտած սերունդը պիտի փճացնէր այդ յաջողութիւնը: Ինչպէ՞ս բացատրել այս դժբախտութիւնը: **Արդե՞օք աղէտները մեզ վերակենսաւորելու ու միաւորելու գիտակցութեան ու մշակոյթին զարկ կու տան, մինչ յաղթանակները աւարին տիրանալու համար մեղկութեան եւ պառակտութեան կը տանին:** Հրատապ հարց մըն է մեր բարձրացուցածը, որ կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան, ախտաճանաչման եւ բուժման, որպէսզի սթափինք եւ կասեցնենք այս կործանարար ընթացքը, որուն մէջն ենք ազգովին:



ՏԵՄԱԿԷՏ

ԱՇԽԱՐՀԱԶՕՐԸ՝ ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ



Գեորգ Եսգրճեան, «Ազգային Լեզուն»
ռազմահայրենասիրական հասարակական
կազմակերպութեան խորհուրդի անդամ, Երևան, 29 ապրիլ
2024

Հայութեան փոքրաքանակութիւնը մանաւանդ Հայաստանի Հանրապետութեան մէջ եւ վերջինիս գրեթէ ամբողջովին պաշարուած ըլլալը թրքացեղ խաժամուծներով (Վրաստանի ու Իրանի հետ ՀՀ-ի սահմաններուն միւս կողմը մեծ մասամբ թրքազգիներ կ'ապրին) ԼՐՋԱԳՈՅՆ քայլեր կը պահանջեն հայութենէն ու հայրենի պետութենէն: Նորաբողոք երախային համար պարզէն իսկ պարզ է, որ անոնց հետ խաղաղ գոյակցութեան կոչերը, եթէ անոնք չեն ուղեկցուած Հ. Հ.ի ՀԶՕՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՅՈՒԹԵԱՄԲ, գայլի գլխուն կարդացուող աւետարաններ են:

Մենք ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԵՆՔ ունենալու հզօր դիմադրական համակարգ: Ան պետք է ներառէ հետեւեալ հինգ բաղադրիչները՝ պետական կանոնաւոր բանակը, պահեստազօրը, պայմանագրային զինուորները (պետութենէն ամսական ստացող եւ յօժարակամ ժամանակաւոր զինուոր դարձած քաղաքացիներ), կամաւորներ եւ աշխարհազօր: Այսօր Հ. Հ.ի մէջ կան առաջին երեքը միայն, իսկ կամաւորները կը յայտնուին պատերազմական թեժ գործողութիւններու ատեն, ինչպէս եղաւ 44-օրեայ պատերազմին, որու ընթացքին՝ պահեստազօրը չօգտագործուեցաւ, թէւ զօրաշարժ յայտարարուեցաւ:

Սակայն այս չորս բաղադրիչները բաւարար չեն դիմագրաւելու մեր ապահովական մարտահրաւերները: Հետեւաբար, համազգային աշխարհազօրի պատրաստումն ու առկայութիւնը ոչ միայն կենսական, այլեւ գոյութենական անհրաժեշտութիւն է այսօր: Պատերազմի թեժ փուլերուն, հայ ազգը պարտաւոր է թշնամիին դէմ հանել առնուազն 200 հազարնոց, զինուորական պատշաճ կրթութիւն եւ մարզումներ անցած, նաեւ ու անպայման՝ գաղափարական ազգային դաստիարակութիւն ստացած աշխարհազօր:

Ի դէպ, մեր պատմութեան ընթացքին, գոնէ միջնադարի առաջին կեսին, 4-րդ դարէն մինչեւ 11-րդ դարը, հայկական պետական բանակը, ըստ պատմաբան եւ քաղաքագետ Արմէն Այվազեանի, ունեցած է շուրջ 120 հազար զինուոր, որու կէտը արքայական զօրագունդերը եղած են, մնացեալները՝ նախարարական զօրքերը: Սակայն, ճակատագրական պահերուն, անոնց միացած են մինչեւ 300 հազար աշխարհազօրայիններ՝ պաշտպանելու համար հող հայրենին: Առանց այդ օժանդակ, բայց կարելոր բաղադրիչին, պետական բանակը դժուար թէ դէմ դներ ներխուժող թշնամիներուն: Կարճ ըսած՝ ճակատագրական պահերուն՝ ազգը դարձած է ազգ-բանակ:



Այսօր կը դիմագրաւենք լինել-չլինելու գոյութենական վտանգ: Յոյսը թշնամիներու կամ նոյնիսկ բարեկամներու (աւելի ճիշդ՝ բարեկամ կարծուածներու) վրայ դնելը ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ է: Ցաւօք, Հ. Հ.ի վարչապետն սկսած, անցնելով բազմազոյն ընդդիմութիւններուն, գրեթէ բոլորը իրենց յոյսը դրած են օտարներու կամ նոյնիսկ թրքազգի թշնամիներուն վրայ, ոմանք ալ ապաւինած են միայն Աստուծոյ: Աստուած իր արարածներէն միայն մարդուն շնորհած է բանականութիւն կոչուած յոյժ կարեւոր յատկութիւնը՝ ակնկալելով որ մարդը զայն կը գործածէ բարի նպատակներով: Այդ յատկութիւնով օժտուած է նաեւ հայութիւնը: Սակայն մի՞թէ մեր ազգը բանականութիւնը կը գործածէ իր ինքնապաշտպանութեան համար: Հազիւ թէ: Վերջին տարիներու իրադարձութիւնները այդ հարցումին բացասական պատասխան կու տան:

Այսօր, աւելի քան երբեւէ, մեզի անհրաժեշտ է ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՆԵԼ ԱԶԳ-ԲԱՆԱԿ հայեցակարգը: Նախկին իշխանութիւնները այդ գաղափարը մէջտեղ նետեցին, սակայն նոյն անձինք նոյն ատեն կը կողոպտէին հայ զինուորին հացն ու զէնքը: Ներկայի իշխանութիւնները հիմնովին կը մերժեն այս գաղափարը՝ յոյսը դնելով արեւմտեան պետութիւններու եւ ... թշնամիներու բարեացակամութեան վրայ:

Ժողովրդային իմաստուն ասացուածքը կը պատգամէ՝ «ԵՂՈՒՆԳ ՈՒՆԻՍ, ԳԼՈՒԽԴ ՔԵՐԷ»:

Ինչպէս համայն մարդկութիւնը, հայ հասարակութեան կէտը կը կազմէ իզական սեռը: Մեր պարագային, հայ իզական սեռն ալ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ էական մասնակցութիւն ունենալու Հայրենիքի պաշտպանութեան մէջ: Ահա թէ ինչու կամաւորներ ու աշխարհագորայիններ պատրաստող ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆ-ին մէջ յատուկ աշխատանք կը տարուի հայ աղջիկ ու կին աշխարհագորայիններ պատրաստելու ուղղութեամբ (ռազմական մարզումներ, նշանառութիւն, բժշկական նախնական գիտելիքներ, ռազմահոգեբանական եւ գաղափարական դաստիարակութիւն՝ բոլորը՝ ՁԲԻ, ներառեալ հանդերձանքի տրամադրումը): Կը բաւէ ըսել, որ 2021-ի գարնան երբ սկսանք մեր աշխատանքները, հայ իզական սեռին մասնակցութիւնը շուրջ 15 տոկոս էր: Այսօր ան հասած է շուրջ 40 տոկոսի: Եւ դեռ աւելի՛ տոկոսի կը ձգտինք:

Աշխարհագորին մաս կազմելու ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ նաեւ սփիւռքահայր՝ արու թէ էգ: Եթէ Հայրենիքը մեր բոլորի համայնական տունն է, անոր պաշտպանութիւնն ալ համայնական պարտաւորութիւն է: Ազգային Լեգէոնը վաղուց յայտարարած է սփիւռքահայ աշխարհագորայիններ պատրաստելու իր ցանկութիւնը, սակայն, յամօթ կեղծիքի ու պատրանքի մէջ ապրիլ սիրող մեր ժողովուրդի մեծամասնութեան, արձագանգ չէ գտած: Լոս Անճելոսի մէջ թէ այլուր մայրուղիներ գոցելով, տարբեր երկիրներու մէջ ցոյցեր ընելով, Artsakh is Armenia գոռալով Արցախը ... կորսնցուցինք: Հիմա կարգը Հ. Հ.ին հասած է: Հիմի՞ էլ լռենք, հիմի՞ էլ կեղծենք, հիմի՞ էլ ձեռքերը ծալենք, իսկ ծախենք, շարունակենք իրարու հայիոյել, հիմի՞ էլ բաւարարուինք պաստառներով, «թղթէ շերեփ»ներով եւ դրօշակ այրելով...

Պատասխանը քո՛ւկդ է՝ հայ երիտասա՛րդ եւ երիտասարդուհի՛, քո՛ւկդ է՝ հա՛յ ազգ:

1987-ի մարտ ամսուն իմ մէկ յօդուածս վերնագրած էի՝ «Հայ մարդու ազատագրութիւնը իր հոգե-մտաւոր կապանքներէն՝ նախապայման հայ հողի ազատագրութեան»: Նոյնը կը կրկնեմ այսօր՝ «հայ հողի ազատագրութեան» հետ աւելցնելով «հայ հողի պաշտպանութեան» բառերը:

Այս պարզ ճշմարտութիւնը հասկնալով հայ ազգային աշխարհագորին մասնակցելու փափաք ունեցող հազարներ եւ բիւրեր պիտի գտնուին, մանաւանդ սփիւռքի մէջ:

Գործնական պատասխանի սպասումով՝
Գեորգ Եազրճեան


ԳԵՂԱՐԴ

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՂԵՐ

ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐՈՒ ՀԶՕՐԱՑՈՒՄՆ Է

ԱԶԳ

19/04/2024



- Օրացոյցի անխախտելի օրինաչափութեան ընթացքով, ահա այս տարի եւս կը թեւակոխենք Մեծ Եղեռնի նշման Ապրիլեան օրերը: Այս անգամ անոր 109-րդ տարելիցը:

Ամէն տարի Կաղանդ, Ծնունդ կամ Զատիկ կանոնաւորութեամբ նշելու նման, նոյնպէս ալ հայ ժողովուրդը այս օրերուն՝ Ապրիլի 24-ին կամ անոր շուրջ, կ'ոգեկոչէ Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակը: Եկեղեցական թէ քաղաքական տարբեր միջոցառումներով մէկ կողմէ կը ձգտինք յարգել այժմ սրբացած մէկուկէս միլիոն մեր նահատակներուն յիշատակը, իսկ միւս կողմէ ալ, դժբախտաբար, երթալով տկարացող փորձեր կը կատարենք արդարութիւն եւ հատուցում պահանջելու համար յանցագործ Թուրքիայէն եւ ամբողջ աշխարհէն՝ աւելի քան

մէկ դար առաջ մեր ազգովին կրած անդարմանելի կորուստներուն համար:

Այս տարի սակայն, այս յօդուածը կը գրենք ահազանգ հնչեցնելու համար եւ ստորագծելու, թէ համաշխարհային քաղաքական կրկնէսին վրայ այլեւս հայ ժողովուրդին համար տուեալները եւ տրամադրութիւնները անհամեմատօրէն աւելի լուրջ եւ մտահոգիչ են, քան եղած են երբեւիցէ, գրեթէ ամբողջ անցեալ մէկ դարուն ընթացքին:



Մինչ պարզապէս սովորութիւնը շարունակելով, արդէն իսկ ամէն կողմ կը կատարուին դասական կադապարով Ապրիլեան նշումները, այս յօդուածով կ'ուզենք առաւելագոյն ուժգնութեամբ ցնցել Հայաստանեան թէ՛ Սփիւռքեան դեկավար եւ պատասխանատու շրջանակները, յայտնելու համար, թէ այսօրուան պայմաններուն մէջ եթէ պարզապէս սահմանափակուինք եւ բաւարարուինք սովորական այսպիսի նշումներով, իսկապէս լրջութեան ահաւոր պակաս մը ցուցաբերած պիտի ըլլանք մեր ազգային սուրբ Դատին, մեր բիրաւոր նահատակներուն եւ մանաւանդ մեր հայրենիքի գոյութեան իսկ սպառնացող վտանգները զսպելու համար ունեցած մեր պարտականութեանց նկատմամբ:

Արդարեւ, բոլոր անոնց համար, որոնք անկողմնակալ եւ վերլուծողական սուր աչքով կը հետեւին հայ ժողովուրդին առնչուող ազգային քաղաքական ընթացիկ զարգացումներուն, ակնյայտ է, թէ վերջին շրջանին եւ յատկապէս վերջին տարուան ընթացքին, Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ ազգային դիմադրողականութեան գործօնները արագընթաց կ'երթան դէպի լուրջ տկարացում: Եթէ արտասովոր ջանքերով ու համագգային գիտակից ծրագրումով չկատարուին վերակազմակերպման լուրջ աշխատանքներ, դիմադրողականութեան այդ տկարացումը անխուսափելիօրէն պիտի յանգի իսկական անդառնալի ազգային ընդհանուր ամլացման:

Այս իմաստով առաջին հերթին չափազանց մտահոգիչ է այսօր կացութիւնը նոյն ինքն Մայր հայրենիքին մէջ:

Ներքին թէ՛ արտաքին ճակատներու վրայ տեղի ունեցող կարևոր զարգացումները ամէն օր աւելի կը տկարացնեն, դժբախտաբար արտագաղթով և այլ պատճառներով, այսօր երկրին եւ ժողովուրդին ունեցած արդէն իսկ դիրաբեկ ազգային դիմադրողականութիւնը:

Այս մտահոգիչ զարգացումներուն պատասխանատուութիւնը անխուսափելիօրէն եւ փաստօրէն առաջին հերթին կ'իյնայ օրուան իշխանութեան ուսերուն: Այստեղ կ'ուզենք ստորագծել, թէ այս նկատողութիւնը կը կատարենք բոլորովին անկախաբար որեւէ յատուկ անձի մը կամ կազմակերպութեան մը դէմ մրցակցական կամ այլ տեսակի պայքարի մը մասնակցելու կարճատես դիտաւորութենէն: Արդարեւ, Հայաստանի Հանրապետութեան Մայր հայրենիքին գոյութենական տագնապը այսօր շատ աւելի լուրջ է, քան մրցակցական կամ կողմնակցական որեւէ նկատում:

Քանի որ արդէն իսկ այս նիւթը կրկնակիօրէն արծարծած ենք թէ՛ մենք եւ թէ՛ ահագանգ հնչեցնող տարբեր աղբիւրներ, յիշեցման ձեւով, կարեւորագոյն քանի մը տուեալներն են միայն, որ պիտի թուարկենք:

Խօսելով ներքին ճակատին մասին, հայրենիքին ներքին կեանքին մէջ, բոլորովին անընդունելի եւ դատապարտելի են, թուրք-ազերի ակնյայտ ճնշումներուն տակ, բարձրագոյն մակարդակներու վրայ, իշխանութեանց կողմէ վերջերս առաջ քաշուող հակազգային առաջարկներու շարքը, որոնց կարգին՝ ազգային սրբագոյն խորհրդանշան Արարատ լեռը զինանշանէն վերցնելու առաջարկը, նոյնքան անընդունելի են դասագիրքերու մէջ ազգայնական աւանդական խրոխտ արտայայտութիւնները վերացնելու, Մահմանադրութենէն եւ պաշտօնական այլ արտայայտութեանց միջոցներէն պահանջատիրական դասական դրսետրումները վերացնելու առաջարկները, եւ այլն:

Արտաքին ճակատին վրայ, նոյնքան եւ աւելի մտահոգիչ է Հայաստանին ներկայիս վարած խեղճացած, պարտուողական քաղաքականութիւնը:



Արդարեւ, իշխանութիւնը, խաղաղութիւն հետապնդելու թէն անվիճելիօրէն ազնիւ պատրուակով, գործնականին մէջ որդեգրած է իր ռիսերիմ դրացիին տարածքային բոլոր պահանջներուն հնազանդօրէն եւ միակողմանի ենթարկուելու կործանիչ եւ մանաւանդ ապարդիւն քաղաքականութիւնը: Այս քաղաքականութեան մեծագոյն գոհը հանդիսացաւ՝ ամիսներ առաջ քանի մը ժամուան մէջ ամբողջ Արցախի կորուստը: Կործանիչ է այս քաղաքականութիւնը մանաւանդ, որովհետեւ ակնյայտ է, թէ ռիսերիմ Ալիեւին պահանջները վերջ չունին: Աւելի ճիշդը՝ անոնց իսկական վերջը Հայաստանի Հանրապետութեան ամբողջական վերացումն է:

Յաջորդաբար, խոր մտահոգութեամբ պէտք է նշենք, թէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան նորագոյն անհեռատես եւ անպատրաստ նախաձեռնութիւնը հանդիսացաւ Ապրիլ 5-ին՝ Պրիւքսէլեան գազաթնաժողովին ցուցադրական մեծ բեմադրութիւնը: Անոր յաջորդող օրերուն, արդէն իսկ ամէն օր քիչ մը աւելի կը յայտնուին այդ ժողովէն ակնկալուած ենթադրեալ մեծ արդիւնքներուն ետին գոյութիւն ունեցող, ընդհակառակը, իսկապէս ծանր եւ մտահոգիչ հետեւանքները:

Արդարեւ, իշխանութիւնը ենթադրաբար այլապէս օգտակար Պրիւքսէլեան 180 աստիճան դէպի Արեւմուտք շրջադարձը կատարեց, ակնյայտօրէն առանց ինքզինք պատրաստած ըլլալու այդ շրջադարձէն բխելիք ռազմական, դիւանագիտական եւ տնտեսական լրջագոյն հետեւանքներուն: Թէ՛ Հայաստանի իշխանութիւնները եւ թէ՛ ժողովուրդը, դժբախտաբար արագօրէն պիտի անդրադառնան, թէ քանի մը հարիւր միլիոն տոլարներու օժանդակութիւնը եւ անոնց հետ Հայաստանին ի նպաստ Պրիւքսէլի մէջ շտայլուած գովաբանական արտայայտութիւններն ու խոստումները խաբկանք մը կրնան մնալ միայն, քանի որ նոյն ժամանակ, ռազմական եւ ռազմագիտական աջակցութեան եւ ուղիղ պաշտպանութեան հաւաստիք չտրուեցաւ Հայաստանին:

Ահա այս բոլորը նկատի առնելով, Ապրիլեան լրջագոյն այս խոկումներուն առիթով, ստիպողաբար կը վերյիշեցնենք ոչ միայն Հայաստանի իշխանութեանց, այլ նաեւ ընդդիմութեան, մտաւորական, կուսակցական եւ այլ պատասխանատու շրջանակներուն, ինչպէս նաեւ ամբողջ ժողովուրդին, թէ այսօր աւելի քան երբեք բոլոր միւս նախաձեռնութիւններէն առաջ, Հայաստանը պէտք է գերագոյն առաջնահերթութիւն նկատէ մէկ կողմէ իր բոլոր կարող ոյժերու մասնակցութեամբ մշակել ազգային փրկութեան միացեալ քաղաքականութիւն մը, եւ, միւս կողմէ, ստեղծէ Հայաստանի սահմաններուն պաշտպանութեան համար ռազմական գերարդիական անխոցելի բանակ մը և համակարգ մը:

Այս երկու ազդակներու հզօրացումը ապահովելէն ետքն է միայն, պատերազմի բարձրագոյն մակարդակով պատրաստ ըլլալէն ետքն է միայն, որ Հայաստանը արդարօրէն կրնայ ինքզինքին թոյլ տալ ձեռնարկելու դիւանագիտական անկաշկանդ եւ յախուռն տարբեր գործառնութեանց:

Ապրիլեան մեր խոկումներուն միւս առանցքը կը վերաբերի հայ աշխարհի միւս բեւեռին, որուն մակերեսային հեշտութեամբ կ'ակնարկենք որպէս Սփիւռք: Այս մէկ բառով ակնարկուած մեր ժողովուրդին բազմամիլիոն մեծագոյն հատուածը, յաճախ կը մոռնանք, թէ տառացիօրէն տարածուած է մոլորակի գրեթէ ամբողջ մակերեսին վրայ: Հետեւաբար բոլորովին անիրատեսական է, երբ յաճախ պատասխանատու շրջանակներու մէջ եւ կարեւոր դիրքերու վրայ գտնուող անհասներ կը խօսին «Սփիւռքի կեցուածքին», «Սփիւռքի



խորհածին» կամ «Սփիւռքէն ակնկալուածին» մասին որպէս կարելոր ազգային միակտուր գործօն, որ պարտի տարբեր ձեւերով օժանդակել համազգային պահանջներու իրականացման:

Թանկագին հայրենակիցներ, Ապրիլեան այս օրերուն ժամանակն է որ Սփիւռքի մէջ ի վերջոյ լրջութեամբ եւ իրատեսութեամբ որդեգրենք այնպիսի կեցուածք մը, որ Սփիւռքը դառնայ իսկական կարելոր ազգային գործօն, որ կարող ըլլայ իր մեծ նպաստը բերելու հայրենիքին եւ ազգին գոյատեւման պայքարին:

Կրկնութիւն ըլլալով վերահաստատենք, թէ բազմամիլիոն անհատներով գոյացած Սփիւռքը իսկապէս հարուստ է մտաւորական ու նիւթական բարձր կարողութեան տէր եւ բացառիկ յաջողութեանց հասած անհատներով: Մանաւանդ՝ Հայ Սփիւռքը աւելի քան մէկ ամբողջ դար իր գոյութեան տարիներուն ընթացքին, բարեբախտաբար կարողացած է իր մէջ ստեղծել տարբեր ուղղութիւններ ունեցող քաղաքական, մշակութային, բարեսիրական եւ եկեղեցական կարելոր կազմակերպութիւններ, որոնց շնորհիւ է միայն, որ ան իրաւունք ստացած է կոչուելու «Հայ Սփիւռք»: Սակայն Սփիւռքի տարբեր այդ մասնիկներուն միջեւ եթէ կան տեղ-տեղ աւելի կամ պակաս համադրողական կապեր, իր ամբողջութեան մէջ ան կը մնայ մեծ հաշուով առաւելաբար ցրուած եւ հետեւաբար նաև համաշխարհային բեմին վրայ շատ փոքր կարողականութիւն ցուցաբերող համախմբում մը:

Հայ Սփիւռքին այս անկարողութեան կարծր փաստը խոր յուսախաբութեամբ ապրեցանք մանաւանդ անցնող տարիներուն եւ ամիսներուն ընթացքին: Մինչ Հայաստան եւ Արցախ, ամբողջ քաղաքակիրթ կոչուած աշխարհին անտարբեր աչքերուն տակ կ'ապրէին մեր պատմութեան ամենաողբերգական շրջաններէն մէկը, այնքան կարելոր նկատուած Սփիւռքը չկարողացաւ դոյզն իսկ ազդեցութիւն ցուցաբերել, թեթեւցնելու եւ նոյնիսկ առաջքը առնելու համար այդ ողբերգութեան: Այս գերկարելոր նիւթը ամիսներ առաջ շեշտուած կերպով արծարծեցինք այս էջերուն մէջ՝ կոչ ուղղելով Սփիւռքի բոլոր ղեկավար շրջանակներուն, քաջութիւն եւ համարձակութիւն ցոյց տալ նախաձեռնելու համար համադրուած սփիւռքահայ քաղաքական միացեալ կառոյցի մը ստեղծումը, որ օժտուի նիւթական, մտաւորական, օրինական եւ այլ, այսօր դիւրաւ մատչելի, բոլոր ազգակներով:

Վերջապէս, անշուտ այս բոլորին վերջնական նպատակն է, որ Սփիւռքի այս կառոյցը, գործակցաբար մեր վերը յիշած Հայաստանի համապատասխան մարմիններուն հետ, կազմէ **ՀԶՕԲ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱՂԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** մը:

Այսուհետեւ այդպիսի տոկուն համակարգ մը անհրաժեշտ է, որպէսզի լրատուական, դիւանագիտական, տնտեսական եւ ռազմական գետնի վրայ Հայաստանը կարենայ յաջողութեամբ դիմադրել յաջորդական տարիներուն ընթացքին իր դէմ կատարուելիք, նախատեսելի բոլոր յարձակումներուն:

Ապրիլեան խոհերու ծիրին մէջ ընդհանուր այս ակնարկին այս եզրակացութիւնը անխուսափելիօրէն շատ պարզ եւ տրամաբանական է: Սակայն անշուշտ գիտակից ենք, թէ անոր գործադրութիւնը իրատեսօրէն աննախադէպ ըլլալով՝ նոյնքան ալ շատ դժուար է: Սակայն, ինչպէս շեշտեցինք այս յօդուածին սկզբնաւորութեան, եթէ Հայ Աշխարհը բաւականանայ այս օրերուն կատարուող Ապրիլեան դասական նշումներով, այսօրուան իշխանութիւնը, ընդդիմութիւնը, կուսակցական, եկեղեցական կամ մտաւորական ամբողջ ղեկավարութիւնը հաւաքաբար պատասխանատու պիտի նկատուին, մօտ թէ աւելի



հեռուոր ապագային սպասուած գոյութենական՝ ողբերգական տագնապներուն բոլոր տխուր հետևանքներուն համար:

Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ ղեկավարութեան յաւակնութիւն ունեցողները, բոլորը, պարտին գերագոյն ճիգերով վար առնել նախատեսելի բոլոր պատնէշները, որպէսզի եթէ ոչ կատարելութեամբ, սակայն գոնէ մեծ չափով յաջողութեամբ դիմագրաւենք այս մեծ մարտահրաւերը, ապահովելու համար հայ պետականութեան արժանապատիւ վերապրումը, եւ մեր պարտքն ու յարգանքը իսկապէս կատարած ըլլանք մեր սրբացած բիրաւոր նահատակներուն յիշատակին:

Դոկտ. ԱՐՇԱԻԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ
Մոնթրէալ, Գանատա

ԾՂՕՏԸ, ՈՐ ԿՈՏՐԵՅ ՈՒՂՏԻՆ ՄԷՋՔԸ

Յակոբ Միքայէլեան



«Ծղօտը որ կոտրեց ուղտին մէջքը» արաբական ասացուածք մըն է, որ կը նշանակէ, թէ ուղտը այնքան բեռնուած էր, որ վրան ծղօտ մը երբ աւելցուցին, ուղտը չոքեցաւ, մէջքը կոտրուեցաւ: Այս առածը յիշեցի, երբ վերջերս

ազերիներուն պահանջած Տաւուշի չորս գիւղերն ալ յանձնելու որոշումը լսեցիմք: Չի բաւեր ցարդ մեր զիջածները, հիմա ալ 4 գիւղեր, որպէս «Բարի կամքի դրսետրում»...

Այնքան ենթարկուեցանք թշնամիին քմահաճ պահանջներուն, այնքան լռեցիմք անոր տարատեսակ ոտնձգութիւններուն, որ ալ յորդեցաւ համբերութեան մեր բաժակը եւ տեղին էր վերնագրուած ասոյթը: Երբ թշնամիին մօտ դեռ 23 պատանդ ունինք, որոնցմէ 8 Արցախի նախկին ղեկավարներն են, մենք, բարի կամքի փոխարէն, սակարկութեան չենք մտներ, նոր գիւղեր կ'ուզէ, անոնք ալ կու տանք, ի՞նչ կայ որ, գիւղ՝ շատ...: Չեմ հասկնար այս մեր ըրածը «բարութիւն» է, որ կ'օգտագործենք որպէս դիմակ մեր վախին՝ յանկարծ չյարձակին, չտալուն վերջը պատերազմ է: Ուրիշ բան չէ, պարզապէս վախկոտութեան արդիւնք է մեր այսքան տկար կեցուածքը եւ թշնամիին բոլոր սադրանքները բարութեամբ փոխադարձելը: Շաբաթ չ'անցնիր որ մեր զինուորներուն ուղղութեամբ թիրախատրումներ չըլլան թշնամի դիպուկահարներու կողմէ: Ազերին կը սպանէ ու կ'ըսէ, թէ կը պատասխանէ մեր զինուորներուն հրացանաձգութիւններուն, իսկ օտար դիտորդները սահմանի վրայ ի՞նչ կ'ընեն, կը քնանա՞ն, շախմատ խաղալով ժամանակ կ'անցընեն, օր մը իրենց արդար եւ կտրուկ վկայութիւնը պիտի չարտայայտէ՞ն:

Հաւատացէ՛ք շատ դժուար է տկար երկրի մը մէջ ապրիլ, ուր օր ու գիշեր խաղաղութիւն կը մուրան, իսկ թշնամին անվերջանալի պայմաններ կը դնէ խաղաղութեան դիմաց, այնպիսի պայմաններ, որոնք մեր կողմին համար անընդունելի ըլլան, որուն հետեւանքով լուծումը միայն պատերազմով ըլլայ: Պատերազմը սարսափեցուցած է մեր երկրի իշխանութիւնը, թերեւս իրաւունք ունինք, քանի ամէն անգամ ահագին նահատակներ կու տանք ու



անդադար կ'ընդարձակենք Եռաբլուրի գերեզմանատունը: Մակայն, կայ նաեւ արժանապատուութիւն ըսուածը, որ կը յենի քաջութեան վրայ, ոչ անպայման ուժի: Երկու տարբեր բաներ են քաջութիւնն ու ուժը, մէկը ոգեկանն է, միւսը՝ ֆիզիքական-առարկայականը: Չէ՞ պատահած, որ տկար պետութիւններ իրենց քաջարի կեցուածքով, որուն մէջ կ'իյնան քաղաքականութիւնն ու դիւանագիտութիւնը, կրցած են պատերազմը դադրեցնել եւ հաշտութիւն կնքել թշնամիին հետ: (Վաղը կը տեսնէք, թէ ինչպէս չյանձնուող պաղեստինցիս պիտի տիրանայ իր անկախութեան):

Մենք, այսօր իսկական Քրիստոնէական վարդապետութեան պատգամները կիրարկողներ դարձած ենք, թէեւ շատ կարեւորութիւն չենք տար եկեղեցիին ու եկեղեցականներուն, բայց մեր մէկ երեսին երբ հարուած կը ստանանք, միւս երեսնիս կը դարձնենք...

Ալ կը բաւէ, իշխանութիւնը ինքզինք կը համոզէ, որ վարած քաղաքականութիւնը ճիշդ է, որպէսզի հասնինք խաղաղութեան եւ մեր տարածքի ամբողջականութեան, երբ պատառ-պատառ փրցուած են մասեր մեր տարածքէն ու դարձած ազերիական հող: Իբր թէ մասնագէտներ պիտի չափեն-չափչփեն մեր հողերը եւ սահմանագատում կատարեն: Չեմ հաւատար անոր իրական ըլլալուն, քանի որ թշնամիին չափորոշիչները տարբեր են մերինէն եւ անշուշտ արդիւնքն ալ ի նպաստ թշնամիին պիտի ըլլայ: Չեւ հաւատար, քեզի՝ ելիր չափէ, պիտի ըսեն:

Միով-բանի կացութիւնը բաւական մտահոգիչ է. իմ կարծիքով մեր եւ Ատրպէյճանի միջեւ հաշտութիւն չի կրնար ըլլալ, զինադադար թերեւս, սակայն հաշտութիւն եւ յարաբերութեանց բնականոնացում՝ երբեք, որովհետեւ մեր միջեւ արիւն կայ թափուած, հող կայ բռնագրաւուած: Թշնամիին պայմաններն ու պահանջները վերջ պիտի չունենան. բազմաթիւ գիւղեր գրաւած է, նոր ցանկ մը ունի ուրիշ խումբ մը գիւղեր պահանջող: Տանք եւ վերջանա՞նք, բայց մնացա՞ծը, չէ որ ամբողջ Հայաստանը կ'ուզէ, չէ՞ որ ըստ իրեն ասիկա Հայաստան չէ, այլ արեւմտեան Ատրպէյճան... Չեմ գիտեր, ինդա՞նք անոնց տգիտութեան ու սանձարձակ ապուշութեան վրայ, թէ՞ լանք մեր ապիկարութեան, մեր խեղճութեան վրայ:

Մեր յուշարձանները, մեր դասագիրքերը, մեր արժանապատիւ կեցուածքը երբեք պիտի չյարմարեցնենք անոնց անվերջանալի պահանջներուն: Մեր քաջութիւնը շատ գոված ենք երգերով, պատմութիւններով, պարերով ու նկար-քանդակներով... ատենն է որ զգաստանանք, տէրը ըլլանք մեր գովասանուած քաջութեան ու հպարտութեան:

<http://www.kantsasar.com/news/50045-2/>

ՄԵՆՔ՝ ԱՆԺՈՂՈՎՈՒՐԴ ՀՈՂ, ԱՆՀՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԳԵՂԱՐԴ

Լիւսի Տօքսմէճեան, Երեւան, 27 ապրիլ 2024

«Եւ ի՛նչ էինք մենք
Ու երկիրը մեր,
... Զբօսաշրջի կ'իր հայրենիքում,
Հիր՝ իր սեփական օճախ ու յարկում.
... Անժողովուրդ հող դ,
Անհող ժողովուրդ»:



Բանաստեղծ Գեորգ Էմինի «Մենք» քերթուածին մեջ այս կերպ ներկայացուած հայերս այս ժամանակաշրջանին կը նշենք մեր անհող մնալուն տուն տուող դէպքերուն՝ Հայոց ցեղասպանութեան տարելիցը: Պատմութեան ընթացքին իր պետականութիւնը կորսնցուցած, մշտապէս հողեր կորսնցուցած Հայաստանը հազար ինը հարիւր սեւ տասնհինգին կորուստի իր հերթական փուլը կ'արձանագրէր, որով Գեորգ Էմինի բնութագրմամբ կը դառնար «անժողովուրդ հող», իսկ հայը՝ «անհող ժողովուրդ»:

Այսօրուան դրութեամբ կ'ընդունինք մեր անժողովուրդ մնացած հողերուն փաստը, որոնց մէկ ստուար մասը երէկ Թուրքիոյ տիրապետութեան տակ էր, իսկ այսօր այլ հաստուած մը՝ Ատրպէյճանի տիրապետութեան տակ: Սակայն չեմ ուզեր ընդունիլ, որ մենք անհող ժողովուրդ ենք: Հայաստանի Հանրապետութիւնը մեր հողն է, որուն ամէն մէկ հատիկին համար կեանքի գնով պայքարած ժողովուրդ ենք: Ինչքան զոհեր, արիւնի ու քրտինքի ծովեր ենք տուեր, որ պահենք այս հողը մի բուռ,– կ'ըսէ Համօ Սահեան:

Մենք անհող ժողովուրդ չենք, սակայն ճիշդ է, դժբախտաբար, աշխարհասփիւռ հայոց մէկ զգալի մասը՝ որպէս զբօսաշրջիկ կ'այցելէ իր հայրենի հողերը, հիւրի պէս կը ժամանէ իր սեփական օճախը: Եւ աւելի մեծ դժբախտութիւնը այն է, որ կը հաւատան, թէ այս մտածելակերպով ու վարուելակերպով իրենք զօրավիզ են Հայրենիքին ու պաշտպան՝ անոր իրաւունքներուն:

Հայոց ցեղասպանութեան մասին շատ անգամներ կտրուկ գաղափարներով կ'արտայայտուի ի մասնաւորի սփիւռքահայր: Տարիներով երգեցինք «սուլթան կ'ուզէ ջնջել մեզի», «խեղճ մշեցին մեռաւ լալով» եւ մեծ մարդասպանին՝ Հայաստանը քանդելու եւ հայ անունը ջնջելու տուած հրամանին մասին: Նաեւ խօսեցանք թուրքը ծունկի բերելու, Մթամպուլը արեան ծով դարձնելու, մեր բռնագրաւեալ հողերը վերադարձնելու մասին՝ «ուզեն-չուզեն ետ պիտի տան» ըսելով: Այս բոլորը Հայոց ցեղասպանութեան դառն



իրողութենէն բխած բնական հոգեվիճակներ են, որոնց ազդեցութեան տակ մնացած է հայ ժողովուրդը մինչեւ օրս:

Եւ այդ պատճառով ալ Գեորգ Էմին իր «Մենք»ին մէջ կու տայ «կէս»ի գաղափարը: Ան կ'ըսէ «Մենք խո՛ւլ ենք կիսով... Մեր ականջներում Հայոց պատմութեան քառ սն է խշշում»: Այդ քառսի խշշոցը երբեք պէտք չէ դադրի, որովհետեւ մենք պէտք չէ դադրինք մեր պատմութիւնը յիշելէ, բայցեւ մենք պէտք չէ խլանանք եւ այլ երկիրներու, միջազգային հանրութեան հետ յարաբերինք ցեղասպանուած ժողովուրդի հոգեցնցման իրավիճակը որպէս առանցք ունենալով: Անհրաժեշտ է, որ Հայոց ցեղասպանութեան ընկալումը յարաբերենք մեր ունեցած փաստին՝ Հայաստանի Հանրապետութեան պետականութեան շահերուն հետ:

«Մենք կոյր ենք կիսով»: Ճիշդ է, մեր աչքերը միշտ թաց եղած են արցունքով եւ աղօտ տեսած ենք միշտ, բայց կորուսեալ հայրենիքի շարունակական փնտռտուքը պէտք չէ մեզ կուրացնէ՝ չտեսնելու մեր ներկան՝ Հայաստանի Հանրապետութիւնը, որուն իմաստուն եւ օրինական քաղաքականութիւնը պէտք է ըլլայ, առաջին հերթին, ցեղասպանութիւններու կրկնութեան բացառումը եւ հզօր պետականութիւն ունենալու հրամայականը: Պէտք չէ թոյլ տանք, որ այս պատճառով չտեսնենք կամ չտեսնելու տանք աշխարհաքաղաքական իրադարձութիւնները, ներկայի իրողութիւններն ու գործօնները, պատմական ընթացքներն ու կանխատեսուող հորիզոնները:

23 Ապրիլ 2024-ին, այս մտքերով կը մտնէի Ծիծեռնակաբերդի խորհրդալի մատուռէն ներս, «որ կը կանգնի արեւուն տակ ու լուսնին՝ իբրեւ անթաղ նահատակաց Յուշարձան» (Մուշեղ Իշխան): Արդէն չորս տարի է, Հայոց ցեղասպանութեան տարելիցին կ'այցելեմ Ծիծեռնակաբերդ ու կ'ունենամ հետեւեալ խոկումը. չկայ ռեւէ գիտակից հայ, որ կրնայ մոռնալ ու չյիշել եղեռնագարկ եղած իր նախնիները], չկայ ռեւէ հայ, որ չհասկնայ, թէ ինչ կը նշանակէ իր հողերէն քշուիլ ու հայրենագրկուիլ, չէ՞ որ անոր կրկնօրինակը տեղի ունեցաւ տակաւին վերջերս՝ Սեպտեմբեր 2023-ին: Չկայ ռեւէ հայ, որ չուզէ վերականգնել իր ամբողջական հայրենիքը: Բայց ինչպէ՞ս: Հազարումէկ հարց կը խճողեն միտքս. Թուրքիան ցեղասպանութիւն գործած ըլլալը ընդունելու եւ ներողութիւն խնդրելու քաջութիւնը ունենայ նոյնիսկ, պիտի զիջի՞ միջազգայնօրէն իրը ճանչցուած՝ հայկական հողերէն, իսկ հայը պիտի կռուի՞ ուժով ձեռք բերելու համար զանոնք: Այս բոլորը գիտակցելով, ես ինչ պէտք է խոստանամ մեր նահատակներուն: Մոռցողը չեմ, որ «յիշել» խոստանամ, բայց պահանջը... հատուցման պահանջը... Ինչպէ՞ս ընել, որպէսզի գործնական ըլլայ այդ պահանջը եւ չմնայ միայն ամբոխահաճութեան նեղ շրջանակին մէջ, ինչպէս որ դժբախտաբար տեսած եմ Սփիւռքի մէջ:

Հազար ներողութիւն եւ քաւ լիցի, եւ երբեք չեմ նսեմացներ աշխատանքը այն բազմաթիւ անձնուրաց եւ ինքնագոհ տղոց, որոնք Ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու եւ միջազգային ընտանիքին ուշադրութիւնը անոր վրայ սեւեռելու համար չխնայեցին անգամ իրենց երիտասարդութիւնն ու կեանքը: Չեմ թերագնահատեր Ցեղասպանութեան իրողութիւնը եւ անոր ճանաչումը լոյսին բերելու համար հիմնուած գրասենեակներուն եւ




յանձնախումբերուն աշխատանքը: Բայց ի՞նչ էր ճանաչումին յաջորդող քայլը, ի՞նչ պետք էր ըլլար մեր յաջորդ ընելիքը: Վստահ որ այդ մէկը թրքական դրօշակները այրելով, Թուրքիոյ հանդէպ հայիոյանքներ տեղացնելով, թուրքը ծունկի բերելու պոռոտախօս լոգունգներով չեն իրականանար: Պահանջատիրութիւնը 109 տարի է ԱՅԴ ձեռով չիրականացաւ. ուրեմն, բացի ցեղասպանին նկատմամբ ատելութեան զգացումը վառ պահելու ձգտումներէն, պահանջատիրական այդ գործելաոճը ապարդիւն էր:

Ես չեմ գիտեր աշխարհաքաղաքական զարգացումները ի՞նչ կը թելադրեն հետագային. Հայաստանի Հանրապետութիւնը կրնա՞յ որպէս պետութիւն հողային օրինական պահանջներ կայացնել՝ ուղիղ առճակատում յայտարարելով տարածաշրջանին մէջ անդրժեղի կշիռ ունեցող Թուրքիոյ հետ, թէ՞ դիւանագիտութիւնը իր այլ խօսքը կ'ունենայ: Բայց քաջ գիտեմ, թէ որպէս պետութիւն եւ ազգ մեր ԳԵՐԱԳՈՅՆ նպատակը պետք է ըլլայ ուժեղ ու բարեկեցիկ Հայաստանի Հանրապետութիւն ունենալը: Եւ այդ մէկը կը պահանջէ անկախութեան եւ ինքնիշխանութեան պահպանում, պատասխանատու միտք, կամք, խորիմացութիւն, իր պետութեան թիկունք կանգնող հայ ժողովուրդ, որ առաջին հերթին պիտի հաւատայ, թէ պայքարելու առաջին ռազմավարութիւնը **անհող ժողովուրդ** չըլլալն է:

23 Ապրիլ 2024-ին ես մեր նահատակներուն խոստացայ այս. այնպէս ապրիլ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ ապրելով՝ իմ կարողութեանս սահմաններուն մէջ սատարեմ ուժեղ, բարեկեցիկ ու օրինապահ երկիր ունենալուն:

ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄ և ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆ



Ապրիլ ամիսը անցաւ պարունակ սուգով եւ Մեծ Եղեռնի նահատակներու ոգեկոչումով: Մայիսը արդէն բերկրալի ամիս մըն է վերածնունդի՝ շնորհիւ հայոց տարած փառաւոր ճակատագրական ու ջախջախից յաղթանակներուն: 26 Մայիս 1918ին՝ Անդրկովկաս ներխուժող թուրքերու հրոսակները պարտութիւն կրեցին Սարդարապատի, Պաշ-Ապարանի և Ղարաքիլիսէի ճակատներուն վրայ: Երկարատեւ տարիներու ջարդերէն և տեղահանութիւններէն ետք, հայերը առաջին անգամ ըլլալով կը յաղթէին իրենց դարաւոր ռիսերիմ թշնամիներուն: Հրաշքի համագոր բան մըն էին սոյն յաղթանակները և անկախութեան հռչակումը՝ հինգ

ու կէս դարեր տեւած հայրենագրկումէ և ստրկութենէ ետք: Ասիկա ուրիշ ոչինչ էր, քան առասպելական Փինիկի յառնումը աներակներու մոխիրներուն տակէն: Հայու աննկուն կամքն ու նկարագիրը վերջապէս արդարացուց դարերու կրած տառապանքն ու սպասելիքները և մանաւանդ ձգտումը պետականութեան՝ Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ի վեր: Կարճատեւ անկախացումէն ետք սակայն, մենք ունեցանք եօթանասունամեայ պարտադրուած սովետական ընկերվարական ապահով հայրենիք մը՝ ահագին զրկանքներու և ստալինեան քաղաքական հալածանքներու ի գին: ՀԽՍՀ-ը հիմք հանդիսացաւ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան, որ միակ գրաւականն է մեր ազգի գոյատեւման: Երբոր դանակը ոսկորին հասեր էր՝ հայոց առջեւ ուրիշ այլընտրանք



չկար, քան պահել մեր ինքնությունությունը և պայքարիլ յանուն մեր պատմական արդարություն: Մենք մնացել էինք թրքական մահիկի և սովետական մանգաղի միջև:

Հայկական ցեղասպանության օր ըստ օր է աճող միջազգային ճանաչումը կը գտնականորէր իւրաքանչիւր հայի կեանք եւ զինք կը համակեր անհուն երախտագիտութեամբ մեզի հետ բարեկամ երկիրներուն հանդէպ: Սակայն թուրքաշին տակաւին կը խուսափէր առերեսուիլ իր ոճրագործ անցեալին հետ և իրերը անուանել ընդունուած իրաւագիտական եզրոյթով: Թուրքին համար պատահածը ցեղասպանություն չէր, այլ թիրիմացություն մը թուրք տիրոջ եւ հայ հպատակներուն միջև, որուն ընթացքին զոհ զացին հաւասար թիւով հայեր ու թուրքեր: Հակառակ ատոր, թուրքը դարձեալ չցանկացաւ հայապատկան մշակութային կոթողներն ու անշարժ գոյքերը վերադարձնել նախկին տէրերուն, կամ վնասը հատուցել նահատակ զոհերու ժառանգորդներուն: Օսմանեան կայսրութեան փլուզումէն ի վեր, մինչեւ Աթաթուրքի նոր հանրապետութեան հիմնումը Լոզանի դաշնագիրով 1923-ին՝ աւելի քան 1,5 միլիոն անմեղ հայեր նահատակուեցան իրենց բնօրրանին մէջ կամ ալ քշուեցան Արեւմտեան Հայաստանէն ու Կիլիկիայէն դէպի Միւրիոյ Հասարայի և Տեր-Էլ-Ջօրի անհիւրնկալ անապատները : Հայկական Բարձրաւանդակը դատարկուեցաւ իր երբեմնի զուտ հայկական բնակչութենէն: Ի՞նչ էր սա, եթէ ոչ ծրագրուած ու կանխամտածուած ցեղասպանություն: Վերջինը, ըստ ՄԱԿ-ի ցեղասպանության խարթիայի, կը սահմանէ ծանրագոյն պատիժ՝ բռնարարքները ծրագրողներուն ու գործադրողներուն հանդէպ եւ նիւթական ու բարոյական վնասահատուցում զոհերու ժառանգորդներուն: Տասնեակ տարիներով անպատիժ մնացած թուրքերը աւելի լկտիանալով ժխտեցին իրենց գործադրած անցեալի մեղքերը հայերուն հանդէպ եւ շարունակեցին իրենց վրէժխնդրությունը նորանկախ Հայաստանէն: Մինչեւ այսօր կը շարունակուի Հայաստանի Հանրապետութեան տնտեսական շրջափակումը երկու կողմերէն եւ դեռ ալ կը պահանջեն «ատրպեճանական հողերու» վերադարձ: Անշուշտ իրենց խելքը միտքը տարածաշրջանի հայութեան վերջնական բնաջնջումն է:

Ոտնձգություններու առաջքը առնելու համար, ամբողջ աշխարհը պէտք է սատար կանգնի անիրաւուած հայերու կողքին, ճանչնայ հայոց ցեղասպանությունը թուրքերու և ազերիներու ձեռքով եւ պաշտպանէ մեր անառարկելի իրաւունքները՝ խաղաղ ու ստեղծագործ աշխատաքով ապրելու մեր ազատագրուած պապենական հողերուն վրայ: Հայաստանի Անկախ ու Միացեալ Հանրապետությունը պարտաւոր էր ունենալ Հարաւային Կովկասի ամենէն մարտունակ և գերարդիական զենքերով օժտուած բանակը, որովհետեւ մեր հարեւանները միայն ոյժի լեզուէն կը հասկնան: Դժբախտաբար այդպէս չեղաւ եւ նորանկախ Հայաստանը չյաջողեցաւ աշխարհին համոզել, որ Արցախը կը պատկանէր Հայաստանին, ոչ ալ առաջինը ճանչցաւ ազատագրուած Արցախի հանրապետությունը: Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահները զբաղած էին երկիրը կողոպտելով և գոյք ընդդէմ պարտքի՝ Ռուսաստանին յանձնելով: Տասները ինքնավստահ էին թէ ռուսերը մինչեւ վերջ պիտի պաշտպանէին հայերու շահերը ընդդէմ ազերիներուն: Չէ՞ որ անոնք մեր յաւերժական դաշնակիցներն էին և անկեղծ բարեկամները:

Եկաւ երկրորդ արցախեան պատերազմը եւ հայերս կորսնցուցինք ամէն ինչ: Ռուսերը դաւաճանեցին իրենց դաշնակից հայերուն եւ նոյնիսկ օգնութեան չհասան, երբ ազերիները սկսան ներխուժել Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ գիւղերն ու շրջանները: Ի վերջոյ արցախահայերը լքեցին իրենց հայրենիքը՝ ազերիներու գրաւած իրենց սիրելի Արցախը:



Իսկ հիմա ի՞նչ կրնայ ընել մեր ժողովրդավար Հայաստանի նոր կառավարութիւնը: Օգտագործել իր բոլոր լծակները մերձենալով Արեւմուտքին և վարել ինքնանկախ քաղաքականութիւն՝ երբեք յոյսերը չկապելով Փութինի Ռուսաստանին հետ: Ան կը շարունակէ արդարութեամբ ու ժողովրդավարութեամբ կառավարել մեր հայրենիքը և լեզու գտնել իր անմիջական հարեաններուն հետ: Բարեբախտաբար Արեւմուտքը կը պաշտպանէ Հայաստանի ինքնուրոյն անկախութիւնը բնակալ հարեաններուն դէմ: Յամենայնդէպս Հայաստանը առաջուան պէս մեկուսացած չէ այլեւս համաշխարհային թատերաբեմէն և որոշած է ամէն գիտով պահպանել իր ձեռք բերած անկախութիւնը և համաձայնիլ սահմանազատման և սահմանագծումի: Առայժմ Արեւմուտքն ու ՄԱԿ-ը կը քաջալերեն Հայաստանի որդեգրած խիզախ քայլը: Միակ դժգոհը Ռուսաստանի Դաշնութիւնն է, որ գրեթէ ամէն օր վիրաւորանքներ կը հասցնէ իրմէ հեռացող նոր Հայաստանին: Ան ի գործ կը դնէ ներքին դաւաճան երրորդ շարասիւնը, որ կը սաստկացնէ իր ճնշումները Փաշինեանին գլխուն: Փողոցային բողոքները դարձեալ կը պահանջեն վարչապետի հրաժարականը՝ այս քանիտրորդ անգամ: Սակայն վարչապետը անդրդուելի կը մնայ իր պաշտօնին վրայ և ամէն գիտով կը պաշտպանէ Հայաստանի անկախութիւնը՝ տարուէ տարի ապահովելով տնտեսական աճ:

Անշուշտ այս բոլորը կուգայ ծանր գիտով մը: Նախընտրելի պիտի ըլլար որ Հայաստանը հետապնդէր համայն հայութեան ազգային շահերը և պահանջատէրը դառնար մեր արդար դատին: Առանց միասնականութեան Հայաստանի, Արցախի և Սփիւռքի միջեւ, մենք չենք կրնար հասնիլ մեր պատմական իղձերուն: Սակայն Նիկոլ Փաշինեանը իրատես է եւ կընէ կարելին դուրս գալու համար ներկայի ճգնաժամէն: Վերջապէս ինքը ՀՀ ընտրեալ վարչապետն է քանի մը տարիով և պատասխանատու է ՀՀ-ի քաղաքացիներուն առջեւ: Քանի որ ընտրագանգուածը իրեն վստահեր է երկրի դէկը՝ անոնք պատրաստ են դիմակայելու ժամանակաւոր դժուարութիւններուն: Հարկ եղած պարագային ան ընդդիմութեան կրնայ վերյիջեցնել նախկին իշխանաւորներու արատաւոր անօրէնութիւնները: Ան կրնայ «արտառոց» միտքեր արտայայտել, օրինակ Արարատը մերը չէ. հետեւաբար մեր խորհրդանիշը չի կրնար ըլլալ: Մէկ է, ընդդիմութիւնը ուժեղ չէ եւ նոր ըսելիքներ չունի: Ան միայն ունակ է հակիթին մէջ մագ փնտռելու: Ամենակարեւորը այսօր խաղաղութեան պահպանումն է և ամրապնդումը մեր պետականութեան եւ ազատ ու անկախ ապրելու այս բուռ մը հողին վրայ:

ԱՐԱՄ ԱՃԷՄԵԱՆ

28/4/2024

(ԻՐ ԴԻՄՍՏԵՏԻ ԷՋԷՆ)

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԳԱՐՈՒՆՆ ԻՄ ՄԷՋ

Գարուններէս ծաղկափթիթ՝
Գո՛յն-գո՛յն ժպիտ ինծի մնաց,
Բողբոջներէն վարար, յուրթի
Զարթօնքի շո՛ւնչն ինծի մնաց...

Դաշտ-անդերու վատ ծաղկունքէն՝
Թիթեռներու երա՛զն մնաց,
Թռչուննեո՛ւ ժիր դայլայլէն՝
Սէր-տարփանքի հե՛ւք մը մնաց...

Զեփիւտի մեղմ գգուանքներէն՝
Քնքշութեան բո՛յր մը ինձ մնաց,
Գետակներու շառաչներէն՝
Կեանքի շէնշող հո՛սքը մնաց...

Գարունն իմ մէջ, ես՝ գարունին,
Դեռ կենսատրոփ ես վարարիմ,
Ի՞նչ փոյթ հեռու եմ գարունէն,
Ան հոգւոյս մէջ կ'ապրի յաւե՛րժ:
25/3/2021

.....

ԵՐԱՆԻ ԱՆՈՐ

Երանի՛ անոր, ով գիտէ տոկալ
Կեանքի հողմերու ցուրտին, խորշակին,
Տագնապներուն բիր, ցաւերուն դաժան,
Մընալ շիփ-շիտակ, հոգիով վճիտ...



Երանի՛ անոր, ով գիտէ ժպտիլ,
Երբ ամբոխը կոյր կ'արհամարհէ զինք,
Եւ չգոռոզնալ տեղի-անտեղի,
Երբ նոյն ամբոխը ծափահարէ զինք...

Երանի՛ անոր, ով չի խոնարհիւր
Դիրքին, պաշտօնին ու սին արծաթին,
Կը կառչի վսեմ իր սկզբունքին
Եւ իր պատիւին անտեղիտալի...

Ո՛վ չի խնկարկեր սուտ աստուածներուն
Փառքի, ոսկիի եւ մամոնայի,
Չի ստրկանար աթոռին նկուն,
Շահն ու հաշիւը՝ կարգած իր ուղին...

Եւ գիտէ մնալ ազատ ու արդար
Բիւր- բիւր դաւերուն, խարդաւանքներուն,
Անսալ լոկ խղճին, լուսաբաղձ հոգւոյն
Ու մընալ միշտ վեհ ու գերագոյն Մարդ...
17/4/2021

.....

ԱՆՅԱՂԹ ՈԳԻՈՎ

Եւ դուն դիմացար, ժողովուրդ հայոց,
Անմար եռանդով, աննկուն կամքով,
Քու վերապրելու խորին խորհուրդով,
Քու Մեծասքանչով ու սուրբ հաւատքով...
Կերտեցիր փառքը լոյսիդ սխրանքին,
Քու արարչական էութեան ոյժին,
Բարւոյն, ազնիւին վեհ յաղթանակին,
Որ շողշողաց միշտ՝ հոգւոյդ երկնքին...
Ու թէեւ խոցուած ու արիւնաքամ,
Ծառացար հզօր, աշտարակուեցար՝
Նենգ ոսոխին դէմ, որ դեռ կը սպառնար
Քեզ ի սպառ ջնջել բեմէն պատմութեան...
Հրացայտ ոգիդ ժայթքեց հո՛ւր, լաւա՛,
Դարձաւ հզօր բռո՛ւնցք թշնամւոյն դիմաց,
Մարդարապատի, Բաշ-Ապարանի՝
Մահու եւ կենաց մարտերուն մէջ բիրտ,
Տարաւ յաղթանակ հըրաշանման,
Խըլեց ոսոխէն հողն իր սրտաչափ,
Սրտի չափ փոքրիկ ու սրտի չափ թանկ,
Կերտեց պետութիւն՝ երաշխիք վաղուան
Որ դեռ պիտ' մեծնայ ու հզօրանայ,
Դառնայ միացեալ, անկախ Հայաստան,
Մեր Մեծ Երագին անսասան վկան...



Եւ ազգս ամբողջ դեռ պիտի դրոշմէ
Իր խօսքը հատու դարի ճակատին՝
Լոյսին եւ բարւոյն յաղթանակ վսեմ,
Իր արարչագործ խորհուրդով խորին,
Մնայ ճամբորդը յաւերժի ճամբին...
23/4/2020

.....

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒՆ
Ցաւոյ տարագիր ո՛չ մէկը զգաց,
Հայրենագուրկի մրմուռը կըրա՛կ,
Որ միշտ քեզ այրեց ու մըխա՛ց, ծըխա՛ց
Ուրախութեան մէջ, թէ ալ տրտմութեան...
Մարդիկ ժպիտիդ միայն նայեցան,
Արտաքին տեսքիդ որ կը շողշողար,
Իսկ ներաշխարհիդ մնաց փակ տարածք,
Անշէջ կըրակէդ դարձած լո՛յս խորան...
Հոն վառեցիր դուն մումերն հաւատքի՛դ,
Մոմերը յոյզի՛դ, յոյսի՛դ, տագնապի՛դ,
Ուխտեցիր մնալ միշտ հաւատարիմ
Բառի՛ն ու բանի՛ն, լեզուի՛ն ու գիրի՛ն,
Քանզի լոկ անոնք ցո՛լքն էին վճիտ
Խլուած, կորուսեալ քու հայրենիքիդ...
Ու թէ լքէիր բառն ու խօսքը սուրբ,
Ի՞նչ պիտի մընար հողէն հայրենեաց,
Ոգիէն անոր, որ զերթ էութի՛ւն
Մնաց քեզի հետ որպէս շո՛ւնչ անմար...
Վերջին յոյս է սա, պիտ՛ չնահանջե՛ս,
Պիտ՛ պահես լեզո՛ւդ, աչքի լոյսի պէս,
Որպէս ոգեղէ՛ն հայրենիք լուսէ,
Զոր պիտի կըրես սրտիդ, հոգւոյդ մէջ,
Պիտի գայն կըրես շրթանցդ վրայ,
Բոյրովը անոր քիմքդ պիտ՛ օծես,
Հիւթովը անոր պիտ՛ սնիս վարար,
Մերունդէ-սերունդ գայն պիտ՛ փոխանցես:
30/4/2021

.....

ԻՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ
Իմ հայ ժողովուրդ, դուն պիտի քալես
Հայեացքդ յառած սարիդ երկնամերձ,
Որ երկինք-երկիր իրար կը զօդէ,
Արարիչին Գահն կարծես կ'որոնէ...

Պիտ՛ քալես դէպ՛վեր կամքով անկոտորում,
Ճակատագիր է տրուած ի վերուստ,
Բարձրաւանդակիդ ճամբան է այդպէս,



Մարեր են վսեմ քու հողդ լուսէ...

Թող գայլերն ոռնան դաշտավայրին վրայ,
Դուն պիտի փայլիս սարահարթիդ վրայ
Ճառագայթումով ոգիիդ հզօր:
Մա է կոչումդ, ի՛մ ազնուատոհմ:

Թող կամքդ երբեք չերերայ յանկարծ,
Ուժ քաղես դուն միշտ ցի՛ց, ցի՛ց ժայռերէդ,
Երկնամերձ, լուսէ, վեհ գագաթներէդ,
Որոնք լոյս կ'ըմպեն ու չեն յագենար:

Լոյսդ տարածէ, փարատէ խաւարն
Լեռներ սասանող հաւատքով անխախտ,
Լոյսէդ թող կուրնայ ոտիւր վայրագ,
Թէ չկարենայ լոյսիդ դիմանալ:
30/4/2021

.....

ԿԵԱՆՔԸ

Կեանքն է երագ, կու գայ-կ'երթայ ասուպի պէս, ի՛նչ ընես,
Թէ որ բռնես, ափերուդ մէջ կրնայ փշրիլ, ի՛նչ ընես:

Պիտի ըմպես իր բաժակէն բորբ արեւի ճաճանչներն
Եւ պիտ' մնաս միշտ ծարաւի իր համբոյրին հըրակէդ:

Արշալոյսին ծիծաղագէդ պիտի վազես ետեւէն,
Ժամանակը կարծես չկայ, անգոյ բան է, պիտ' կարծես:

Պիտի այրիս իր հուրքերէն ոսկի ու կրակ սիրահեւ,
Թիթեռին պէս պիտի այրես քու թելերդ իր լոյսէն:

Ու այրելով լոյս պիտի տաս, պիտի սպառիս շիթ առ շիթ,
Բաշխուելով պիտ' արբենաս, սիրալոյսով վարարիս:

Ծաղկէ ծաղիկ պիտ' ուստոստես, անոնց նեկտարն հաւաքես,
Մեղր շինես ու զայն բաշխես միշտ անհատոյց, մեղուին պէս:

Ժամանակի թաւալքին հետ, իմաստութեան հիւլէներ
Թէ հաւաքես ճամբաներէդ, բախտաւոր ես, պիտ' կարծես:

Շուտով արդէն հորիզոնին մայրամուտ է հրաշագէդ,
Ժամանակը պիտի յուշէ որ ա՛լ արդէն շատ ուշ է:

Պիտ' զարմանաս թէ ե՞րբ անցան զարուն, ամառ սիրագէդ,
Պիտ' թովոաս բայց տակաւին աշնան բոցովը հուրէ:



Տերեւ-տերեւ պիտ' դալկանաս ու մերկանաս հրապոյրէդ,
Պիտի պարզես մերկ թեւերդ դէպ' երկինքը լուսագեղ:

Գուցէ միայն այն ատեն դուն հասկնաս կեանքն ի՞նչ է,
Երբ երազը ա՛լ աւարտի սրտիդ վերջին տրոփին հետ:
ԵՐԱՆ
28/4/2024
.....

ՏԵՄԻԼՔՍ

Գրիչը ձեռքիս զերթ սուր ու թուր կ'ուզեմ մեկնիլ երբ ժամն հնչէ,
Հայեացքս լուռ մեր վեհ Լեռան եւ անկոտրում կամքով ժայռէ..

Այդպէս եմ ես ապրեր կեանքս թիավարելով հոսանքն ի վեր
Կոյր ամբոխին խելակորոյս՝ միտքով, կամքով թմբիրի մէջ...

Հոգւոյս լոյսը վառ եմ պահեր ու աներեր պայքարեր եմ
Ոտքս ճանկռող խութերուն դէմ, վեր եմ ելեր գառիվերէն...

Լոյս եմ քաղեր ծաղիկներէն, վառ աստղերէն, արծաթ լուսնէն,
Պլպլացող յոյսիս ճրագը պաշտպաններ եմ բիրտ հողմերէն...

Մենութեան մէջ, միայնութեան, կենաց Բանն է եղեր ընկեր,
Սփոփանք դարձեր տառապանքիս, սրտիս վերքն է բալասաներ...

Ցաւը ցեղիս իմ հնամեայ քուրայիս մէջ ոյժ է դարձեր,
Անվհատ կամք մը պայքարի ճակատագրի մրրիկին դէմ...

Քալեր եմ իմ ճանապարհէս մէջքս ուղիղ, գլուխս ձիգ
Չեմ ծոմներ յանուն փառքի, դիրք ու փողի, ծափ-ծնծղայի...

Լոյսն եմ ըմպեր արեգակն շոայլօրէն եւ անյագուրդ,
Անով օծեր սէգ ճակատս, սիրտս, հոգիս լուսահամբոյր...

Ու ես գիտեմ կեանքիս կաճանն զիս պիտ' տանի հեռուն լուսէ,
Ուր ծագելիք նոր արշալոյսն պիտի փըռէ ոսկի շողեր:
14/4/2024

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ՝ ԱՆՄԱՀ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ (1874-1915)

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ



Յոբելէնական թուականներ կան, որոնք անկլինադարձային ըլլալով հանդերձ կ'ապահովեն նաեւ տուեալ ժողովուրդին գոյութիւնը, յարատեւութիւնը, բարգաւաճումն ու կենսունակութիւնը: Ու մեր դարաւոր պատմութեան մէջ, այս օրերուն, այդ թուականներէն ամենէն էականն է 1915ը, որ արդէն մեր հաւաքական գիտակցութեան վրայ իր հաստատ ու ամուր կնիքը դրած է:

Ինչո՞ւ յանկարծ այս նախաբանը: Որովհետեւ, այս տարի՝ 2024, նաեւ Ռուբէն Զարդարեանի ծննդեան 150ամեակն ալ է:

Սակայն ո՞վ է ա՛յս գրողը, ա՛յս մեծանուն մտաւորական, արձակագիր, գրականագէտ, քննադատ, թարգմանիչ, տաղանդաւոր մանկավարժ, խմբագիր եւ հայ լեզուի ու գրականութեան ուսուցիչը, որ իր հասուն գրիչով, հայ ժողովուրդի ազատութիւնը խնկարկեց բռնատիրութեան լուծին դէմ: Մէկ խօսքով, ժողովուրդին ծոցէն ծնած գաւակ մը, իրապաշտ գրող մը, որ շատ լաւ գիտէր հայուն կեանքի բարքերը, ասանդութիւնները եւ հոգեւոր հարստութիւնները:

Եւ ահա՛, Ռուբէն Զարդարեան:

Յստակ ու մեծատառ անուն մը: Տաղանդաւոր հայ գրող-մտաւորական-հեղինակ մը: Վաղուան հայ գրականութեամբ մտահոգ խարբերոցի մտաւորականներէն մէկը, որ միշտ գրեց ջերմութեամբ, հաւատքով եւ մեր գրականութեան բերաւ ներշնչման նոր նիւթեր, հայրենի գիւղով, հայրենի հողով, գաւառով եւ մանաւանդ հայ գիւղացիով լեցուն:

Քանի մը տողերով ծանօթանանք մեր գրագէտ-ուսուցիչին:

Ես զինք «ճանչցայ» տակաւին Ազգային նախակրթարանի նոր շրջանաւարտ տարիքիս, երբ Պոլսէն, մօրս ազգականներէն մէկը, իբրեւ նուէր ինծի կը դրկէր Զարդարեանի «Մեղրագետ»ներէն մէկական օրինակ:

Ան ծնած է 1874 Սեւերիկ քաղաք՝ Տիգրանակերտ: Երկու տարեկանին, ծնողքին հետ հաստատուած է Խարբերդ: Իր տարրական կրթութիւնը ստացած է իր գիւղին մէջ, ապա աշակերտած է համանուն խարբերոցի դաստիարակ-ուսուցիչ Թլկատինցիին, Խարբերդի Ս.



Յակոբայ թաղին Կեդրոնական վարժարանին մէջ: Եղած է աղքատ ընտանիքի զաւակ: Իր իսկ բացատրութեամբ, իրենց տունը՝ «երկու-երեք աղիւսով, քանի մը տախտակով շինուած խրճիթ»: 1892-1905ին Խարբերդի մէջ եւ այլուր զբաղած է ուսուցչութեամբ, հայոց լեզու, գրականութիւն եւ ֆրանսերէն դասաւանդելով: Շրջան մը ապրած է Պուլկարիա:

Միշտ զբաղած է գրականութեամբ եւ մամուլի հրատարակութեամբ: 1908ին, այսինքն Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, եկած է Պոլիս ու սկսած իր իր մտաւոր աշխատանքին: Այսպէս, սկսած է հրատարակել «Ազատամարտ»ը, որուն խմբագիրը մնաց մինչեւ իր եղերական մահը: 1910ին լոյս տեսած է իր «Յայգալոյս» ժողովածուն, որ իր վաստակին լաւագոյն եւ ինքնատիպ արտացոլումն հանդիսացած է? նոյն տարին լոյս ընծայած նաեւ «Մեղրագետ» դասագիրքերու վեց շարքերը:

Հապա՞ իր գործերը: Պէտք է ըսել, թէ Ռուբէն Զարդարեանի գրիչը հարազատօրէն կ'արտացոլացնէ հայ հողն ու անոր վրայ գործող ու ապրող հայ մարդը: Ան պատմականօրէն մեկնիչն է այս տեսակ հայուն, ոչ դասական, սովորական մեկնիչը, այլ՝ տեսակ մը մեկնիչ, որ ունի իւրայատուկ ոճ տեսնելու, պարզելու եւ իւրայատուկ կերպով ներկայացնելու: Մէկը, որ մասնակից դարձած է հայ հոգիի վերածաղկման ճամբուն:

Ան այս բոլորը գրեց հոգեկան ապրումով եւ խռովայոյզ տագնապներով: Գրեց հայ մարդուն հոգեկան եւ ֆիզիքական աշխարհը փոթորկող յոյզերն ու ապրումները, անոր հոգեբանութեան մէջ բնորոշուած, շեշտուած իր սեփական հողի սեփականութեան ուժի կապուածութեամբ:

Տառապանք, վիշտ, դառնութիւն եւ առաւել հայ բնաշխարհի, հայկական իրականութիւն, նահապետական կեանք. ահա ասոնցմով է, որ ան կերտեց իր կերպարները:

Խոր արմատներով կապուած մնաց հայրենի բարձր մակարդակին, մաքուր ու ճոխ ներդաշնակ, նոյնքան բծախնդիր եւ խստապահանջ:

Մինչեւ իր եղերական մահը, հոգեկան անսահման սիրով կապուած մնաց հայրենի իր հողին եւ հայ գիւղացիին:

Իր ներդրումը մեծ է այդ օրերուն նորավէպի արտակարգ ծաղկումին մէջ:

Ռուբէն Զարդարեան արեւմտահայ գրականութեան առաջնակարգ գրողներու շարքին կը պատկանի. ան մեր գրականութեան զարգացման մէջ որոշ շրջան հիմնեց եւ անոր տուաւ պատմական նշանակութիւն:

Իրեն համար գրականութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ ամէնէն հին ձեւերէն մէկը, որուն միջոցով ազգ մը երեւան կը բերէ այն ոգին, որ յատուկ է իրեն, եւ այն կեանքը, որ կը կրէ իր մէջ:

Իր բազմաշերտ եւ բեղուն գրական վաստակը անկասկածօրէն հարստացուց հայ գրականութեան եւ հայ մշակոյթի գանձարանը: Նաեւ հաստատապէս երազներ փայփայեց, իրապաշտ եւ հայրենասէր:

Ու բոլոր մեր գրական Զարթօնքի գրիչներուն նման, Ռուբէն Զարդարեանն ալ արժանի է ամէն յարգանքի, որովհետեւ ան իր գործերով մեզի բերաւ մեր հայրենի գաւառին շունչը:

Կարդացէ՛ք , իր նշանաւոր գրութիւններէն՝ «Զարնուած Որսորդը», «Գամբռը», «Լերան Եղնիկը», «Մենաւոր Ծառը» եւ տակաւին... եւ պիտի հաստատէ՛ք:

Հաւատացէ՛ք, երբ Զարդարեան կը կարդաք, ձեր աչքին առջեւ պիտի պատկերանայ ամբողջ ժողովուրդ մը, իր գիտակցութեամբ, իր շքեղութեամբ:

Մեծ Եղեռնին կորսնցուցիւք հայ գրականութեան հսկաներէն՝ այս մէկն ալ: Դժուար է կշռել տարողութիւնը կորուստին, նոյնպէս կարելի չէ չափել այս մարդուն նուիրումի եւ զոհաբերութեան զգացումը: Որովհետեւ բոլորին նման իր վազքն ալ ունէր, ցայտող խանդավառութիւն յոյսի, յիշատակի ու աղօթքի:

Արդե՞օ՞ք մենք ալ պիտի կարենանք հետեւիլ իր քայլերուն:

23/4/2024

Է՛Ն, ԱՐՓԻՆԷ, ԱՐՓԻՆԷ...



Եւ ինչու չէ, թող ամէն օր պատահին գեղեցիկ անակնկալներ...

Մագիստրոսի թեզս յանձնած էի արդէն եւ այդ յոգնութենէն, անքուն գիշերներէն եւ մասնաւորաբար խիստ պատասխանատուութենէն ետք կը վայելէի անհոգութեան թեթեւութիւնը:

Երեւանը նոր աչքով կը տեսնէի, միշտ վազեկվազ եղած էր կեանքս ուսանողական հինգ տարիներուս, համալսարան, դաս, թատրոն, օփերա, Գրողներու միութիւն, եւ այլն, Երեւանի ճոխ կեանքը...

Այդ օրն ալ մոռցած ամէն բան, ինչպէս կը սիրէինք ըսել «Ման էի գալիս Երեւանի փողոցներուն», բայց անհոգութիւնս ընդհատուեցաւ, երբ յիշեցի ժամադրութիւն մը, որ արդէն քանիերորդ անգամն էր, որ կը յետաձգէի:



Խուճապի մատնուեցայ, ալ ոչ մէկ պատճառաբանութիւն կրնայի ընել: Անցնող առաջին ինքնաշարժին նշան ըրի, որպէսզի կենայ:

Սպիտակ 24 մըն էր (Volga-24), այսինքն այդ տարիներու լաւագոյն ինքնաշարժը, որ չնայած արագ ընթանալուն ճիշդ դիմացս կեցաւ: Զարմացայ, որովհետեւ հարուստները պէտք չունէին «փափախ» ընելու...

Սակայն ի վերուստ որոշուած էր այդ հանդիպումը...

-Զէյթունի հանրակացարանները եթէ կարելի է:

-Ո՞ր տեղից ես աղջիկ ճան:

Օհո՛, հարցումներու տարափը սկսաւ...

-Երուսաղէմ...

-Երուսաղէ՞մ... Էհ, Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ...

-Կրնա՞յ ըլլալ Երուսաղէմէն ներգաղթած էք: Այնպիսի կարօտով արտասանեցիք:

-Ոչ, Եաֆայից...

-Եաֆա՞... մայ.....

-Արփինէ, Արփինէ, հրեշտակի էր նման, դեղին գանգուրները մինչեւ ուսերը իջած, կանաչ աչքերը... Հրեշտակ էր... Հրեշտակ...

-Մական...

-Է՛հ, Վարուժան, Վարուժան, մտերիմ ընկերս էր...

-Վարո՞ւժ...

-Առիթ չէի փախցնի տուներնին գնալու, ֆուտպոլից առաջ, ֆուտպոլից յետոյ, դպրոցից առաջ, դպրոցից յետոյ... Միայն մի վայրկեան Արփինէին ժպիտը տեսնէի, ամչկոտ ժպիտը, մեղմանուշ բարեւը լսէի կամ էլ երթաս բարովը...

-Ներեցէք...

-Իսկ հայրերնի՞ն, Արշակ աղբարը, մեր ընկերն էր, հիւրասէր, ազգասէր, հայրենասէր...

Ա՛խ, ա՛խ... Առաջին սերս էր Արփինէն, գոնէ արտայայտուէի հոս գալուց առաջ... Բայց Վարուժանը ընկերս էր, ինչպէս ասէի, որ քրոջը սիրահարուած եմ... Ի՛նչ էինք, 16-17 տարեկան տղաներ... Դեռ համարձակութիւն չունէինք: Մենք 48-ին եկանք, յաջորդ տարին իրենք պիտի գային... Չեկան... Որքա՛ն սպասեցի...

-Ներողութիւն պարոն, կրնա՞յ ըլլալ, որ Մարգիսեաններուն մասին կը խօսիք:

-Արփինէ, Արփինէ... Դպրոցը Ծնունդի հանդէս ներին, հայր Կորինը հրեշտակի դերը իրեն էր տալիս, երբ մեծացաւ՝ Մարիամի դերը սկսեց խաղալ: Մի անգամ մի աղջիկ նախանձից ասաց. «Չէի գիտեր, որ Մարիամը դեղին մազեր ունէր»: Այնպէս ծուռ նայեցի, չորացաւ: Հապա երբ արտասանէր, ձայնը դեռ ականջներիս մէջ է... «Եկեղեցին Հայկական»ը կարտասանէր, ինքզինքը պատարագի մէջ կը կարծէիր...

-Ներեցէք, դուք Եաֆայի Մարգիսեաններուն մասին կը խօսիք չէ՞:

-Այո՛...

Վերջապէս արթնցաւ:

-Արշակ աղբարը իմ մեծ հայրս է, Վարուժանը՝ մօրեղբայրս, իսկ ես Արփինէին աղջիկն եմ...

-Ի՛նչ, ի՛մ Արփինէիս...

Հիմա ալ մայրս իբր եղաւ:

Եւ Զէյթունի գառիվերին վրայ ինքնաշարժը կանգնեցուց առանց կարելորութիւն տալու հետեւող ինքնաշարժներուն շչակներուն, դուռս բացաւ, գրկեց զիս եւ...

-Արփինէին աղջի՛կն ես, Արփինէին աղջի՛կն ես, Աստուած իմ այս ի՛նչ հրաշք էր...

Ան ուրախութենէն շուարած էր, ես՝ անակնկալէն:

-Ետ ինքնաշարժ նստինք, հիմա ետեւի ինքնաշարժներուն վարորդները կռիւի պիտի գան:

Եւ ալ ո՛չ Զէյթուն, ո՛չ ուրիշ տեղ, ուղղիղ իրենց տուն:

Ժամադրութի՛ւնս... Նորէն մէջը փախաւ: Պիտի հաւատայի՞ն եթէ պատմէի:



Փառաւոր սեղան մը դրուեցաւ: Կանչեց զաւակները, որոնք տարիքով ինձմէ մեծ էին, ամուսնացած:

Յուշեր եւ կենացներ:

-Երկու ամիսէն ծնողքս վկայականիս պիտի գան, ըսի:

-Ի նչ սեղան պիտի դնեմ, ի նչ սեղան... Մայրդ ո՞ւմ հետ ամուսնացաւ:

-Հօրս, ըսի խնդալով, որ մարդուն անցեալէն ներկայ բերեմ: Հրանդ Նազգաշեանին, ուսուցիչ էր: Ծանօթ էր:

-Ուսուցիչ չը... Է՛հ, Հրանդը... Այո՛, ուսուցիչ էր, բայց նաեւ արուեստագէտ լուսանկարիչ, Թէքէեանին, Օշականին, Եղիվարդին, եւ դեռ շատ նշանաւոր մարդկանց նկարել էր:

Մեծ եւ անկեղծ հիւրասիրութիւն ըրաւ ծնողքիս: Ըստ հայկական գեղեցիկ սովորութեան երգով եւ արտասանութեամբ կենացներ ծաղկեցան: Խնդրեց, որ մայրս «Եկեղեցին Հայկական»ը արտասանէ:

-Այս անաստուած ռեժիմին տակ մենք եկեղեցական պսակ անգամ չենք եղած:

-Իսկ զաւակներդ մկրտուած են, հարցուց մայրս:

-Ոչ...

Յաջորդ հուրասիրութիւնը զաւակներուն ու թոռնիկին մկրտութեան առիթով եղաւ, իսկ ծնողքս եղան կնքահայր ու կնքամայր:

ԱՆՈՒՇ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Ապրիլ 20, 2024

Երուսաղէմ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Ազգային եւ հասարակական գործիչ, հրապարակախօս, Գահիրէի ՀԲԸՄ-ի պատուոյ ատենապետ (Գահիրէի ՀԲԸՄ-ի ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած 2007-ին): Նոյնպէս, ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովէն ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին պատուոյ ատենապետ նշանակուած Հոկտեմբեր 2014-ին: Նշելի է որ Պերճ Թէրզեան անդամ է սոյն ժողովին շուրջ 60 տարիներէ ի վեր:

Պերճ Թէրզեան ծնած է Գահիրէ, Նոյեմբեր 1938-ին: 1951-ին աւարտած է Գահիրէի Վիեննական Միխիթարեան նախակրթարանը, իսկ 1956-ին՝ Մարոնիթ Հայրերու երկրորդական վարժարանը: Ապա, 1957-ին պաշտօնի կոչուած է՝ իբրեւ դրամատան պաշտօնէայ: Դրամատան մէջ 10 տարի աշխատելէ յետոյ, 1966-ին հրաժարած է իր պաշտօնէն եւ մտած՝ տպագրական ասպարէզ: Աշխատանքի տարիներուն, 1963-ին Այն Շամս Համալսարանի Համագործակցական Եւ Վարչական Գիտութիւններու Հիմնարկը աւարտած է: 1964-1965 թուականներուն յաճախած է Գահիրէի Ամերիկեան Համալսարանը: 1969-ին հիմնած է African Press տպագրական հաստատութիւնը, որ 1996-ին վերածուած է բաժնետիրական ընկերութեան մը African Press S.A.E. անունով:

Պերճ Թէրզեան ունեցած է երկար հասարակական բազմաբնոյթ գործունէութիւն մը: Ան տարբեր տարիներուն մասնակցած է ՀԳՄ-ի, Հայ Ազգային Հիմնադրամի, ՀԲԸՄ-ի ՀՄԸՄ-Նուպարի վարչութիւններուն, ինչպէս նաեւ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի



Թեմական եւ Քաղաքական ժողովներուն եւ անոնցմէ բխած Ուսումնական Խորհուրդին եւ Նուպարեան Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան: 1977-էն սկսեալ աշխատակցած է «Արեւ» օրաթերթին: 1996-ին Գահիրէի ՀԲԸՄ Վարչութիւնը՝ իր ատենապետութեան շրջանին, 15 տարի դադարէ մը վերջ, սկսած է վերահրատարակել Միութեան «Տեղեկատու» եռամսեայ պաշտօնաթերթը, որուն մէջ ստանձնած է խմբագրի, ապա խմբագրական խորհրդատուի պաշտօնները: 1998-2009 տարիներուն եղած է Գահիրէի «Արեւ» օրաթերթի արաբերէն ամսօրեայ նոյնանուն յաւելումին հայկական նիւթերու խորհրդատու: Իսկ 2010-էն սկսեալ մինչեւ Մարտ 2016, դարձեալ հայկական նիւթերու խորհրդատու՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Արեգ» արաբերէն ամսօրեային:

Պերճ Թերզեան ստացած է «Մեսրոպ Մաշտոց» յուշամետալը 1999-ին, Հայ Եկեղեցւոյ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը 2010-ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան «Պատուոյ Անդամ» տիտղոսը 2011-ին, ՀՀ Նախագահին հրամանագրով «Մխիթար Գօշ» մետալը 2011-ին, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Մայրենիի Դեսպան» մետալը 2013-ին:

Ստորեւ ամփոփ կերպով կը ներկայացնենք Պերճ Թերզեանի հրատարակած գիրքերուն եւ գրքոյկներուն ցանկը, որուն մէջ նշուած են գրախօսուած եւ չգրախօսուած հրատարակութիւնները .

Այս գիրքերուն եւ գրքոյկներուն մեծ մասը տպագրութեան պատրաստուած է Դոկտ. Վաչէ Ղազարեանի սեփականութիւնը եղող «Մայրենի Հրատարակչական»-ի կողմէ: Վերոյիշեալ գիրքերու ցանկը քաղուած է հեղինակին վերջին հրատարակութենէն:

Ա. «Եգիպտահայ Հայեացքներ Պատմութեան, Քաղաքականութեան Եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» (արաբերէն), 2008, 308 էջ, ուր մէկ կողքի տակ կը ներկայացուին «Արեւ» արաբերէն ամսօրեայ յաւելումի Փետրուար 1998-էն մինչեւ Փետրուար 2008 հեղինակին կողմէ գրուած 40 առաջնորդողները:

Բ. «Յետադարձ Անդրադարձ - Յօդուածներու Ժողովածոյ», 2010, 300 էջ: Գիրքին յառաջաբանը գրած է Դոկտոր Փրօֆէսոր Աշոտ Մելքոնեան: Հեղինակին երկրորդ գիրքը, որ հայերէնով հրատարակուած իր առաջին ստուարածաւալ գիրքն է (առանց հաշուելու իր փոքրածաւալ գրքոյկերը), կ'ընդգրկէ «Արեւ» օրաթերթին մէջ 1977-էն մինչեւ 2008 շրջանին իր գրի առած յօդուածները, ելոյթները, հարցազրոյցները եւ մէկ ուսումնասիրութիւնը (չէ գրախօսուած):

Գ. «ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը - Ակնարկ 20-ամեայ Հեռաւորութենէ», 2012, 92 էջ: Գիրքին յառաջաբանը գրած է Եգիպտոսի մէջ ՀՀ դեսպան Արմէն Մելքոնեան, որ առարկայականօրէն կը նկարագրէ Գահիրէի հայկական գաղութի զուակներուն ու, մանաւանդ, Պերճ Թերզեանի թափած ջանքերը իրականացնելու համար դեսպանատան հիմնադրութիւնը: Պերճ Թերզեան գիրքին «Մուտք»ին մէջ ՀՀ-ի գոյառումը շատ կարեւոր դէպք կը նկատէ: Ան կ'ըսէ. «Հայաստանի անկախ պետականութեան գոյառումը նոր հրամայականներու եւ նոր մարտահրաւերներու առջեւ կը դնէր թէ՛ հայրենիքը եւ թէ՛ Սփիւռքը» (էջ 11):

Եգիպտոսի հայկական գաղութը դրամահաւաքի միջոցով կ'ապահովէ ՀՀ դեսպանատան նստավայր մը: Բացումը կը կատարուի 4 Յունուար 1993-ին: Ապա, ՀԲԸՄ-ի բարերարուհի Սաթենիկ Չազրրի նուիրած Ջամալէք թաղամասի ապարանքը կը դառնայ հայկական դեսպանատան նոր նստավայրը՝ 1996-ի Մայիսին: Այս պարագան այդքան ալ հեշտ չ'ըլլար, նկատի ունենալով անսպասելի դժուարութիւններ, որոնք պէտք էր յաղթահարել՝ «խուսափելու համար ապագայ որեւէ բնոյթի բարդութենէ եւ Չազրր Վիլլայի գործառնութեան աքտը լրացնէ օրինական բոլոր ապահովութիւնները» (էջ 51) (չէ գրախօսուած):



Դ. «Արեւի»ի Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը», 2014, 132 էջ: Յառաջաբանը գրուած է Դոկտ. Փրօֆ. Ալբերտ Խառատեանի կողմէ, որ կը յիշէ Գահիրէի գաղութին հայ պատասխանատուները ու, մանաւանդ, Պերճ Թէրզեանը եւ անոր ջանքերը «Արեւի»ի արաբերէն ամսօրեայ յաւելուածը հիմնելու մէջ: Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1998-ի Յունուարին: Իսկ 2009-ին լոյս կը տեսնէ «բռնաբարուած» թիւ մը, որմէ ետք կը դադրի: 2010-ի Ապրիլ ամիսէն սկսեալ, Գահիրէի ՀԲԸՄ-ի արաբալեզու «Արեգ» ամսօրեան լոյս կը տեսնէ: Այս եւ նախորդ յաւելուածին խմբագրութիւնը կատարած է հայկական հարցերով մասնագիտացած, եգիպտացի մտաւորական Մոհամմէտ Ռիֆաաթ Էլ Իմամը, որ մինչ այդ պաշտպանած է իր մագիստրոսական թէզը՝ «Հայերը Եգիպտոսի Մէջ 19-րդ Դարուն» խորագիրով, որ Գահիրէի ՀԲԸՄ-ը առանձին հատորով հրատարակած է 1995-ին:

Ե. «Պատասխան Առ Որ Անկ Է», 2014, 60 էջ: «Գրքոյկին լոյս ընծայումը կը նպատակադրէ հանրութիւնը լուսաբանել՝ պատասխանելով «Արեւի» 24 Յունիս 2014-ի թիւին մէջ, «Արեւի» Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը» գրքոյկին մասին տեղ գտած երկար յօդուածի մը, որ, դժբախտաբար, վիրաւորական բովանդակութիւն ունի» (էջ 7): Պերճ Թէրզեան այս պատասխանին մէջ կ'ընդգրկէ պատմաբան Գեորգ Եազրճեանի գրախօսականը՝ իր նախորդ գիրքերէն մէկուն, ինչպէս նաեւ «Արեւի»ի Ամսօրեայ Յաւելուածին մասին:

Զ. «Մրտցաւ Կոչ Հայոց Լեզուին Համար», 2015, 40 էջ: Հայրենի հեռատեսիլի կայաններու հաղորդումներուն մէջ գործածուող նկատելի աղաւաղուած հայերէնը, որ սրտնեղութիւն կը պատճառէ: Այս սխալը կը բխի ռուսերէնի եւ անգլերէնի գործածութենէ եւ անոնց բառացի թարգմանութենէն, հետեւաբար հայերէնը հայրենիքի մէջ կը դառնայ վտարանդի:

Պերճ Թէրզեան, քննադատական ու շինիչ յօդուածներով դիմած է ատենի ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, պաշտօնապէս դարմանելու համար հայերէն լեզուն անտեսելու վերքը: Իբր եզրակացութիւն, Պերճ Թէրզեան կ'ըսէ. «Մաղթենք որ գոյութիւն ունեցող օրինական խոչընդոտները շուտով հարթուին եւ հայոց լեզուի ոլորտէն ներս ստեղծուին անհրաժեշտ բոլոր կառոյցները, որոնք ունենան իրենց առաքելութիւնը իրագործելու համար հարկ եղած ամենալայն իրաւասութիւնները» (էջ 13):

Է. «Գահիրէի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը», 2017, 52 էջ: Կարելոր իրադարձութիւն մըն է Արեւելքի մեծագոյն եւ ամենէն հեղինակաւոր գիտական հաստատութիւններէն մէկուն՝ Գահիրէի Համալսարանին մէջ Հայագիտական Ուսումնասիրութեան Կեդրոնի բացումը: ՀՀ-ի Եգիպտոսի մէջ առաջին դէսպան Դոկտ. Եդուարդ Նալպանտեան այս ուղղութեամբ հետապնդումներ կատարած է եւ 1999-ի Մարտ ամսուն մէջ Գահիրէի Համալսարանի տնօրէնութենէն խոստում ստացած է Հայագիտական Կեդրոնը հաստատելու: Անոր առաջարկով Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը հիմնուելիք կեդրոնին համար 50 հազար եգիպտական թղթոսկիի յատկացում կը տրամադրէ: Կեդրոնը կը բացուի եւ 2009-ի Սեպտեմբերին կը սկսի իր գործունէութեան: Այս կեդրոնին մէջ տեղի կ'ունենան զանազան գիտաժողովներ, որոնցմէ մէկն է՝ 2017-ի Ապրիլ 29-ին տեղի ունեցած «Արաբական Հայրենիքը – Հայաստանը – Անցեալը Եւ Ներկան, Հայ-արաբական Յարաբերութիւնները» նիւթին շուրջ:

Ը. «Հայաստան-Սփիւռք Համահայկական Ա. Համաժողով: Մտորումներ Քսանամեայ Հեռաւորութենէ», 2019, 100 էջ: Հայաստան-Սփիւռք Համահայկական Ա. Համաժողովը գումարուեցաւ Երեւանի Մարզահամերգային Համալիրին մէջ 22 եւ 23 Սեպտեմբեր 1999-ին: Եգիպտոսէն մասնակցեցաւ եօթը հոգիւնց պատուիրակութիւն մը, որուն մէջ էր Պերճ Թէրզեանը: Մինչեւ 2018-ը ընդամէնը վեց համահայկական համաժողովներ տեղի ունեցած են՝ 27 տարիներու ընթացքին, որ ՀՀ-ի առաջին դժուար տարիներու ծիրին մէջ կ'իյնայ (1991-2018): Համաժողովին մասին Պերճ Թէրզեան այսպէս կը խորհրդածէ. «Հաշուի առնելով այդ 27 տարիներու ընթացքին կառավարութեան գլուխը գտնուող տարրերուն հակաօրինական գործունէութիւնները եւ, մանաւանդ, նկատի առնելով թէ ժողովուրդը այլեւս երբեք պիտի



չթոյլատրել նման վարչակազմի մը վերադարձը, հաւանաբար այդ ժամանակաշրջանի պատմութիւնը կոչուի «Սակաւապետներու (Օլիկարքներու) շրջան» եւ առանձնացուի ու մեկուսացուի, որպէսզի չմիախառնուի պատմութեան յառաջիկայ հանգրուաններուն» (էջ 13) (չէ գրախօսուած):

Թ. «Գրախօսականներ Եւ Անդրադարձներ Պերճ Թերզեանի Գիրքերուն Մասին Եւ Իր Հետ Եղած Հարցազրոյցներ», 2024, 278 էջ: Հեղինակին հրատարակութիւններուն վերաբերեալ գրախօսականներու եւ անդրադարձներու համահաւաք մըն է այս գիրքը, որ կ'ընդգրկէ նաեւ իր հետ հարցազրոյցներ՝ էջ 221-276: Ընդհանուր առմամբ Պերճ Թերզեանի գործունէութեան կարեւոր մէկ երեսը ամփոփող հատոր մըն է այս մէկը:

Ժ.- «ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՈՐ ԱՆԿ Է», 2014, 60 էջ:

ԺԱ.- «Սրտցաւ Կոչ Հայոց Լեզուին Համար», 2015, 40 էջ:

ԺԲ.- «Տիգրան Պապիկեան (Համադրում)», 2016, 64 էջ (չէ գրախօսուած):

ԺԳ.- «Գահիրէի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը», 2017, 52 էջ:

ԺԴ.- «ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Ա. ՀԱՄԱԺՈՂՈՎ: Մտորումներ Քսանամեայ Հեռաւորութենէ», 2019, 100 էջ:

ԺԵ.- «ՀՐԱՉ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԲԸՄԻ Եւ ՀԵԸԻ Վաստակաւոր Անդամ», 2022, 24 էջ (չէ գրախօսուած):


ԺԶ.- «ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԵՒ ԻՐ ՀԵՏ ԵՂԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ», 2024, 278 էջ:

Համառօտ կերպով ներկայացնելով ազգային հասարակական գործիչ Պերճ Թերզեանի վաւերագրական հրատարակութիւններուն ցանկն ու անոնց մէկ մասին ամփոփագրերը, հնարաւորինս փորձեցինք անոնց միջոցով ներկայացնել այս նուիրեալ հայորդիին ազգասիրական գործունէութիւնը, յարգանքի նուագագոյն տուրք մը տալով արժանատրին:

ՊԱՅՔԱՐՅ71

ԼՌՈՒԹԵԱՆ ՊՈՌՉՏՈՒՔԸ

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ



«Չարերը միայն երգ չունին», ըսած էին մեր մեծերը ու այսպէս մեզի սորվեցուցած՝ մանկական, աշակերտական, սիրային ու մանաւանդ ազգային բազմաթիւ երգեր, մեր մանուկ հասակէն սկսեալ: Ու մենք հլու-հնազանդ այդ բոլորը սորվեցանք եւ երգեցինք ամէն առիթներով, մեր տուներէն, դպրոցներէն, ակումբներէն ներս եւ հրապարակային ձեռնակներուն:

Յետոյ, մեր հասունութեան տարիներուն, լաւապէս հասկցանք, որ ժողովուրդի մը երգը, անոր հոգիին հայելին է: Նաեւ գիտցանք՝ ժողովուրդ մը իր երգն է, ինչպէս իր գրականութիւնը: Երգը իր մշակոյթն ալ է: Իր հոգեկան հարստութիւնը: Սորվեցանք, որ երգը նաեւ կազմուածքն է մարդու հոգին, կը մաքրէ սիրտը թէ՛ երգողին եւ թէ՛ լսողին, հաւասարապէս: Ու ինչ որ տգեղ է եւ անճոռնի, չի դիմանար երգի կախարդանքին: Կարդացինք, որ մեր դարաւոր պատմութեան հրաշալի անցեալի մէջ, դարեր առաջ, գոթթան երգիչներ, դիւցազնական երգեր հնչեցուցած էին եւ ծնունդ տուած մեր իւրայատուկ մշակոյթին:



Ու ինչ մեղքս պահեմ, տակաւին մտքիս մէջ թարմ է, թէ երգը, որ կը հոսէր մեր մանուկ կամ հասուն շրթներէն, երբեմն կը նմանէր հեզասահ առուակի մը կարկաչին, յաճախ ալ ըմբոստ ու տիրական, նաեւ՝ զուարթ եւ երջանիկ, տխուր ու թախծոտ, եւ այսպէս հարազատօրէն կը զծէր եւ կ'արտացոլէր մեր հոգեկան պատկերները:

«Ծափիկ...ծափիկ ծիրանի»էն ետք, տարիներով երգեցինք նաեւ «Մարերդ ծաղկել...»ն ու «Գարուն Երեւան...»ը: Մեր հանդէսներուն, ընտանեկան կամ ակումբներէ ներս իրախճանք-հաւաքներուն եւ դաշտային պտոյտ-առիթներուն «Ձայն մը հնչեց»ին, «Մեր հայրենիք»ին կողքին, բարձրաձայն նաեւ երգեցինք «Ես իմ անուշ Հայաստանի»ն եւ «Հիմի էլ լռենք»ը: Չմոռցանք «Ծփում է Սեւան»ն ու «Ծաղիկներ, ծաղիկներ»ը եւ մեր հպարտանքն ու սէրը հանդէպ մեր լեզուին, մեր հերոսներուն, մեր հայրենիքին եւ ազգին այս բոլորով բացայայտեցինք, վարակիչ եւ խանդավառ սփիւռքեան մեր ցուրտ մթնոլորտը, մեր միտքն ու հոգին ջերմացուցինք, մեր երագներու վերակենդանացման սիրոյն: Տարիներ ետք, մեր զուակներուն եւ նոյնիսկ թոռներուն սորվեցուցինք եւ իրենց հետ միասին սկսանք երգել «Կիլիկիա»ն, «Մասուն»ն ու «Կիկո»ն, «Մեր հայրենիք» եւ վերջապէս... «Գետաշէն»ը եւ այլն: Իսկ հիմա: Ի՞նչ կը նշանակէ այս: Ո՞վ կրնայ հրաժարիլ իր հերոսներէն, մանաւանդ անոնց կեանքին ու սխրագործութիւններուն նուիրուած երգերէն:

Միրոս, բառերուն մէջ եւ անոնց հետ սկսած է տրոփել, միաժամանակ բանալով մտածումի նոր ակօսներ: Դարձեալ հայու հոգիս դժուար պայքարի մէջ է: Կը վախնամ բառերէս, վշտահար անցորդի նման: Բայց... կը շարունակեմ մտածել:

Տխրութիւն կայ ամէն բանի մէջ, մեր կեանքին, մեր երգերուն, մեր օրերուն, մեր ներշնչած օդին մէջ իսկ: Որովհետեւ, մեր ներկան ծածկած է մեր անցեալը:

-Մեր կեանքի մէջ վերջակէտ չկայ,- կը կրկնեմ,- ինչպէս նաեւ մեր յուզումներուն:

Ճիշդ է:

Ամէն օր հայրենիքէն կը լսենք նոր լուրեր, որոնք յաճախ կու գան սրբելու մեր կեանքին ու պատմութեան բոցավառ գիրերը:

Ի՞նչ կը նշանակէ այս,- միշտ կը հարցնեմ բոլորին,- երբ սփիւռքեան մեր կեանքէն ներս պարզութիւնն ու անմեղութիւնը կորսուած են: Ճիշդ է որ մեզ խաբեցին: Ո՞վ չխաբեց որ: Ճիշդ է որ մենք պատերազմը կորսնցուցինք: Բայց...: Սկսած ենք կոտորելէն ետք՝ գնահատել... կորսնցնելէ ետք՝ սիրել: Յետոյ...

Բազմախառ տառապանք: Մեր երազը սկսած է խաւարիլ: Չենք տեսներ, որ մեր յոյսի աստղը ա՛յլ տեսանելի չէ, որովհետեւ մեր երկինքը միշտ ամպոտած է:

Ու ես ինձի յաճախ հարց կու տամ, թէ ե՞րբ պիտի ցամքին մեր ժողովուրդի տառապանքի աղբիւրները: Ե՞րբ դարձեալ, պիտի երգուին մեր ազգին երգերը, աւելի խանդավառ եւ բարձրաձայն: Կապրինք բեւեռներու մէջ ճգնուած: Անոր համար շատ յաճախ լեզուիս ծայրէն անէծք մը կը թռի՝ ինքնաձիւն: Օրուան մտահոգութիւնները կը գողնան մեր ուրախութիւնը: Մեր աղօթքներն ու «Տէր ողորմեա»ները դարձած են անհասանելի: (...) Երէկ, «Գետաշէն» կերգէինք, ան դարձեալ այսօր բացակայ է: Շատոնց չկայ: Տակաւին կ'երգենք ու անպայման պիտի երգենք «Արցախ»ը, ճոխացնելու համար մեր վաղուան յոյսը: Տակաւին՝ Արցախի կորուստին կողքին սերունդի մը կորուստն ալ կայ: Բայց, այս բոլոր երգերը ի՞նչ սրտով երգել, երբ հայրենի կեանքը մխիթարական բան մը իսկ չունի: Անկայուն հոգեկան վիճակ:

Ըսէ՛ք, ինչպէ՞ս վերաշինել հայու մեր կեանքը: Ինչպէ՞ս: Կարծես ազգովին յուսահատած ենք: Անդրադառնալ է պէտք: Արդ՝ ինչպէ՞ս իրագործել մեր պատմական այս ճակատագիրը, երբ հայրենի դէպքերը ամէն օր կը մրճահարեն մեր միտքերն ու հոգիները: Այնքան զարմանալի որքան իրական, բոլորս ալ զինաթափ կեցած ենք կեանքի անակնկալներուն առջեւ:



Արդ, գիտակցի՛նք, որ ազգին գլխաւոր ձգտումներով մտահոգ ղեկավարութիւն է պէ՛տք, որ պէտք է որոնելով մեր ինքնութիւնը, մեզ բոլորով եւ միատեղ, մասնակից դարձնէ 21-րդ դարու մեր հայ կեանքի առողջ պայքարին:

Ճիշդ է... լռելը ելք չէ: Է՛հ, լաւ գիտցէ՛ք... ոչ ո՛ք կրնայ լռեցնել ցեղին ձայնը: Մենք մեզի վերադառնանք՝ հայ մարդու նոր թափով եւ նոր խորք տալով մեր կեանքին: Նոր թարմութիւն, վերագտնելով ապրելու ազգային հպարտութիւնը:

Պարզ զգացումներով հայրենիք եւ պետութիւն չի ստեղծուիր: Նոր շրջան մըն է, որ ազգովին կ'ապրինք: Հինը փուլ կու գայ մեր աչքին առջեւ: Աշխարհին ցոյց տալ է պէտք մեր փայլուն ներկան: Անոր համար կենսական է կերտել եւ ունենալ կայուն պետութիւն, որ տէրը ըլլայ ազգային մեր բոլոր իրաւունքներուն: Լաւ գիտցէ՛ք, պատմութիւնը իր ուղիէն շեղողները կը պատժէ:

Լուրջ վախի ստուեր մըն է այս մէկը, որուն համար լռելը կը դառնայ անհնարին: Միեւնոյն ատեն մեր ինքնութեան հաւատարիմ մնալու կանչն ալ է. մեզ ամբողջ ազգով ինքնագիտակցութեան հրաւիրող եւ բերող: Ուստի կը սպասենք որ հայ ժողովուրդը ինքզինք գտնէ, եւ ըսէ իր խօսքը ու կատարէ իր ուխտը:

Եթէ կամքը կայ, ի գուր չեն տանելիք ջանքերը:

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Երեքշաբթի, Ապրիլ 30, 2024



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ սահման չի ճանչնար... Արդարութիւն պիտի պահանջենք բոլորէն, նաեւ ու մանաւանդ՝ ՄԵՆՔ ՄԵԶՄԷ, քանզի այնքա՛ն ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կան հայ կեանքէն ներս, որ ապշահար կը մնամ յաճախ, չեմ կրնար նոյնիսկ հաւատալ: Երբեմն սիրտս այնքա՛ն կը ցաւի, որ պահ մը կ'ուզեմ ամէն ինչէ հրաժարիլ, բայց կրնա՛մ սեփական արիւնէն հրաժարիլ...

.....

Բերք ու բարիք սերմանողը անպայմանօրէն կը վարձատրուի, երբեմն նոյնիսկ հազարապատիկ, անով իմաստաւորուած տեսնելով իր գնայուն կեանքը, անով բաւարարուած զգալով ներքնապէս:

Բերքն ու բարիքը անպայմանօրէն կու տան իրենց պտուղները, որոնց ի տես՝ սերմնացանը կը զգայ, որ ի գուր չէ անցած իր կեանքի ժամանակը, որ ամէնէն թանկագին բանն է որ ունինք եւ գոր յաճախ կը վատնենք «պարապ վախտի խաղալիք»ներու վրայ, որոնք կը մնան ապարդիւն, անպտուղ, սրտի կսկիծ ալ պատճառելով՝ գիտակից թէ անգիտակից:



Մա չէ՞ էապէս մարդ արարածի կեանքի բուն առաքելութիւնը, իւրաքանչիւրս մեր չափով, մեր կարելիութեամբ՝ սերմանել բարին եւ աւելցնել, շատցնել զայն:

.....

Եթէ միտքդ ու հոգիդ ԱՆԿԱԽ չեն, կրնա՞ս ըսել որ անկախ ես: Եթէ միտքդ կաշկանդուած է կարծրատիպերու եւ շրջապատի ուղեղալուացումներու ճնշման տակ, եթէ անկախ մտածողութիւնդ բռնութեան տակն է սպառողական ընկերութեան քարոզած ու գովազդող «արժէք»ներու կեղծիքին, եթէ կշռադատ բանականութիւնդ ի գործ չես դներ, տարանջատելու սուտն ու ճշմարիտը, եթէ իմաստութիւնն ու քաջութիւնը չունիս ԸԼԼԱԼՈՒ ԴՈՒՆ ՔԵԶ, անկախ այլոց կարծիքէն, յայնժամ ինչպէ՞ս կրնաս ԱՆԿԱԽ ԸԼԼԱԼ: ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ քիչերուն է տրուած, այն սակաւ ընտրեալներուն, որոնք գիտեն ԸԼԼԱԼ, հաւատարիմ ու հարազատ իրենց սեփական ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈԳԻՒ ԿԱՆՉԻՆ:

.....

Սեփական ճշմարտութիւնը բացարձակացնելը կը նշանակէ սեփական անսխալականութիւնը հաստատել: Իսկ կա՞յ մարդ, որ անսխալական ըլլայ...: Մա չէ՞ գլխաւո պատճառը խոնարհ ըլլալու, չմեծամտելու հրամայականին...: Խոնարհ ըլլալ էապէս կը նշանակէ բաց միտքով եւ բաց սիրտով մօտենալ մարդոց, չգոռոզանալ, չբքանալ...: Գոռոզամտութիւնը կը փակէ միտքի եւ սիրտի դռները, կը սահմանափակէ մարդը, անոր սիրելու եւ սորվելու կարողութիւնը: Գոռոզամտութիւնը ինքնակողմացում է:

.....

Ոչ շատ ժամանակ առաջ, ի պատուի էին այն անձինք որոնք ստեղծագործող էին, գիր-գրականութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, քանդակ, արուեստի գործեր կը յօրինէին, կամ որեւէ օգտակար գործ կ'ընէին, հող կը մշակէին, բերք ու բարիք կը ստեղծէին, շինարար ու բանուոր էին, արհեստագործ կամ մշակ էին...Ներկայիս, գերազանցօրէն ի պատուի են անոնք որոնք նիւթական միջոցներ ունին եւ սպառող են, կրնան ամենէն սուղ ապրանքները գնել, ամենէն ճոխ ճաշարաններն ու վայելքի տուները յաճախել, եւ յոխորտալ իրենց ունեցուածքով...Որքա՛ն շրջուած է ԱՐԺԷՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ինչ որ կը պայմանաւորէ ժողովուրդի մը բարոյական որակը, գիտակցութեան մակարդակը, ապրելակերպը, աշխարհայեացքը: Ո՛Վ ԴԱՐՔ, Ո՛Վ ԲԱՐՔ:

.....

ԵՐԿՐԱՅԻՆԷՆ ԴԷՊԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԹՌԻՉՔԸ մարդ անհատին համար միշտ եղեր է անհաս երազ՝ սկզբնական ժամանակներէն մինչեւ այսօր...Այսպէս է որ ստեղծուեր են արուեստները, կրօնները, փիլիսոփայութիւնը, որոնք գոյնի, գիծի, բառերու, հնչիւններու, աղօթքի, գաղափարներու լեզուով կը միտին մարդը վեր բարձրացնելու իր գետնաքարշ գոյութենէն դէպի գեղեցիկն ու վսեմը, դէպի Բարձրեալը, դէպի ճշմարիտը, երկրային իր սահմանափակ գոյութենէն կամուրջ մը նետելով դէպի երկնայինը... դէպի իր գոյութեան ոգեկան ոլորտները:



.....

ՀԱՅՈՒՆ ՎԵՐԱՊՐՈՒՄԸ լոյսին յաւերժացումն է մութին ու խաւարին դիմաց: Բարիին յաղթանակն է չարին եւ չարեաց ուժերուն դէմ: Հոգիի որակի անջինջ յարատեւումն է դարե- դար: Ոգիի անկոտրում թռիչքն է լուսեղէն: Կեանքի յաւերժական երթն է վսեմ, գոր կարելի չէ խափանել որեւէ մէկ ուժով մարդկային...

.....

Մի բուռ ժողովուրդ ենք մնացել՝ դարաւոր տառապանքներէ, չարչարանքներէ, ցեղասպանութենէ վերապրած: Սակայն դեռ որքա՛ն կոտորակուած, մասնատուած ենք, դեռ որքա՛ն ներքին զգուրտոցներով ենք զբաղած, դեռ որքա՛ն անհասկցող, անհանդուրժող ենք իրար նկատմամբ եւ այսպէս կը շարունակենք մեր ճամբան, առանց խրատուելու մեր դաժան պատմութենէն, առանց էապէս իրարու հետ լեզու գտնելու: Ամէն մէկս՝ իր կեղեւին մէջ պարփակուած, ամէն մէկս իր ԵՄ-ին սպասարկու...Եւ դեռ կան մեր անբուժելի քէներն ու ոխերը, մեր անհաշտ պայքարները յանուն սին աթոռի կամ աթոռակներու, յանուն սեփական գրպանի, դիրքի, փառքի... Ի՞նչ ունինք արդեօք, գոր չենք կրնար բաժնուիլ...:

.....

ԶԿԱՂԱՊԱՐՈՒԻԼ որեւէ վարդապետութեան, կուսակցութեան թէ այլ խմբակցութեան նեղ սահմաններուն մէջ, չբանտարկուիլ միտքով եւ հոգիով...Ազատ մտքի ազատ թռիչքը՝ թող ըլլայ անկաշկանդ եւ միշտ ու միշտ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ենթարկել որեւէ հաւատամք, որեւէ դատողութիւն, որպէսզի վերջինները չվերածուին ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՈՒ, եւ բռնադատեն միտքը՝ իրենց արտաժամանակային եւ արտատարածական վերացապաշտութեամբ:

.....

Աւանդականէն դուրս, նորարարական մտքի անհրաժեշտութիւնը կայ հայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս...

Աւանդական մտածելակերպը դարձեր է հնամաշ կաղապար մը, որմէ դուրս ելլելը մտածողութեան թռիչք կ'ենթադրէ, նորոգ մտածելու յանդգնութիւն եւ ազատութիւն կ'ենթադրէ, նոր միտքեր յղանալու նախաձեռնութիւն եւ աշխատանք կ'ենթադրէ, ինչ որ հրամայական պահանջ դարձած է հայ կեանքի կրթական-մշակութային, տնտեսական-քաղաքական, ընկերային, կազմակերպչական եւ աճանցեալ բոլոր մարզերէն ներս...

Այլապէս աւանդական հասկացութեանց տակ ծուարիլը լճանալ եւ ճահճանալ է լաւագոյն պարագային, ծերանալ է, բառիս ամբողջական իմաստով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ծաղկե ծաղիկ, նեկտարի պէս, հիւթեղ բառեր եմ հաւաքեր
Հայ դպրութեան ոսկի հանդէ՛ն, արեւայորդ պարտէզներէ՛ն,
Որ տող հիւսեմ մեղրի նման, ընթերցողիս զայն մատուցեմ,
Երջանկանամ լոկ տեսնելով մեղրին համը ճաշակողներ...

.....

Ու երբ երգս դառնայ միայն
Ձայն բարբառոյ յանապատի,
Կը կոտրեմ գրիչս, կը հեռանամ,
Գուցէ յայնժամ որոնեն զիս...

.....

Լռութեան մէջ հոգիս անձայն
Հազար խոկում ունի անբառ,
Այնքան խորունկ որ բառն տկար
Արտաբերել զայն չի կրնար...

.....

Միրտը կը տեսնէ անիմանալին,
Միրտը խորզգայ անտեսանելին,
Միրտը աղբիւր է լոյս ճշմարիտին,
Միրտը սափոր է բարութեան լոյսին...

.....

Կեանքիդ ամէն մէկ պահիկը
Պարգեւ մըն է քեզ ընծայուած,



Գուցէ ըլլայ ան երագ մը,
Որմէ յանկարծ դուն արթննաս...

.....

Նեղ պարունակիս մէջ իմ հողեղէն,
Այսքան խոհ-յոյզեր կ'ալեկոծին յար,
Ովկիանոսի մը բիւր ալեաց նման,
Մերթ տեղատու են, մերթ ալ մակընթաց...

.....

Համակ կեանք մը՝ անեղծ սիրտով,
Անեղծ հոգւով ես ման եկայ
Եւ ճշմարիտ անկեղծ խօսքով
Խաչ բարձրացայ ես շատ անգամ...

.....

Թէ սիրտդ, հոգիդ չբռնկին
Ներքին այրումով մը տենդավառ,
Չես կրնար դուն ճըրագ դառնալ,
Երկնէլ տողեր արեւածին...

.....

Ապրած պահես ալ աւելի չապրած պահս ես ապրեցայ,
Միտքս, սիրտս թելեր առաւ, չապրած պահս ի կեանք բերաւ,
Գունաւորուած բորբ երագով՝ չապրած պահս ստեղծեցի
Եւ կրկնակի կեանքով հարուստ, հոգիս շատցաւ բազմապատիկ...

.....

Ճշմարտութեան պահը կու գայ,
Ժամանակի խնդիր է սա,
Չերթ արելը որ կը ծագի
Մութ գիշերէն ետք սուկայի:

.....

Բայց ամենէն շատ խորշեցայ միտքերէն կոյր ու քար կապած,
Որոնց դռներն ամուր փակուած պայծառ լոյսին դէմ յանդիման,
Կ'ապրէին յար մթութեան մէջ, գերթ քարայրին մէջ մզլոտած,
Չի լոյսն յանկարծ ի յայտ բերէր մերկութիւնը իրենց մտաց:

.....

Բիւր բիւր սիրտեր երբ կը միանան
Շաղախով մը գերեկրային,
Կրնան անյաղթ պատուար ըլլալ
Չարին դիմաց գեհեճային:

.....



Ձեր քու խօսքով ինձ չմօտենա՛ք,
Ձեր աչքն մաքրեցէ՛ք ժանգ ու փոշիէն
Նախքան որ նայիք շողին արփաւէտ,
Կարենաք տեսնել յստակ ու պայծառ...

.....

Մահու եւ կենաց դժուար պահերուն,
Դուն կը բռունցքուիս, իմ հայ ժողովուրդ,
Եւ այդ է կենաց խորհուրդդ խորին,
Քու յաւերժութեան ոսկեայ բանային:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ